# ԷՋՄԻԱԾԻՆ



1956-3.

ՌՆԵ

ԺԳ. ՏԱՐԻ

Մարտ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

III

1956

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԷՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Մի՛ և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, մի՛ և անբաժան՝ Հայոց Հայրապետությունը . . . . . . 3

ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊՍ. ԱՎԵՏԻՍՅԱՆ— Մեծ օրանց խոսքեր . . . . . 6

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ԱՆԹԱՐՅԱՆ— Մեծ օրանց մտածմունքներ . . . 8

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ . . . . . . . . . . 10

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ— Տարեթվերի և ամսաթվերի գործածությունը հայ մատենագրության մեջ . . . . . 13

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ— Շխմուրադի վանքը . . . . . . . 20

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ— Առաջավոր Ղազարի անդրադարձության խնդրի շուրջը 29

Լ. ԴՈՒՐՆՈՎՈ— Երեմիա մանրանկարչի արվեստի հիմնական գծեր 36

ՇԱՀԱՆ ՍԻՄՈՆ— Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի . . 46

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ— Ազգային մեծ բանաստեղծ Ռափայել Պատկանյանը 48

Ժ. ՓԱՓԱԶՅԱՆ— Հ ա յ ր ե ն ի ք ի ս . . . . . . . 55

Մ. ԷՍԿԻՃՅԱՆ— Հ ա յ ր ե ն ի ե ր կ ի ր . . . . . . 56

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ . . . . . . . . . 57

Վ. Վ.— «Նշանավոր մարդկանց կյանքը»։— «Ազգանագիրք»։— Առաջին «Երկերի ժողովածու», հատոր 1-ին։— Դ. Դեմիրճյան, «Երկերի ժողովածու», հատոր 1-ին։— Աշոտ Հովհաննիսյան, «Երկիր պատմականական լույսի տակ»։— Արիստոտել, «Պոետիկա»։— Մկրտիչ Խերանյան, «Պոեմներ»։— Վ. Նայրանցյան, «Վարդանանց պատերազմը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը»»։— Անահիտ Սահինյան, «Մարալ»։— Ուսումնարան Տաղերի «Պարտիզպաներ» նայերեն։ . . . . . . . . . 60



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1956 թ.

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ՄԻ Է ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ. ՄԻ ԵՎ ԱՆԲԱԺԱՆ՝ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի նախորդ համարում հրատարակվեց Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ անդրանիկ կոնդակը. «Քրիստոնեական սիրո ողջույնի և հայրապետական օրհնության» ուղղված Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եպիսկոպոսական մյուս Աթոռներին, հոգևորականության, բեմական երեսփոխանական ժողովներին, թաղական խորհուրդներին և «համայն հավատացյալ ժողովրդյան Հայոց»:

1955 թվի դեկտեմբերի 1-ին գրված հայրապետական սրբատառ կոնդակի առաջին տողերից ազգընտիր Վեհափառ Հայրապետը արտակարգ ուրախությամբ ավետում է բովանդակ հայ ժողովրդին, որ «Վերացավ սգո Քողը Ս. Լուսավորչի Գահի վրայեն և Հայաստանյայց Ս. Եկեղեցին «ուրախությամբ ուրախ եղև», զի տարվույս սեպտեմբերի 30-ին, Ս. Էջմիածնա Մայր Տաճարի լույս կամարներու տակ ընտրվեցավ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ երկու օր հետո, հոկտեմբերի 2-ին, ստացավ հայրապետական սուրբ օծում, ըստ կանոնաց և ավանդության Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվույն»:

Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությունն ու օծումը, Ս. Էջմիածնի անվան ու պատմության հետ կապված ամեն մի իրադարձություն միշտ էլ հանդիսացել է մեր ազգային-եկեղեցական կյանքում համազգային պատմական նշանակություն ունեցող իրադարձություն:

Այդպես եղավ նաև Ամենայն Հայոց նորընտիր Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ի ընտրությունն ու օծումը:

Եվ դա պատահականություն չէր երբեք, որովհետև «դավանությամբն Առաքելոց և կամոքն Ազգիս» ընտրված Ամենայն Հայոց Հայրապետը համարվում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Գերագույն Պետ, «Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագույն Պատրիարք համազգային նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի», «աստուածարեալ Քահանայապետ, որ աստուածատուր գաղափար օծութեամբ ինքնիշխան գլուխ եկեղեցւոյ եւ կարգեալ»:

Ինչպես մեր լուսապսակ, առաքելաշավիղ և հայրենասեր հայրապետները, նրանց արժանավոր հաջորդ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսն ևս Մայր Տաճարի Ս. Սեղանի առաջ ծնրադիր, հայրապետական իր հավատարմության երդումը տվեց հայ հավատացյալ ժողովրդին, Հայ Եկեղեցուն, Լուսավորչի հավերժական Գահին՝ ցմահ հավատարիմ մնալ Հայ Եկեղեցուն, անխախտ պահպանել մեր ազգային-եկեղեցական կանոնները, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ուղղափառությունն ու ավանդությունները, անձնվիրությամբ ծառայել հայ ժողովրդին և նրա Հայրենիքին՝ բարձր պահած ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՐԲԱԶԱՆ ԴՐՈՇԸ:

«Մեր ուժը, մեր փրկությունը մեր միության մեջ է: Այս վեմին վրա կանգնած ենք մենք և պիտի չշարժինք: Եվ պիտի հաջո-

պետք Մեր եկեղեցականներ և հայրենասերներ գործեն մեջ, «զի Աստուած ընդ մեզ է»:

Այսօր, ավելի քան երբեք, մեր Եկեղեցին, մեր հավատացյալ ժողովուրդը ուղղակի ենթակայությամբ և ակնածանքով պետք է լսեն Վեհափառ Հայրապետի հայրական սիրո զգացմունքներով գեղուն քնքշագին կոչը, որպեսզի ամեն տեղ ու ամեն պարագայի մեջ բարձր պահվի մեր Եկեղեցու և մեր ժողովրդի միասնականության նվիրական դրոշակը:

«Պահենք սրբուն, պահենք ամբողջ, բոլոր ուժի և զորենք մեր Ս. Եկեղեցին՝ մեր լույս հավատքի վեմը, մեր հոգիներու փրկության խարիսխը, մեր հոգու ամրոցը, մեր Ազգի մայր դաստիարակը, ՄԵՐ ՍԻՐՈ ԽՈՐՀՐԴԱՆԻ-ՇԸ՝ ԱՆԱՂԱՐՏ, ԱՆԲԻԾ ՈՒ ԱՆԽԱԽՏ», — գրում է Վեհափառը իր անդրանիկ կոնդակում (ընդգծումը խմբագրությանն է):

Այսօր Մայր Աթոռի և Վեհափառ Հայրապետի համար չկան և չեն կարող լինել այլ շահեր, քան Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գերագույն շահերը, քան մեր ազգային-եկեղեցական շահերը:

ՄԻ Է ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱՅՆ ԳԼԽԱՎՈՐՈՒՄ Է Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ: Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետությունը, մեր նվիրապետական մյուս Աթոռները և մեր բոլոր ազգային-եկեղեցական բեմերը կազմում են մի օրգանական ամբողջություն միասնություն, ազգային-եկեղեցական տեսակետից:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմական օրրան և գերագահ Աթոռը հանդիսացող Արարատյան Աթոռն է՝ «հաստատեալ և պայծառացեալ ի տեղի իջման Միածնի», իսկ մյուս նվիրապետական Աթոռները և բեմերը կազմում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միասնականության օղակները:

Ամենայն Հայոց Հայրապետությունը, Ս. Էջմիածնի անունն ու պատմությունը, խորհուրդն ու նշանակությունը սերտորեն կապված են եղել մեր ժողովրդի պատմության ու բախտի հետ:

Ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց Հայրապետությունը հայ ժողովրդի Սրբություն Սրբոցն է եղել, մեր ժողովրդի կրոնական ու ազգային զգացմունքների կենտրոնը, հայ ազգային ինքնուրույնության, ազգային պահպանման հիմնական ազդակը, և հազարամյակներով նա դարձել է մի անսպառ աղբյուր ներշնչման, հավատի, հայրենասիրության և եկեղեցասիրության: Ս. Էջմիածինը մեր ժողովրդի լույս աղբյուրն է, անսասան վեմը մեր լույս հավատքին, անշեջ փարոսը մեր հոգևոր լուսավորության, աստվածային ծագման հանապազորդ մեր հոգիներու փրկության և միաժամանակ հարազատ օջախը ջերմ հայրենասիրության» (Վազգեն Ա. Կաթողիկոս):

Արդարև հայ ժողովրդի կրոնական ու ազգային գիտակցության համար Ս. Էջմիածինն ու Ամենայն Հայոց Հայրապետությունը հանդիսացել են ազգային-եկեղեցական միասնության և գոյության խարիսխը: Ս. Էջմիածնի Կաթողիկոսին է նայել ու նայում, առաջնորդվել ու պայմանավորել հայ ժողովուրդը: Ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց Հայրապետությունը աստվածային պարգև են հայ ժողովրդի համար, դարերի պատմությամբ սրբագործված և խոր արմատներ ձգած հայ ժողովրդի հոգում, «ՎԵՄՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ, ԱՆՇԱՐԺՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԻՒՆ ՀՐԵՂԷՆ» (Ագաթ.), որ առաջնորդել է հայ ժողովրդին հազարամյակներ շարունակ և իր դժվարին օրերին իր թևերի տակ է առել ու պահպանել հայ ժողովրդին, «որպէս հաւ զձագս իւր», պատսպարել է իր ծիրանին՝ կապելու համար հայ ժողովրդի վերքերը:

Հայ ժողովուրդը սիրել է և այսօր էլ սիրում է Ս. Էջմիածինն ու Ամենայն Հայոց Հայրապետությունը իր հոգու բովանդակ ջերմությամբ և հավատում է Ս. Էջմիածնի Կաթողիկոսին, Ս. Լուսավորչի Աթոռի զորությանը: Ահա թե ուստի է գաղտնիքը այն դյութիչ զորության և հրապույրի, որ ունեցել են Ս. Էջմիածինն ու Ամենայն Հայոց Հայրապետությունը դարեր շարունակ հայ ժողովրդի աչքում, Ս. Լուսավորչի օրերից մինչև Վազգեն Ա:

Ի պատիվ հայ ժողովրդի պետք է սրտի անհուն գոհունակությամբ արձանագրել այստեղ այն փաստը, որ հայ ժողովուրդը ո՛ր էլ որ գտնվել է, երկրի ո՛ր ծայրում էլ նրան նետել է տխուր ճակատագիրը, նա Ս. Էջմիածնի հարազատ զավակն է մնացել, նրա հոգևոր ծնունդը: Իսկ տխուր ու ճակատագրական է եղել բախտը երբեմն այն բեմերի, որոնք թուլացրել են իրենց կապերը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ, ու մոռանալով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կարգերի, ավանդությունների նախանձախնդրությունը, մեր նախնյաց ոգին ու հայրենասիրությունը, բաժանվել են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ընդհանրությունից և ընդմիշտ կորել հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու համար: Մայր Աթոռ Ս. Էջմիածնից՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու օրրանից, դարավոր ու պատմական կենտրոնից, թեկուզ «ի վարչականս» եղած բաժանման ամենափոքր փորձերն անգամ ճակատագրական են եղել հայ ժողովրդի համար: ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԲՈՎԱՆԴԱԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՐՃԱԽՈՍ

ՎԿԱՆ Է ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԱՅՆ ԲԱՆԻ, ՈՐ ՎԱՂԵՄԻ ՈՒԺԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՑ ԱՆԶԱՏԵԼԱՓԸՆԵՐԻՆ ՍՊԱՍՈՒՄ Է ԴԱՎԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱԶՐԿՄԱՆ ԱՆՓԱՌՈՒՆԱԿ ՎԱԽՃԱՆ» (Գևորգ Զ. Կաթողիկոս):

Մայր Աթոռի և Ամենայն Հայոց Նորընտիր Հայրապետի ազգային-եկեղեցական իմաստուն քաղաքականության անշեղ կենսագործումով միայն կարելի է ապահովել ցանկալի միասնությունը, որի սկզբունքները այնքան գեղեցկորեն և սրտառուչ ձևով շարադրված են Վեհափառ Հայրապետի անդրանիկ կոնդակում:

Այսօր ավելի քան երբեք պետք է ուժեղացնել Մայր Աթոռի և մեր Նվիրապետական մյուս Աթոռների, թեմերի, հովվությունների կենդանի միասնությունը, փոխադարձ հարգանքի և հասկացողության և սերտ համագործակցության պայմաններում:

Վեհափառ Հայրապետի արտասանած կատարած հայրապետական թեմական այցելությունները ելնում են հայ եկեղեցական միասնականության և ազգային միասնության պահանջներից: Բնականաբար այս բոլորից բխում է փոխադարձ կապի պահպանումը Մայր Աթոռի և Վեհափառ Հայրապետի հետ, ըստ Եկեղեցու Սահմանադրության, դրսևորելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միասնականությունը, մի հանգամանք, որը դարերից ի վեր զորավիգ է հանդիսացել Հայ Եկեղեցու հոգևոր նկարագրի անաղարտ պահպանման և մեր Եկեղեցու ազգային ինքնուրույն գոյության: Մեր ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ու կուռ կազմակերպությունը, որը պահպանվել է և կարող է պահպանվել միայն ու միայն Ամենայն Հայոց Հայրապետի և մեր Նվիրապետական մյուս Աթոռների, թեմական առաջնորդների սերտ, կենդանի փոխադարձ համաքերությամբ, հենարան է հանդիսացել նաև մեր ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ, հայ մշակույթի, լեզվի, արվեստի, գրականության զարգացման ու պահպանման համար:

Մեր եկեղեցական ու ազգային միասնության շնորհիվ միայն կարելի է ստեղծել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կենսունակությունը, հոգևոր վերազարթոնքը, ապահովել մեր օրերում ես եկեղեցու դարավոր գոյությունը և ԱՅՍՕՐ ԷԼ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԴԱՐՁՆԵԼ ՇՆՉՈՂ, ԿԵՆԴԱՆԻ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ հայ ժողովրդի հոգևոր-ազգային նկարագրի, բարոյական բարեմասնությունների զարգացման գործում, հայկական ու քրիստոնեական ոգով դաստիարակելու գործում:

Մեր եկեղեցու միասնականությունը միակ անհրաժեշտ պայմանն է անաղարտ պահելու հայ ժողովրդի կրոնա-բարոյական հասկացողությունները, Հայ եկեղեցու ոգին, մեր հայրենի հնավանդ ավանդությունները ու սովորույթները, և Հայ եկեղեցին դարձնելու իրապես համազգային, համաժողովրդական մի հաստատություն:

1955 թվի սեպտեմբերին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական արտակարգ մեծ ժողովը, որը բացառիկ երևույթ էր մեր եկեղեցական տարեգրության մեջ, մի անգամ ևս արձագանքեց մեր ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՆՎԻՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ, հայտարարելով, որ ՄԻ Է ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ, ՄԻ ԵՎ ԱՆԲԱԺԱՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ:

Անխախտ պահենք մեր նախնյաց հավատն ու նախանձախնդրությունը, միշտ բարձր պահենք հայ ժողովրդի եկեղեցասիրության, հայրենասիրության, ազգային-եկեղեցական միասնականության նվիրական դրոշը:

# Կ Ր Ո Ն Ա Կ Ա Ն

ՀԱՅՐԻԿ ՔԱՀԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

## Մ Ե Ծ  Պ Ա Հ Ո Ց  Խ Ո Հ Ե Ր

(Բուն Բարեկենդանի, Արտաքսման և Անառակի կիրակիների առթիվ)

*Մեծ պահքն է արդեն, Քառասնորդական պահոց և ապաշխարության խորհրդավոր և տրտմալից օրերը, որոնք իրենց խորհրդով խոսում են հավատացյալների սրտի և հոգու հետ։ Երգվում են Մեծ պահոց և ապաշխարության հատուկ շարականներ և հոգևոր երգեր, կարդացվում են հոգեշունչ աղոթքներ, քարոզներ։ Այլևս չեն լսվում ուրախության հաղթական շարականներ. ի նշան սգո ցած են քաշվել սուրբ սեղանների վարագույրները, պատարագները կատարվում են ծածկված և տրտմագին, խորհրդավոր հնչում են եկեղեցու զանգակները և Հայ հավատացյալի սրտից, անուշաբույր խնկի նման, դեպի երկինք են բարձրանում աղերսական, տրտմաթախիծ աղոթքները։ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին Մեծ պահոց, ապաշխարության և աղոթքի մեջ է։*

*Ո՛չ մի եկեղեցի չունի այն հարուստ, հոգեպարար ապաշխարության երգերը, Մեծ պահոց այն շունչն ու ոգին, ինչ ունի մեր Եկեղեցին։ Մեծ պահոց ամբողջ խորհրդավորությունն ու հոգևոր նշանակությունն այն է, որ այն ներկայացնում է մարդկային հոգու անկման, խորտակման ողբերգությունը, և նորից դեպի Աստված, դեպի կատարելություն և սրբություն ձգտող մարդու իղձը, ապաշխարության միջոցով, Հիսուս Քրիստոսի փրկարար և քավիչ արյունով։*

*Մեր Եկեղեցին շատ գեղեցիկ անուններ է տվել Մեծ պահոց կիրակիներին, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է մարդկային հոգու անկման մի սրտառուչ և միաժամանակ ողբերգական վիճակը։ Օրվա սուրբգրական ընթերցումները, աղոթքներն ու երգերը բացահայտում են մեղքի ճիրաններում տառապող մարդու ողբերգությունն ու անզորությունը և մեղքի տղմից իր սեփական միջոցներով ազատվելու հուսահատությունը։ Այդ իսկ պատճառով եկեղեցում ստեղծվել են ապաշխարությունն ու պահեցողությունը, որպեսզի մեղավորը պայմաններ ստեղծի իր հոգեկան ուժերը լարելու, կոփելու և ամրապնդելու իր կամքը, որը այնքան կարևոր է բարի նպատակի՝ իր մեղքերից ազատագրվելու տեսակետից։*

*Մեծ պահոց առաջին կիրակին կոչվում է* Բուն բարեկենդանի կիրակի։ *Դա այդպես է կոչվել ի հիշատակ Նախամարդու՝ Ադամի դրախտում անցկացրած կյանքի։*

*Մարդը ստեղծվել է Աստուծո պատկերով և նմանությամբ «և զարդարեալ փառօք դրվել ի դրախտին փափկութեան»։ Ադամը դրախտում վայելում էր անվիշտ և անանցավոր ուրախություն, «և ուրախանայր ընդ հրեշտակս»։ Բայց Աստված Ադամին հրամայել էր չճաշակել գիտության ծառի պտղից, որը մի տեսակ պահեցողություն էր նրա համար, ինչպես երգվում է շարականում՝ «Որ զօրէնս սրբութեան պահոց նախ ի*

դրախտին աւանդեցեր»։ Փորձությունը եկավ անակնկալորեն և Ադամը օրինազանց գտնվեց։ Կատարվեց դրախտում առաջին հանցանքը՝ մեղքը, որին և հետևեց անխուսափելիորեն առաջին պատիժը: Ադամը արտաքսվեց դրախտից։

Մեծ պահոց երկրորդ կիրակին, Արտաքսման կիրակին, նվիրվեց Ադամի դրախտից վտարվելու ցավալի դեպքին։ Ադամը ճաշակեց արգելված պտղից՝ իր ազատ կամքով և անձնիշխանությամբ, ճանաչեց մեղքի և մահվան դառնությունը, վտարվեց դրախտից ու զրկվեց հոգեկան անմեղությունից, դրախտային երջանկությունից և դատապարտվեց իր քրտինքով իր հացն ուտելու։

Ահավոր էր հանցանքը, ահավոր էր և անկումը։ Ադամի պատմությունը՝ պատմությունն է մեղանչական մարդկության։ Ադամի հանցանքով մեղքն ու մահը աշխարհ մտան։

Անցան հազարավոր տարիներ, և մեղքն ու մահը թագավորում էին աշխարհում։ Մարդկությունը հյուծվում ու մաշվում էր մեղքի ճիրաններում և իր սեփական ուժերով անկարող էր ազատագրվել։ Երկնավոր Հայրը տեսավ մարդկության այդ տանջալի, տխուր, անմխիթար վիճակը. շարժվեց Նրա հայրական գութը և փութաց փրկել աշխարհը կորստից, ազատել մարդկանց չարիքի ճիրաններից և իր սեփական գիրկը հրավիրել։ Այդ բանի համար Նա արեց ամեն ինչ, չխնայեց նույնիսկ իր սիրելի Միածին Որդուն։ Աստուծո Որդին մարդկանց փրկելու համար ցած իջավ երկնքից, եղբայրացավ մարդկանց հետ, պատռե՛ց նրանց մեղքի պարտամուրհակը և իր աստվածային փրկագործությամբ խաչի վրա իր արյունով քավեց մարդկանց մեղքը և նրանց ազատելով մեղքից, դարձրեց Աստուծո որդեգիր. «Զի որպէս անհնազանդութեամբ միոյն մարդոյ մեղաւորք բազումք եղեն, նոյնպէս և հնազանդութեամբ միոյն արդարք բազումք եղիցին» (Թուղթ առ Հռոմ., Ե 19)։

Ճիշտ է, չարիքը չի չեզոքացել, մենք շարունակում ենք մնալ մեղանչական բնության մեջ («ո՞վ իցէ մարդ որ ոչ մեղիցէ»), սակայն մենք ունենք Նրա զորությունը ոչնչացնելու լավագույն հնարավորություններ ու միջոցներ։ Դրանցից կարևորն է հավատը ի Հիսուս Քրիստոս, ապաշխարության խորհրդի կատարումը, Ս. Հաղորդությունը, աղոթքը, ողորմությունը, բարեգործությունները։

Մովսիսական օրենքի համաձայն մեղքերը քավում էին զոհաբերված արջառների ու նոխազների արյամբ։ Կարևորը զոհն էր և ոչ մարդկանց սրտերի զոհաբերությունը։ Նոր Ուխտի մարդկանցից այլևս նման զոհաբերություններ չեն պահանջվում։ Հիսուս զենվեց գառի փոխարեն և իր արյամբ սրբեց ամբողջ մարդկության մեղքերը։ Ապաշխարող սրտից ըխած արտասուքի մի անկեղծ և ջերմ կաթիլը այժմ հազար անգամ թանկ ու գնահատելի է Աստուծո համար, քան հազարավոր նոխազների զոհաբերությունը։ Անսահման է Աստուծո մարդասիրությունը, ներողամտությունը, հայրական գութը, Նրա գիրկը միշտ բաց է ճշմարտապես ապաշխարող և զղջացող մեղավորի համար, որովհետև «Աստուած ոչ կամի զմահ մեղաւորին, այլ դառնալ նորա ի չար ճանապարհէն և կեալն»։

Աստվածային այդ անհուն սերը մեղավորի նկատմամբ արտահայտվում է Մեծ պահոց երրորդ կիրակի օրվա խորհրդով. Անառակ որդու առակով:

Գեղեցիկ է այդ առակը և բարձր՝ Նրա նշանակությունը։ Այդ առակը մի ավետարան է ավետարանների մեջ։ Դրախտից վտարված Ադամը, այսինքն մարդը, մեղքի միջոցով այլասերվում է բարոյապես, հոգեպես, ֆիզիկապես և հավասարվում անասուններին, որովհետև եղծվում է Նրա վրա աստվածային պատկերը և նմանությունը։ Մեղքը այլանդակում է մարդուն։ Բայց մարդու մեջ կա մի կայծ Աստուծուց։ Այդ կայծը, խիղճը, հայրենի տան քաղցր հիշատակը, սրբության սերը, մեղքի նկատմամբ զզվանքը, ցնցում են մեղավորին և նա զգաստանում է, վեր է բարձրանում մեղքի ճահճից, զգում է իր հոգում մարդկային արժանապատվության զարթոնքը, վեր է բարձրանում կենդանական անզգայությունից և անկեղծ զղջումով մրմնջում. «Հայր, մեղայ յերկինս և առաջի քո», և վազում դեպի հայրենի տուն, որտեղ Հայրը կարոտով սպասում է նրան, որովհետև թեև անառակ, բայց որդի է նա և ժառանգ Աստուծոյ։

Ապրում ենք ապաշխարության օրեր։ Բավական չէ լսել Մեծ պահոց շարականներն ու սուրբգրական ընթերցումները. հարկ է ապրել և ներշնչվել Մեծ պահոց խորհրդով։

Զինվենք ապաշխարության և պահեցողության զենքով մեղքի դեմ և մեր աղոթքներով ցրենք չարի խորհուրդները, ապավինենք Աստուծո ողորմության և օգնության ու մաքուր սրտով, անքիծ հոգով արժանանանք մեր Փրկչի հրաշափառ Հարության, որովհետև Նա աշխարհ եկավ «ի դարձումն մոլորեալ ոչխարին» և կանգնելու «անկեալս մեղօք»։

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ԱՇՃՅԱՆ

# ՄԵԾ ՊԱՀՈՑ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

(Տնտեսի, Դատավորի և Գալստյան կիրակիների առիթով)

*Խորիմաստ և տպավորիչ են Մեծ պահոց բոլոր կիրակիների նշանակությունը, շարականների և հոգևոր երգերի բովանդակ իմաստը, եկեղեցական արտաքին ձևավորումների բովանդակ պատկերը։ Մեծ պահոց իմաստ հաղորդող Քրիստոսի առակները։ Մեծ պահոց օրերին են կարդացվում Քրիստոսի գեղեցկագույն առակները։ Առակախոսությունը Քրիստոսի քարոզության կարևոր միջոցն է եղել։ Այդ առակների մեջ նա խտացրել է իր վարդապետության, քարոզության էությունն ու գաղափարական բովանդակությունը։ Շատ են այդ առակները, բայց նրանցից մեկի անունով էլ կոչվում է Մեծ պահոց չորրորդ* Տնտեսի կիրակին:

*Ի՞նչ է Տնտեսի առակը և ի՞նչ է նրա իմաստը։*

*Տնտեսը հավատարիմ ծառայել է իր տիրոջը, հնարամտություն է ունեցել ծառաների բարեկամությունը շահելու՝ նրանց պարտքերի զգալի տոկոսը զեղչելու միջոցով և արժանացել իր տիրոջ գովասանքին։ Ավետարանի դժվարիմաստ առակներից մեկն է այս, որի մեջ շոշափված է նյութականի և բարոյականի փոխհարաբերության հարցը։ Մարդը տնտես է նշանակված Աստծո կողմից ողջ աշխարհի և նրա անսահման բարիքների ու գանձերի վրա։ Ինչպե՞ս պետք է նա վարի իր տնտեսությունը։ Սրանից էլ ծագում է քրիստոնյա մարդու համար կարևոր մի հարց՝ հանցա՞նք է հարստանալը։ Տնտեսի առակը այս հարցին տալիս է որոշակի պատասխան — եթե չարաշահումների, վաշխառության, խաբեության արդյունք չէ հարստությունը, եթե լարված աշխատանքի և քրտինքի արդար վաստակ է նա, հարստանալը մեղք չէ։ «Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան»։*

*Սակայն այս չէ այս առակի ամբողջ միտքը։ Հարստանալու ցանկությամբ պետք չէ զրկել ուրիշներին, այլ ընդհակառակը պետք է ծառաների, կարիքավոր մարդկանց բարեկամությունը շահել, նրանց նկատմամբ ցուցաբերելով անշահախնդիր օժանդակություն, մարդասիրություն, հարգանք, սեր։ Տնտեսը կարողանում է այդ հաջողաբար ուղին գտնել և շահելով ծառաների բարեկամությունը, գոհունակություն է պատճառում իր տիրոջը, որովհետև նա իր շահը տեսնում է իր ընկերների շահի մեջ։ Տնտեսը իմաստությամբ է գործում։*

*Այս առակի իմաստն այն է, որ եթե մարդիկ՝ «տնտես»-ները այնքան ճարպիկ և աչքաբաց են իրենց նյութականը ապահովելու մեջ, որքան ավելի պետք է մտահոգվեն, իմաստություն, շնորհք, խելացիություն հանդես բերեն* հոգևոր *հարստություն դիզելու հարցում։ Նյութականը վաղանցուկ է, կորստական, գողերը կարող են «ական հատանել և գողանալ», մինչ հոգեկանը անկողոպտելի է, անկորնչական։ Ահա թե ինչի՝ պետք է ձգտեն իմաստուն «տնտես»-ները՝ քրիստոնյաները։*

*Քրիստոնեությունը դատապարտում է նյութականի նկատմամբ պաշտամունքը, փողի, մամոնայի առաջ ստրկանալը։ Փողը, մամոնան շատ վատ բռնակալ է, եթե այն համարենք* տեր, *իսկ կլինի հավատարիմ և օգտակար* ծառա, *եթե այն գործածենք իբր միջոց բարեգործության, մարդասիրության համար և ոչ թե* ինքնանպատակ: *Պետք ունենանք տնտեսի իմաստությունը՝ բարեկամներ ճարելու և ազնիվ ու աստվածահաճո գործեր կատարելու համար։ Ուշ կամ կանուխ մեզանից էլ պահանջվելու է իբրև քրիստոնյաներ՝ «Տուր զհամար տնտեսութեան քո, զի ոչ ևս կարես լինել տնտես»։ Պատասխանատվության զգացումը, պարտականության*

*գիտակցությունը քրիստոնյա հավատացյալի առաքինությունն է, իսկ նրանից զուրկ լինելը՝ նրա հանցանքը։ Քրիստոնյա մարդու պատասխանատվության շրջանակը շատ ընդարձակ է։ Այդ պատասխանատվությունը կարող է լինել հոգեկան, բարոյական, հայրենասիրական, ազգային, անձնական, ընկերային, ընտանեկան։ Քրիստոնյան պետք է այդ բոլորի «համարս»-ը տա մի օր. «Որում շատ տուաւ, շատ պահանջեսցեն ի նմանէ»։ Այս երկրի վրա քրիստոնյա մարդու ամբողջ կյանքը մի համարատվություն է իր Եկեղեցու, իր Հայրենիքի, իր ժողովրդի առաջ։ Սակայն նա հաշվետու է ամենից շատ Աստուծո և նրա աստվածային դատաստանի առաջ։ Եվ երջանիկ ու բախտավոր է այն հավատացյալը, որը լսում է Փրկչի խրախուսիչ ձայնը՝ «Ծառայ բարի և հաւատարիմ»։*

*Մեծ պահոց հինգերորդ կիրակին կոչվում է* Դատավորի կիրակի: *Այդ օրը կարդացվում է Ավետարանից Դատավորի առակը։*

*Մի այրի կին անձանձրույթ և հետևողական խնդրանքների ու դիմումների միջոցով կարողանում է իր դատը լսել տալ մի անգամ և անխիղճ դատավորի, որը ոչ Աստուծուց էր երկնչում, ոչ էլ մարդկանցից ամաչում, կորցրած լինելով մարդկային նկարագրի բոլոր գծերը։*

*Այս առակի մեջ շոշափվում է ընդհանրապես աղոթելու կերպը, ժամանակը և աղոթքի զորությունը։ Աղոթքը այն կենդանի կապն է, որը հավատացյալներին հաղորդակցության մեջ է դնում Աստուծո հետ։ Աղոթքի թևերով հավատացյալի հոգին վերանում է դեպի Աստված, ներշնչվում և ուժ է ստանում մեղքի և չարիքի դեմ կռվելու։ Աղոթքը հանդիսանում է մերթ մի թախանձագին խնդրանք, աղաչանք, Աստուծո օժանդակությունը աղերսող սրտի ինքնաբուխ մրմունջ, մերթ շնորհակալություն, երախտագիտություն Աստուծուն՝ իր բարիքների և ողորմության համար։*

*Սակայն ինչպե՞ս պետք է աղոթել։ Ահա հարցը։*

*Պիտի աղոթել խոր անկեղծությամբ, հավատով, ջերմեռանդությամբ։ Աղոթքը պիտի լինի մշտապես, հետևողական, որովհետև նա հոգու սնունդն է։ Աղոթքը քրիստոնյա մարդու համար անհրաժեշտություն է հանապազօրյա հացի, ջրի, օդի չափ։ Աղոթքը պետք է լինի այրի կնոջ աղոթքի նման, սրտանց, համոզված, գիտակցաբար։ Եթե այրի կնոջ թախանձանքները լսվեցին անխիղճ դատավորից, որքա՜ն ավելի շուտ կլսվի քրիստոնյայի աղոթքը, որն ուղղվում է Բարի Դատավորին, որ մեր Հայրն է, բարեկամն ու դաստիարակը։ Պետք է աղոթել մաքուր հոգով և վստահ Աստուծո ողորմության վրա։*

*Աղոթել սովորենք այն հոգով ու բառերով, որոնցով աղոթել են մեր մեծ հայրապետներն ու սրբերը։ Անգիր անենք նրանց սքանչելի աղոթքները, որոնցում բացահայտվել է մարդկային հոգու ողջ զղջերգությունը, անզորությունը, յուսաբաղձությամբ և թող մեր սրտերից ես բարձրանան ապաշխարության այս օրերին, իբրև կնդրուկ, մեր աղոթքները։*

*Մեծ պահոց վերջին կիրակին կոչվել է* Գալստյան կիրակի:

*Մեր բարեպաշտ նախնիները, իրենց հավատի ջերմությամբ, հոգևոր կապ են դրել Մեծ պահոց բոլոր կիրակիների միջև։ Մեկ կիրակիի խորհուրդն ու նշանակությունը էլ ավելի բացատրվում և հասկանալի են դառնում հաջորդ կիրակիների խորհրդով։*

*Գալստյան կիրակիի խորհուրդը մեծ է քրիստոնյայի կյանքի և Եկեղեցու վարդապետության մեջ։*

*Քրիստոսի երկրորդ գալուստը վերադարձն է Աստվածորդու մեր մոլորակի վրա, ընդհանուր դատաստանի համար։ Նա պիտի գա զօրութեամբ և փառօք բազմօք։ Ժամանակը միայն գիտէ Հայրն։ Ուստի պետք է միշտ արթուն լինել ու պատրաստ, աղոթել, որ փորձության մեջ չընկնենք։ Քրիստոսի գալստյան մասին շատ գեղեցիկ էջեր և առակներ կան Ավետարաններում, օրինակ՝ տանուտիրոջ և տնտեսի, տասը կույսերի, քանքարների առակները, որոնցում խոսվում է արթուն և պատրաստ լինելու համար Քրիստոսի գալստյան օրը։ Մեծ պահքն իր խորհրդավորությամբ, ապաշխարությամբ, կրոնական շնչով հոգևոր լինելության պատմություն է, որն սկիզբ է առնում Ադամի դրախտային օրերից և ապրում է մինչև հավիտյան։*

*Լինենք մեր կյանքի իմաստուն տնտեսը, ունենա՛նք այրի կնոջ հետևողականությունը մեր աղոթքներում և քրիստոնյային վայել հոգեկան մաքրությամբ, ապաշխարությամբ, սրբությամբ, պատրաստ լինենք դիմավորելու նաև Քրիստոսի հրաշափառ Ս. Հարությունը և երկրորդ գալստյանը։*



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԹԲԻԼԻՍՈՒՄ

*Փետրվարի 29-ին գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը մեկնեց Թբիլիսի՝ Ս. Սարգսի տոնի առթիվ բանին կենաց քարոզությամբ մխիթարելու հավատացյալ ժողովրդին։ Սրբազանին ընկերակցում էին բարեշնորհ Հովհաննես և Սարգիս ճեմարանական սարկավագները։ Սրբազանը երկու անգամ պատարագել ու քարոզել է Թբիլիսիում։*

*Մարտի 6-ին սրբազանը սարկավագների հետ վերադարձավ Մայր Աթոռ։*

## ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

*Մարտի 1-ին Հոգևոր ճեմարանում տեղի ունեցավ «Քրիստոնյաների բանի կաթոլիկացումը» թեմայով երկրորդ դասախոսությունը հոգեշնորհ Վաչան աբեղա Տալամդարյանի կողմից։ Հայ Եկեղեցու պատմության մանրազնին ուսումնասիրության վրա և պատմական համոզիչ փաստերով հոգեշնորհ Տ. Վաչան աբեղան ցույց տվեց Վատիկանի քայքայիչ և տխուր գործունեությունը քրիստոնյաների բանի միության գործում, որի զոհերը դարձան բոլոր քրիստոնյաները։ Վերջում դասախոսը եզրակացրեց, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին եղել է և է՝ ազգապահպանման հզոր ազդակներից մեկը։*

*Մարտի 7-ին Հոգևոր ճեմարանում տեղի ունեցավ երրորդ դասախոսությունը։ Հոգևոր ճեմարանում հայ ժողովրդի պատմության և Հայ Եկեղեցու պատմության դասախոս Արթուն Հաթիտյանը խոսեց «Հայաստանյայց Եկեղեցին և նրա դերը հայ ժողովրդի կյանքում» շահեկան նյութի շուրջ։ Դասախոսությանը ներկա էին Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի գլխավորությամբ, Վեհափառի մայրը և ճեմարանի դասախոսական կազմը։*

*Դասախոսը բարեխղճորեն և պատմական մանրակրկիտ ուսումների հիման վրա համոզեցուցիչ կերպով ցույց տվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դերը՝*

*ա) հայ մշակույթի ստեղծման, զարգացման և պահպանման գործում.*

*բ) հայ ժողովրդի հոգեկան անկախության ու ինքնագիտակցության, ազգային արժանապատվությունն ու ոգին պահպանելու իր եռանդուն ջանքերի մեջ.*

*գ) ազգային-ազատագրական շարժումներին մասնակցելու և այդ շարժումները կազմակերպելու գործում.*

*դ) մեր ներկա կյանքում, ազգային ու միջազգային շրջանակների մեջ։*

*— Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին փառավոր և պատասխանատու ուղի է անցել մեր ժողովրդի անցյալի կյանքում, այժմ էլ չի վերջացել նրա մեծ ու օգտակար առաքելությունը հայ կյանքում,— եզրակացրեց դասախոսը։*

*Դասախոսության վերջում ճեմարանի վերատեսուչ պ. Մարտիրոս Տեր-Ստեփանյանը և գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը շնորհակալություն հայտնեցին դասախոսին ուսա-*

նելի դասախոսության համար, որը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

Մարտի 18-ին Հոգևոր ճեմարանում լսվեց չորրորդ դասախոսությունը՝ «Մեր հոգևոր դպրոցները և նրանց դերը» թեմայով։ Դասախոսեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Անթարյանը։

Համառոտ, բայց ամբողջական ձևով դասախոսը տվեց մեր հոգևոր դպրոցների հայ կյանքում և մեր մշակույթի պատմության մեջ կատարած պատմական դերի ընդհանուր ուրվագիծը։ Նա նշեց մեր հոգևոր դպրոց-վանքերի կատարած շնորհակալ աշխատանքը մեր բազմաժանր գրականության ստեղծման և պահպանման ու զարգացման գործում, ապա պատմական փաստերով ցույց տվեց վանքերի դերը հայ ժողովրդի լուսավորության և ազգային վերածննդի գործում, նրանց դերը նաև մեր արվեստի պատմության մեջ ընդհանրապես, գրականության և մանրանկարչության արվեստում առանձնապես։ Վերջում դասախոսը նշեց, որ այսօր էլ չի ավարտվել մեր հոգևոր դպրոցների դերը հայ կյանքում, որ ներկայումս գոյություն ունեցող մեր հոգևոր դպրոցները պատվով են կատարում իրենց դերը՝ հարազատ մնալով իրենց նախորդների լավագույն ավանդներին։

Մարտի 21-ին Հոգևոր ճեմարանի դահլիճում կարդացվեց հինգերորդ դասախոսությունը՝ «Արմաշի դպրեվանքը» թեմայով։ Դասախոսն էր Արմաշի դպրեվանքի նախկին սան Հարություն քահանա Մատենչյանը։

Դասախոսը ջերմ շնչով տվեց Արմաշի դպրեվանքի մանրամասն բնութագրությունը՝ շեշտելով նրա կրթական, եկեղեցական և ազգային հասարակական ասպարեզներում մատուցած ծառայությունները հայ մշակույթին և հայ ժողովրդին։ Դասախոսն ընդգծեց Արմաշի դպրեվանքի եկեղեցականների՝ Կոստանդնուպոլսի պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Առաքելական Աթոռի պատրիարքներ Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի և Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանի, Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս Բաբգեն Կյուլեսերյանի և այլ անվանի արմաշականների մտավոր ու բարոյական բարձր արժանիքները և նրանց նվիրվածությունը Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին։

Դասախոսն անդրադարձավ նաև Արմաշի դպրեվանքի օրինակելի կարգապահությանն ու դաստիարակչական գործին։

## ԾԱՂԿԱԶԱՐԴԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 25-ին, Ծաղկազարդի կիրակի օրը, Մայր Տաճարը լիքն էր հավատացյալների խուռն բազմությամբ։ Ջերմեռանդ հավատի ու կրոնական զգացմունքների թելադրությամբ, շատ հավատացյալներ Մայր Աթոռ էին եկել Սովետական Միության հեռավոր մասերից՝ ներկա լինելու Հայաստանյայց Եկեղեցու խորհրդավոր ու հոգեպարար արարողություններին։

Սկսվում են Ծաղկազարդի արարողությունները։ Մեր սքանչելի շարականների քաղցրալուր մեղեդին տարածվում է Տաճարում։

Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը մատուցեց հանդիսավոր սուրբ պատարագը։ Պատարագիչ սրբազանը իր քարոզում տվեց օրվա հանդիսությունների պատմականն ու նրանց խորհրդի բացատրությունը։

## ՉԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՄԱՐՇԱԼ ՉԺՈՒ ԴԵՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 7-ին Մայր Աթոռ այցելեց Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի նախագահի տեղակալ Մարշալ Չժու Դեն՝ տեսնելու համար հայկական ճարտարապետության հնագույն կոթողներից մեկը՝ Մայր Տաճարը։

Մարշալ Չժու Դեին ուղեկցում էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ Ա. Ե. Քոչինյանը, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ Շ. Մ. Առուշանյանը և պետական այլ ղեկավարներ։

## ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱՅԻ ԵՎԱՆԳԵԼԻԿՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 28-ին Մայր Աթոռ այցելության եկավ Չեխոսլովակյան Եվանգելիկյան Ազգային ժողովի պատվիրակությունը։ Պատվիրակությանն ընդունեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը Եղիշե և Մեսրոպ աբեղաների հետ։ Արարողակ մանրամասներին ծանոթացրեց հյուրերին Մայր Տաճարի պատմությանը, ճարտարապետական և մանրանկարչական արվեստին, ինչպես և Մայր Տաճարին կից Եկեղեցահնագիտական թանգարանին։

Հյուրերը իրենց գոհունակությունը հայտնեցին ցույց տրված ընդունելության համար և մեկնեցին Երևան։

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՍՔ

Փետրվարի 26-ին Մայր Տաճարում, սուրբ պատարագի ժամանակ, քարոզեց գերապատիվ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը Անառակ որդու մասին։ Արդարության հանգամանորեն և կյանքից վերցրած արտառոց օրինակներով բացատրեց առակի իմաստը և սրտագին կոչ արեց ժողովրդին՝ տիպար Անառակ որդու անկեղծ զղջումը և զիջել Երկնավոր Հոր անսահման գթությանը՝ մեր մեղքերի թողության համար։

Նույն օրը հոգեշնորհ Տ. Եղիշե և Տ. Հայրիկ աբեղաները Երևանի Ս. Սարգիս և Ս. Զորավոր եկեղեցիներում պատարագի ժամանակ քարոզեցին խոսն բազմության ներկայությամբ Անառակ որդու առակի մասին՝ ապաշխարության կոչելով հավատացյալ ժողովրդին։

Մարտի 4-ին Մայր Տաճարում քարոզեց հոգեշնորհ Հայրիկ աբեղան՝ Տնտեսի առակի մասին։ Հակիրճ բացատրելով առակի իմաստը, հավատացյալներին հորդորեց լինել իրենց անձի «տնտես»-ները՝ պատրաստ լինելու Տիրոջ առաջ հաշվետվության։

Շաբաթ, մարտի 17-ին, Ս. Գրիգոր Լուսավորչի Վիրապդամտի տոնի օրը, Մայր Տաճարում քարոզեց հոգեշնորհ Տ. Եղիշե աբեղա Սարգսյանը։ Քարոզիչը, որ միաժամանակ պատարագիչն էր այդ օրը, նշեց Լուսավորչի կատարած պատմական մեծ դերը հայ եկեղեցական կյանքում։

# ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ՏԱՐԵԹՎԵՐԻ ԵՎ ԱՄՍԱԹՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

### 6. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԹՎԱԿԱՆԸ

*Հայ մատենագրության մեջ, ճիշտ է շատ քիչ, գործ է ածվել նաև հռոմեական թվականը։ Այս թվականը հռոմեական է կոչվում այն պատճառով, որ նրա սկզբնավորությունը, ըստ ավանդության, կապվում է Հռոմ քաղաքի հիմնադրության հետ։ Վարրոնի հաշվումներով, Հռոմ քաղաքը հիմնադրվել է 753 թվին մեր էրայից առաջ, մեր թվարկության 247 թվին (Փիլիպոս կայսեր 4-րդ տարին) բոլորվել նրա հազարամյակը և 248 թվին նոր հազարամյակի սկիզբը դրվել։ Հայկական որոշ հիշատակարաններում այս թվականը կոչվում է նաև հունական, անշուշտ, հռոմեականի իմաստով։*

*Հռոմեական մեծ թվականը ներկա թվականի վեր ածելու համար պիտի ավելացնել 248։ Հռոմեական մեծ թվականը հայկական թվականի վեր ածելու համար, պիտի ավելացնել 304։ Հովհաննես Իմաստասերի «Պատճէն տոմարի Հայոց»-ում հռոմեական մեծ թվականը գտնելու համար հանձնարարվում է հետևյալ հաշվումը կատարել. «Հոռոմոց թուականն այսպէս արա. կալ զՀայոց մեծ թուականն, ՅԴ (304) ի վերայ դիր՝ մեծ թուականն է Հոռոմին»[58]։*

*Բերենք այս թվականի օգտագործման մի քանի փաստեր։*

*Ստեփանոս Ասողիկն իր Պատմությունն ավարտել է արարչության ՑՄՁԲ-ին, խաչելության՝ ՋՀԲ-ին, «իսկ ըստ Յունաց թուականին ի Փիլիպպոս կայսրէ՝ ամք ՉԾԷ, և ըստ հայերէն շափս մերոյ՝ ամք ՆԾԳ»[59]։ Արարչության տրված թվականը ներկա թվականի վեր ածելու համար, մենք պիտի առաջնորդվենք Մովսես Սյունեցու թվահաշվով — հանենք 5277 (6282—5277), կստանանք 1005։ Խաչելության թվականը ևս հավասար է 1005-ի (խաչելության թվականը հաշվելիս, պիտի գումարենք 33)։ Հռոմեական տրված 757 թվականին պիտի գումարենք 248, հավասար է 1005-ի։ Եվ, վերջապես, տրված հայկական թվականին՝ 453-ին պիտի գումարենք 552, հավասար կլինի 1005-ի։ Հետևապես, Ստեփանոս Ասողիկի պատմությունը, անվիճելի, գրված է 1005 թվին։*

*Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի սեփականությունը եղող Գրիգոր Նյուսացու «Երգ երգոց»-ի մեկնությունը (№ 2684) գրված է «ի ՆԻԲ թուականութեանն Հայոց և ՉԻԵ Հոռոմի թուականութեանն...»[60]։ Հայոց ՆԻԲ թվականը հավասար է 422 + 551 = 973-ի, իսկ հռոմեական ՉԻԵ թվականը՝ 725 + 248 = 973-ի։ Ուրեմն, ձեռագիրը գրված է 973 թվին։*

*Ներսես Շնորհալին իր դավանական բովանդակությամբ բանաստեղծության գրության թվականը հաղորդել է հետևյալ քառյակում.*

* Տպագրված մեր ամսագրի 1956 թվականի №№ I-ից և II-ից։

58. Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռագիր № 2180, թ. 256ա։

59. Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, ՍՊԲ, 1885 թ., էջ 285։

60. Գարեգին կաթ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 127։

«Ի միւ եօթանց ասաց Հարիւրոց,
Կատարեցաւ բանս Հասարոց,
Ի վեց Հարիւր թուական Հայոց,
Յհետն Հարիւր չորս Հռոմեաց»[61]։

Ըստ այսմ, Հայկական թվականով 600-ը հավասար է 1152-ի (600+552), իսկ Հռոմեական 904-ը՝ դարձյալ 1152-ի (904+248)։

Բացի Հռոմեական մեծ թվականից, մեզ մոտ օգտագործվել է Հռոմեական փոքր թվականն էլ, որն սկսվում է Հռոմեական մեծ թվականից՝ ավելացնելով 532 տարվա մի շրջան, այսինքն՝ Հաշվելով 780 թվականից։

Հայկական ՍՍՀ Պետական մատենադարանի № 492 ձեռագիրը, որը բովանդակում է Գոշի Դատաստանագիրքը, գրվել է «ի թուականութեանս Հայոց ՈԼԳ (633) և շրջանին եթերայոց ի բաց ՃԱ (101), որ փոքր կոչի, իսկ Հռոմայ՝ ՆԵ...»[62]։ Ձեռագիրը գրված է Հայոց թվականի ՈԼԳ-ին՝ 633+552=1185 թ., փոքր թվականի ՃԱ-ին՝ 101+1084=1185, Հռոմեական փոքր թվականի ՆԵ-ին՝ 105+248+532=1185։ Ուրեմն ձեռագրի ընդօրինակության տարին է 1185-ը։

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 314 ձեռագրի ընդօրինակողը գրչության թվականի մասին հետևյալ հիշատակությունն է թողել. «Գրեցաւ գիրքս ի թուականիս Հայոց նորումս ՁԹ, իսկ Հռոմայ ՅՂԳ...»[63]։ Ըստ այսմ, ձեռագիրը գրված է Հայոց նոր կամ փոքր թվականի ՁԹ-ին՝ 89+1084=1173, Հռոմեական փոքր թվի ՅՂԳ-ին՝ 393+248+532=1173։ Ուրեմն՝ ձեռագիրը գրված է 1173 թվին։

Հայկական ՍՍՀ Պետական մատենադարանի № 1971 ձեռագիրն ընդօրինակված է գումարգիր ծածկագրով՝ «Հայոց ԹՈՒԱԿԱՆ ԱԿԱ և ՈՆԻ ԼԱԼԱ», «իսկ Հռոմայեցւոց մեծացն ՄԱՌ ՄԾՏ ԽԼԱՌ» և «փոքրն՝ ՄԱ ՃԱ ԹԱԺ»[64]։ Հայոց թվականը արտաքինի վերածած տառագծում է՝ 1000+1+70+1+9+1=1082 և 600+400+20+30+1+30+1=1082, իսկ 1082+551=1633։ Հռոմեական թվականով՝ 50+1+1000+200+5+50+40+30+1+9=1386, իսկ 1386-ին գումարած 247=1633 (Հայկական թվականը 551 ընդունելուց հետո գումարում ենք ոչ թե 248, այլ 247)։ Իսկ փոքր թվականով՝ 200+1+100+1+9+1+10=322 (փոքր անկյում այստեղ Հասկացվում է ոչ թե մեր թվականը, այլ Հայկական կրկնանախատարգի տարին, որ սկսել է 1312-ին, բայց այստեղ հաշված է 1311-ով — մի թվական դարձյալ զեղչված է եղած)՝ 322+1311=1633։

Հայկական ՍՍՀ Պետական մատենադարանի № 5602 ձեռագիրը, որը պարունակում է Օրբելյանների ազատագրության մասին մի արժեքավոր հիշատակարան, գրչության թվականի մասին հետևյալ տեղեկությունն է արձանագրված.

«Արդ եղև շարագրութիւն այսր տառի մեկնութեան յամի Ռ.որդի, և եհան առ քանի թուաբերութեան Հայազնեան բրոնիկոնիս, իսկ նորայս շրջանի ինանի և չորից և ի կենարարին մերոյ ծննդենէ՝ Հազար և Հարիւր եօթանասուն և ինն էին ամաց շրջագայութիւնք։ Իսկ Հռոմայի շրջանի երեքհարիւր իննսուն և ութ էին բովանդակութիւնք ամաց։

Նախ քան զայս միով ամաւ խաւարեցաւ արեգակնն յարբեցիրս ամառն ի Նորում կիւրակէին յառաջնումն ժամուս»[65]։

Հիշված ձեռագիրը գրված է տարվա սկզբներին, ուստի և պետք է ավելացնել ոչ թե 552, այլ 551։ Այդ հաշվով՝ Հայկական ՈԻԷ թվականը հավասար է 1178-ի (627+551)։ Մտրուկ թվականի 94-ը հավասար է 1178-ի (94+1084=1178)։ Հռոմեական 398-ը հավասար է 1178-ի (398+248+532)։

## 7. ՀԻՋՐԱՅԻ ԹՎԱԿԱՆԸ

Հիջրայի կամ մուսուլմանական թվականի սկիզբը համարվում է 622 թվականի հուլիսի 16-ը Հուլյան տոմարով, երբ տեղի է ունեցել Մահմեդի փախուստը Մեկկայից դեպի Մեդինա։ Արաբական տարին մաքուր լուսնական տարի է. նա բաղկացած է 12 ամիսներից՝ հաջորդական 29 և 30 օրերից — մի տարին ունի 354 օր, իսկ նահանջը՝ 355 օր. Արեգակնային տարին, ինչպես ասել ենք, ունի կլոր հաշվով 365¼ օր, այսինքն՝ մոտ 11¼ օր ավելի լուսնային տարուց, ուստի և մոտ 33 տարվա ընթացքում լուսնական տարին 1 տարի առաջ է ընկնում։

Հիջրայի տարին մեր ներկա թվականի վերածելու համար գոյություն ունի հաշվելու երկու եղանակ — մեկը պարզ՝ թվականը մոտավոր ձևով գտնելու համար, իսկ մյուսը

61. Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830 թ., էջ 223—224։

62. Գարեգին կաթ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 505։

63. Հ. Բ. Սարգսյան, Ձեռագրաց ցուցակ Վենետիկի, հատ. Բ, էջ 1288։

64. Հայկական ՍՍՀ Պետ. մատեն.-ի ձեռագիր № 5602, թ. 270ա—բ։

65. Հայկական ՍՍՀ Պետ. մատեն.-ի ձեռագիր № 1971, թ. 123ա։

բարդ՝ ճիշտ թվականը և օրը գտնելու համար[66]։

Պարզ եղանակը հետևյալն է.— Տրված թվականը բաժանում ենք 33-ի վրա՝ իմանալու թե քանի՞ նահանջ տարի է մուտք գործել տվյալ թվականի մեջ։ Ապա ստացված արտադրյալը դուրս ենք անում տվյալ թվականից և մնացածը գումարում Մահմեդի փախստյան 622 թվականի վրա։ Այսպես օրինակ՝ Հիջրայի 1201 թվականը գտնելու համար անհրաժեշտ է.

1) 1201:33=36+1=37 (մնացորդի դիմաց մեկ տարի ավելացնում ենք).
2) 1201—37=1161.
3) 1164+622=1786։

Հիջրայի բարդ, բայց ավելի ճիշտ թվականը որոշելու համար պիտի վերցնել Հիջրայի լուսնական 30 տարիների ցիկլը, որն անփոփոխ կրկնվում է։ Յուրաքանչյուր լուսնական ցիկլը ունի 10.631 օր։ Այնուհետև պիտի պարզել, թե տրված թվականը քանի՞ լուսնային ցիկլ է պարունակում, ապա ստացված թիվը բազմապատկել լուսնի ցիկլի վրա և ստացված թիվը բաժանել $364^1/_4$-ի վրա։

Ճիշտ հաշվումների համար մշակված են հատուկ աղյուսակներ, որոնք մենք բերում ենք հաջորդ էջերում։

Ենթադրենք մեզ տրված է պարզել, թե մեր ներկա թվականով ո՞րն է տեղի ունեցել Հիջրայի 782 թվի ռամազան ամսի 19-ին Բաղդադում պատահած երկրաշարժը։ Մենք կատարում ենք հետևյալ հաշվումները.— Նախ հաշվում ենք, թե 782 լուսնական տարիները քանի՞ օր են պարունակում.

780 տարի=284 638 օր (Ա աղյուսակով)
Երկրորդ տարին՝ 354 » (Բ » )
ռամազանի սկիզբ՝ 236 » (Գ » )
ամսի քանիսը՝ 19
285 247 օր

Այժմ բաժանում ենք աստղաբաշխական տարվա օրերի վրա.

283247 օր
1300 տարին՝ 255675 » (Դ աղյուսակով)
29572 »
80 տարին՝ 29220 » (Ե աղյուսակով)
352
335 (Զ աղյուսակով)
1380 թ. դեկտ. 17

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի «Փղոսկրյա» կոչվող նշանավոր Ավետարանը գրված է «յամի թուոյ Հայկազանց ՆԼԸ, և ըստ թուոյ Հոռոմի ՉԽԲ, յիսմայէլական բռնակալութեանն ՅԶԹ»[67], Իսմայելական թվականն այստեղ հիշված է արաբական Հիջրեի թվականի իմաստով, որը ներկա թվականի վեր ածելու համար պիտի կատարել հետևյալ հաշվումները.

1) 360 տարին=135804 օր (Ա աղ.)
2) 19 տարին= 6379 » (Բ աղ.)

379 տարին=142183 օր, որից հանած
109575 օր=900 տարվա (Դ աղ.)
կմնա՝ 32608
32142=88 տարվա (Ե աղ.)
466
456=1 տարի 4 ամսի (Զ աղ.)
10

Այսպիսով՝ 900+88+1=989 և լրացուցիչ 4 ամիս։

Եվ քանի որ Հոռոմեական թվականով ձեռագրի գրության ժամանակը 990 է, նույնը և հայկականով, ապա պիտի ենթադրել, որ ձեռագիրը գրվել է 990 թվականի հուլիսից առաջ[68]։

Հաշվումների գործն ավելի դյուրացնելու համար օգտագործվում են տոմարական հետևյալ վեց աղյուսակները, որոնք մենք վերցրել ենք դոցենտ Գ. Մամեդբեյլիի 1949 թվին հրատարակված «Синхронические таблицы для перехода от лунного летосчисления к солнечному и обратно» աշխատությունից։

66. Հիջրայի թվականները մեր ներկա թվական հաշիվների վերածված ամբողջական աղյուսակ է հրատարակել ակադ. Հ. Ա. Օրբելին 1940 թվին՝ «Синхронические таблицы для перевода исторических дат по Хиджре на европейское летосчисление» խորագրով։

67. Գարեգին կաթ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 185։

68. Լուսնային տարվա մանրամասն հաշվումները տե՛ս F. K. Ginzel, «Handbuch der Mathematischen und technischen Chronologie, Leipzig. 1906, p. 368—372.

### Ա. ԼՈՒՍՆԱՅԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱ ՑԻԿԼԵՐԻ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ

(Սկսած 0-րդ դարի վերջին օրից)

| | | |
|---|---|---|
| 30 — 18863 | 510 — 188959 | 990 — 359055 |
| 60 — 29494 | 540 — 199590 | 1020 — 369686 |
| 90 — 40125 | 570 — 210221 | 1050 — 380317 |
| 120 — 50756 | 600 — 220852 | 1080 — 390948 |
| 150 — 61387 | 630 — 231483 | 1110 — 401579 |
| 180 — 72018 | 660 — 242114 | 1140 — 412210 |
| 210 — 82649 | 690 — 252745 | 1170 — 422841 |
| 240 — 93280 | 720 — 263376 | 1200 — 433472 |
| 270 — 103911 | 750 — 274007 | 1230 — 444103 |
| 300 — 114542 | 780 — 284638 | 1260 — 454734 |
| 330 — 125173 | 810 — 295269 | 1290 — 465365 |
| 360 — 135804 | 840 — 305900 | 1320 — 475996 |
| 390 — 146435 | 870 — 316531 | 1350 — 486627 |
| 420 — 157066 | 900 — 327162 | 1380 — 497258 |
| 450 — 167697 | 930 — 337793 | 1410 — 507889 |
| 480 — 178328 | 960 — 348424 | 1440 — 518520 |

### Բ. ԼՈՒՍՆԱՅԻՆ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ 30 ՑԻԿԼԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԱՐՎԱ ՍԿԶԲՈՒՄ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 — 0 | 8 — 2481 | 15 — 4961 | 22 — 7442 | 29 — 9922 |
| 2 — 354 | 9 — 2835 | 16 — 5315 | 23 — 7796 | 30 — 10277 |
| 3 — 709 | 10 — 3189 | 17 — 5670 | 24 — 8150 | |
| 4 — 1063 | 11 — 3544 | 18 — 6024 | 25 — 8505 | |
| 5 — 1417 | 12 — 3898 | 19 — 6379 | 26 — 8859 | |
| 6 — 1772 | 13 — 4252 | 20 — 6733 | 27 — 9214 | |
| 7 — 2126 | 14 — 4607 | 21 — 7087 | 28 — 9568 | |

### Գ. ԱՄԻՍՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ ԼՈՒՍՆԱԿԱՆ ՏՈՄԱՐԻ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| I<br>Մուհառամ<br>0 | II<br>Սաֆար<br>30 | III<br>Ռաբի I<br>59 | IV<br>Ռաբի II<br>89 | V<br>Ջումադա I<br>118 | VI<br>Ջումադա II<br>148 |
| VII<br>Ռաջաբ<br>177 | VIII<br>Շաբան<br>207 | IX<br>Ռամազան<br>236 | X<br>Շավալ<br>266 | XI<br>Զուլքադա<br>295 | XII<br>Զուլհիջա<br>325 |

### Դ. ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ԴԱՐԵՐՈՎ

(6-րդ դարից մինչև 22-րդ դարի սկիզբը)

| | |
|---|---|
| 600 — 0 | 1400 — 292200 |
| 700 — 36525 | 1500 — 328725 |
| 800 — 73050 | 1600 — 365240 |
| 900 — 109575 | 1700 — 401764 |
| 1000 — 146100 | 1800 — 438288 |
| 1100 — 182625 | 1900 — 474812 |
| 1200 — 219150 | 2000 — 511337 |
| 1300 — 255675 | 2100 — 547861 |

### Ե. ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ ՔԱՌԱՄՅԱԿՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ

| | | |
|---|---|---|
| 4 — 1461 | 36 — 13149 | 68 — 24837 |
| 8 — 2922 | 40 — 14610 | 72 — 26298 |
| 12 — 4383 | 44 — 16071 | 76 — 27759 |
| 16 — 5844 | 48 — 17532 | 80 — 29220 |
| 20 — 7305 | 52 — 18993 | 84 — 30681 |
| 24 — 8766 | 56 — 20454 | 88 — 32142 |
| 28 — 10227 | 60 — 21915 | 92 — 33603 |
| 32 — 11688 | 64 — 23376 | 96 — 35064 |

### Զ. ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՄՍՎԱ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ[69]

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 0 | 0 | 31 | 60 | 91 | 121 | 152 | 182 | 213 | 244 | 274 | 305 | 335 |
| 1 | 366 | 397 | 425 | 456 | 486 | 517 | 547 | 578 | 609 | 639 | 670 | 700 |
| 2 | 731 | 762 | 790 | 821 | 851 | 882 | 912 | 943 | 974 | 1004 | 1035 | 1065 |
| 3 | 1096 | 1127 | 1155 | 1186 | 1216 | 1247 | 1277 | 1308 | 1339 | 1369 | 1400 | 1430 |

## Է. ՎՐԱՑ ՔՐՈՆԻԿՈՆԻ ԹՎԱԿԱՆԸ

*Հայ ժողովրդի պատմության թարգմանական սկզբնաղբյուրներում մեկ-մեկ պատահում են վրաց քրոնիկոնի մեծ և փոքր թվականների գործածության։*

*Վրաց քրոնիկոնի մեծ թվականը մեր ներկա թվականին վեր ածելու աշխատանքը բարդ չէ—արված թվին պիտի ավելացնել 780։ Բերենք օրինակներ.*

*«Քրոնիկոնի 343-ին [Դավիթ] Շինողն Անի քաղաքը խլեց Ալփասլանից և կոտորեց նրանց»[70]։ Դեպքը տեղի է ունեցել մեր ներկա թվականի 1123-ին, որովհետև քրոնի-*

69. 1582 թվի հոկտեմբերի 15-ից մինչև 1599 թիվը ներառյալ օրերի թիվը պիտի պակասեցվի 10 օրով։ Նույնպես դարերի համար (1700, 1800, 1900, 2100) վերջին աղյուսակների օրերը պիտի ավելացնել 1 օրով։

70. Լ. Մելիքսեթ-բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան, 1946 թ., էջ 87։

կանի 343-ին պիտի գումարենք 780 և հավասար կլինի 1123-ի։

«[Գեորգին] գրավեց Անին... թվականին երեք հարյուր ութսունին, ձեռնարկությամբ Աս-գուխին»[71]։ Դեպքը տեղի է ունեցել մեր ներկա թվականի 1160-ին (380+780=1160)։

Վրաց քրոնիկոնի փոքր թվականը մեր ամենայն համար պետք է թվականին ավելացվում է 1312 (այսինքն՝ տարիների 780-ի վրա ավելացված 532-ի նոր շրջանը՝ 780+532=1312)։ Բերենք երկու օրինակ.

«Շահ Իսմայելի որդի շահ Թահմազն իր հորից հետո թագավոր նստեց քրոնիկոնի 190 թվին»[72]։ Քրոնիկոնի փոքր թվականով 190-ը համապատասխանում է 1502-ի (190+1312=1502)։

Սուլթան Մուրադ խոնդքարի գալը և Երևանի բերդի գրավումը տեղի է ունեցել քրոնիկոնի 325-ին»[73]։ Քրոնիկոնի փոքր թվականով 325-ը համապատասխանում է 1637-ի (325+1312=1637)։

## 9. ԻՆԴԻԿՏԻՈՆԻ ԹՎԱԿԱՆԸ

Ինդիկտիոնը 15 տարվա մի շրջան է և հայկական ձեռագրերում գիտավորապես գործ է ածվում ժամկոչեր հիշատակարաններում։ Որպես թվական սկսվում է գործածվել 313 թվից—առաջին ինդիկտիոնը սկսվում է 313-ից և վերջանում 327 թվին, իսկ 328-ին սկսվում է երկրորդը, և այսպես, 15-ական տարով շարունակ հաջորդաբար։ Ինդիկտիոնի տարին սկսվում է սեպտեմբերի 24-ից։ Ինդիկտիոնը որպես թվական գործածվելիս հիշվում է՝ թե քանի-երորդ ինդիկտիոնն է և ինդիկտիոնի քանի-երորդ տարին է։

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 906 ձեռագիրը, որ պարունակում է Ավետարանի ճառերը, ընդօրինակված է «ի[ն]դիկտիոնին հասնող յերեքտասաներորդ ամին, ի թագաւորութեանն Մոնոմախա[յ] կայսեր, իսկ մեր յաստորութեանս ևթն հարիւր և քառասուն և Դ, ի կատարածին ժամանակի հազար քառասուն և Ե»[74]։ Ձեռագիրը գրվել է 1045 թվին, իսկ 1045-ին իրոք գահակալել է Կոստանդիանոս Մոնոմախը և այդ թվին, իրոք, ինդիկտիոնի 13-ն է հանդիսացել[75]։ Լուսավորչի թվականն էլ համապատասխանում է այս թվականին, եթե հաշվենք 300 (300+745=1045)։

## 10. ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԹՎԱԿԱՆԸ

Ժամանակագրության և գրչագրերի մեջ, մանավանդ տոմարական աշխատություններում և չափածո հիշատակարաններում, հաճախ գործ է ածվում Հոբելյան թվականը, որ հավասար է 50 տարվա շրջանի։

Առաքելոս գրիչը Տիգրանակերտում իր ընդօրինակած ձեռագրի թվականը հիշում է.

«Ծաղկեցաւ գիրս սորա
Ի թվականիս մեր Հայկազնեաց
Քսան և մեկ յոբելինեաւ,
Եւ ութ թիւ յաւել վերայ»[76]։

Հոբելյանն ընդունելով 50 տարվա շրջան, Առաքելոս գրչի ձեռագիրն ընդօրինակված է լինում 1609 թվականին (21×50+8+551=1609)։

Թեոդորոս գրիչը Կարինում ընդօրինակած իր ձեռագրի թվականը հայտնում է հետևյալ չափածո տողերում.

«Այս հրաշափառ ձեռի տառիս,
Բեզ երանի՛ թէ հանդիպիս։
Արդ գիս յիշեա զմեղաւոր հոգիս
Զթէոդորոս զծառ տառիս,
Հազար, հարիր, յոբելեանիս.
Տասն և հինգ թիւ այլ ի նոյն յեղիս»[77]։

Ձեռագրի գրչության թվականն է 1716 (1000+100+50+15+551=1716)։

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 8 ձեռագրի թվականը կազմված է ինը հարյուրից, «վեց յոբելից և «քսան թիւ յաւել—ից»[78]։ Ձեռագրի թվականն է 1771 (900+50×6+20+551=1771)։

Փարիզի Ազգային Մատենադարանի հայկական բաժնի № 61 ձեռագիրը, որ բովանդակությամբ մաշտոց է, Խաչիկ Կաֆայեցի՝

---

71. Լ. Մելիքսեթ-բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, էջ 19։
72. Նույնը, էջ 110։
73. Նույնը, էջ 111։
74. Գարեգին եպ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 211։
75. Gardthausen, էջ 41։
76. Հայկական ՍՍՌ Պետ. Մատեն.-ի ձեռ. № 1941, թ. 125ա։
77. Հայկական ՍՍՌ Պետ. Մատեն.-ի ձեռ. № 8159, թ. 157բ։
78. Հայկական ՍՍՌ Պետ. Մատեն.-ի ձեռ. № 8, թ. 136բ։

գրել է «...ի թուականութեանս հայազուն սեռի և յաբեթական տումարի քսան և երկու յոբելինի, և միակ եւթն և տասնեկի. ի հայրապետութեան Տեառն Յակոբայ սրբազան կաթողիկոսի...»[79]։ Ձեռագիրը մեր ներկա թվահաշվով գրված է՝ 22 յոբելյան, նրան գումարած 17 և 551 (1100 + 17 + 551) հավասար է 1668-ի։

## II. ՖՂՈՍԻ, ՖԻՆՈՍԻ, ԲԵՍԵՔՍՏՈՆԻ ԵՎ ՕԼԻՄՊԻԱԴԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

«Ֆղոս» բառը գործ է ածվել ութ տարվա շրջանի համար (տե՛ս Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար», էջ 70)։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 2381 ձեռագիրը, որ բովանդակությամբ քերականություն է, ունի Ղուկաս գրչի հետևյալ հիշատակարանը.

«Եթէ կամիս ըզթվականն,
Կալ և հաշուեա զքսան յոբելեան,
Երկ եռակի ընդ երկոտասանս»[80]։

Քերականությունը գրված է 1631 թվականին (20×50 + 2×3×10 + 8 + 12 = 1080 + 551 = 1631)։

Որ իրոք այստեղ «ֆղոս»-ը ութ տարվա շրջանի համար գործ է ածված և թվականի վերծանությունը ճիշտ է, այդ կարելի է տեսնել նույն հիշատակարանի մի այլ հատվածից. «Ի թիւս շրջագայութեան Հայկազեան մեծ տումարի հազար և ութսուն գծագրեցաւ և յանկ ելեալ կատարեցաւ տառս իմաստութեանս։

Պրոֆ. Ն. Ադոնցը իր «Дионисий Фракийский и арм. его толкователи» աշխատության մեջ բերել է այս քառյակը և փորձել վերծանել թվականը, բայց չհասկանալով ֆղոս բառի իմաստը, կարծել է, որ դա աղավաղված բառ է, առաջարկելով ուղղել Բ Դ-ով, այսինքն 2×4 («Ֆղոսն, повидимому,— գրել է նա,— неверное чтение вместо Բ Դ-ն, т. е. 2 и 4 = 8»[81]։

«Ֆինոս»-ը գործ է ածվել հինգ տարվա շրջանի համար, «բեսեքստոն»-ը՝ յոթ տարվա և «ոլիմպիադ»-ը՝ չորս տարվա շրջանի համար։

Պրոֆ. Ն. Ադոնցը իր վերև հիշված աշխատության մեջ բերել է ձեռագիր քերականության հետևյալ հիշատակարանը.

«Ցամի երեսներորդի երկրորդերորդի յոբելեանի, միոյ բեսեքիստոնի, մին ոդիմպիադի թուաբերութեան ժամանակի մարդեղութեանն Փրկչի, նաև ըստ համարոյ Յաբեթականին տումարի հարիւր երեսուն և երկու ֆղոսի. երկրորդին ամի նոյն սկիզբն և կատարումն գրի, որ է տումար և քերական...»[82]։

Չկարողանալով վերծանել ճիշտ թվականը, պրոֆ. Ն. Ադոնցը հետևյալ ծանոթությունն է տվել.

«Имеется запись писца Якова с указанием даты, но к сожалению, указание это так нескладно и непонятно, что вопрос о дате остается под большим сомнением»[83]։

Գիտական աննշան ուղղումներից հետո հիշատակարանի թվականը վերծանվում է. «Երեսներորդի երկրորդի յոբելեանի (32×50 = 1600 թ.) + «մին բեսեքիստոնի» (5) + «մին ոդիմպիադ» (4) = քրիստոնեական կամ, ինչպես ասված է՝ «մարդեղութեան» 1609 թվականը։ Այդ նույնը հայկական թվականով է ըստ համարոյ Յաբեթականին տումարի՝ «երեսուն և երկու ֆղոսի» (32×8 = 1056) + «երկրորդ ամին» (2) + 551 = 1609։

Չափածո գրականության մեջ և կամ տոմարական տեքստերում ՇԼԲ (532) տարիների շրջանի համար գործ է ածվում կրճատ՝ «Շ-եակ» ձևով, երկու դեպքում էլ պետք է հաշվել 532։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 3390 ձեռագրի ավարտման թվականը Ստեփանոս գրիչը հայտնում է հետևյալ ծածկագիր քառյակով.

«Թիւ գրգուկիս աւարտեցման,
Զոյգ շրջանիկ եզ յոբելեան,
Ու մակ եռակ քառապատկեան,
Քառիկ դարձեալ և մու քըսան»[84]։

Այս ծածկագիր թվականը վերծանվում է հետևյալ ձևով. 532×2 (զույգ շրջանիկ) + 50 (եզ յոբելեան) + 3×4 (մակ—վերան) (եռակ քառապատկեան) + 4 (քառիկ դարձեալ) + 20 (և մու քսան) = 1150 + 551 = 1701։ (Նույնը տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2355, թ. 107բ)։

---

79. F. Macler, Catalogue des manuscrits arméniens et géorgiens. 1908, p. 30.

80. Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 2381, թ. 243ա։

81. Н. Адонц, «Дионисий Фракийский и армянские его толкователи», СПБ, 1915, стр. X.

82. Նույն տեղում, էջ XXIV։

83. Նույն տեղում, նույն էջը։

84. Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 3390, թ. 126բ։



Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՇԽՄՈՒՐԱՏԻ ՎԱՆՔԸ

## ՃԱՄՓՈՐԴԻ ՆՈԹԵՐ

### § 1

*Պատմական անցյալին վերաբերող հուշարձաններով հարուստ անկյուններից մեկն է մեր երկրում Շամշադինի շրջանի Հասան-ջուր (Հասան-սու) գետակի հովիտը, որը նեղ շերտով ձգվում է հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք։ Զանազան տիպի հուշարձաններից հատկապես գյուղատեղերի շատությամբ աչքի է ընկնում գետակի վերին հոսանքը, որտեղ գետակի աջ ու ձախ ափերին, սկսած Մրղուզ սարի լանջերից մինչև Ծաղկավան գյուղը (նախկին Վերի գյուղ), մի ժամանակ եղել են քանից ավելի գյուղեր իրենց եկեղեցիներով, գերեզմանոցներով և այլն։ Այդ գյուղերից մի մասի ավերակները կամ դրանց մնացորդներն են միայն մնացել այդ ձորի անտառապատ լանջերին, իսկ մյուս մասի լոկ անունը՝ պահպանված տեղացիների հիշողության մեջ։*

*Ահա այդ երբեմնի խիտ բնակչություն ունեցող երկրամասում, ժամանակի ու բնության քայքայիչ հարվածներին քիչ թե շատ դիմացած, երկու վանքեր կան, մեկը ձորի խորքում, իսկ մյուսը՝ սարալանջին։ Դրանք Շխմուրատի և Կապտավանի վանքերն են։ Թեև այդ երկու վանքերն էլ մեր նշանավոր վանքերի թվին չեն պատկանում և շատ քիչ են այցելվում, սակայն մեր երկրի ու ժողովրդի անցյալի պատմության, ճարտարապետության ու շինարվեստի ուսումնասիրության համար կարևոր հուշարձաններ են։*

*Այս հոդվածով նպատակ ունենք ընթերցողներին ծանոթացնելու հիշյալ վանքերից առաջինի՝ Շխմուրատի վանքի հետ։*

*Ճանապարհը Հասան-ջուր գետակի հովտով, Պառավաքար գյուղի վրայով մինչև Հախում գյուղը, արդեն ծանոթ է «Էջմիածին» ամսագրի ընթերցողներին, Անապատ կամ Նոր-Վարագա վանքի նկարագրությունից[1]։*

*Հախումից 2,5—3 կիլոմետր հեռու, ձորի վեր, գտնվում է Ծաղկավան գյուղը, իսկ դրանից մոտ 6 կիլոմետրի վրա, դեպի հարավ-արևմուտք՝ Շխմուրատի վանքը։*

*Ճանապարհը Հախումից Ծաղկավան և այնտեղից մինչև վանքը շարունակ ընթանում է գետակին զուգահեռ, դրա ձախ ափով և որևէ դժվարություն չունի, և կարելի է ավտոմեքենայով գնալ։*

*Ծաղկավանից այն կողմ, մեկ կիլոմետր հեռավորության վրա, Մրղուզ գագաթից ձգվող ձախափնյա լեռնաշղթայից մի անտառապատ լեռնաբազուկ իջնում է դեպի գետակը և փակում հովտի բերանը։ Այդտեղից դեպի վանքը տանող ճանապարհը ճյուղավորվում է։ Հին ճանապարհը, որն ավելի կարճ է, բայց դժվարանցանելի, կտրում անցնում է լեռնաբազուկը և իջնում ձորը՝ վանքի մոտերքում, իսկ նոր ճանապարհը գետակի ափով շրջանցում է այդ լեռնաբազուկը և ձորի հատակով թեթևակի բարձրանում դեպի վեր, անտառի միջով։*

*Գնալով ձորակը մտնում է կուսական թավուտներով ծածկված, ամպամերձ բարձրություններից գահավեժ իջնող լեռների հանգույցին։ Ճանապարհի ստվերոտ ոլորանների միջից անակնկալ դեմդ է ելնում ահռելի բարձրություն ունեցող մի հսկա քարաժայռ*

[1] «Էջմիածին» ամսագիր, 1952 թ., սեպտեմբեր-հոկտեմբեր համարներում։

և փակում ձորի բերանը, միայն մի նեղ ձորը թողնելով վերևից սրընթաց իջնող գետակի համար։ Այդ քարաժայռի ստորոտում, գետակի ձախափնյա բարձրության վրա Շխմուրատի վանքն է տեղավորված։ Շինված լինելով ցեղնագույն կրաքարից, վանքը իր պարզ ու գրավիչ արտաքինով, յուրահատուկ հրապույր ու ջերմություն է տալիս շրջակա բնության խիստ ու անհարկու տեսարանին։

§ 2

Այն փոքրիկ հարթությունը, որի վրա կառուցված է վանքը, նեղ շերտով ձգվում է արևմուտքից արևելք։ Դրա բնական սահմաններն են կազմում արևմուտքից՝ հսկա, աշտարակաձև քարափը, հյուսիսից՝ խիստ թեքությամբ իջնող սարի ստորոտով անցնող ճանապարհը, հարավից՝ քարափի գլխացի ձորակը, իսկ արևելքից՝ գետակի ձորը, որը նույնպես խորն ընկած է դժվարամատչելի, ծառերով ու մացառներով ծածկված ափերով։

Վանքը համեստ չափեր ունեցող չորս շենքերի միաձույլ մի ամբողջություն է։ Առաջին իսկ թեթևակի ակնարկից երևում է, որ այդ հուշարձանների կառուցողները նպատակ չեն ունեցել որևէ բանով մարդկանց զարմացնելու, կամ դրանցով պարծենալու։ Ամեն ինչ այդտեղ զուսպ է, պարզ, և հենց այդ պարզությամբ ու անպաճույճ արտաքինով գրավիչ։

Հուշարձանների այս խումբը հետևյալ շենքերից է բաղկացած. եկեղեցին, դրան կից՝ արևմուտքից՝ ժամատունը, հարավից՝ գավիթը, և եկեղեցու ու գավթի միացման անկյունում՝ «Խորանիկ» կոչված շենքը։

Առաջին երեք՝ գլխավոր՝ շենքերն էլ սրբատաշ քարից են շինված, իսկ «Խորանիկ»-ը՝ անտաշ և կիսատաշ քարերից, կրով ծեփված։

Բացի այս շենքերից, վանքն ունեցել է նաև օժանդակ շենքեր, միաբանության համար բնակարաններ, պարիսպ և այլն, սակայն դրանցից միայն քարակույտեր են մնացել՝ վանքի արևելյան կողմում։

§ 3

Այժմ աշխատենք համառոտակի նկարագրել հիշյալ չորս շենքերը, առանձին-առանձին։

ա) Եկեղեցին, որը գլխավոր և տիրապետող շենքն է վանքի մեջ, հատակագծով երկարավուն քառակուսի է, երկարությամբ (դրսից) 8,30 մ., լայնքը՝ 6,55 մ.։ Պատերի հաստությունը 65—70 սմ. է։ Արևելյան ճակատում, արսիդի և դրան կից գտնվող խորանների (ավանդատների) միացման գծի վրա, պատի մեջ կան երկու եռանկյունաձև խորշեր, որոնց կողերը պատի խորքում միանում են կիսաշրջանաձև գոգավորությամբ։ Ինչպես այդ գոգավորության ծայրերին, նույնպես և խորշերի արտաքին անկյուններում, վերից վար իջնող զույգ անկյունավոր կորվածքների մեջ տեղավորված են մեկական գլաններ։ Ահա այդ խորշերն իրենց համեստ, բայց ճաշակով կատարված ձևավորությամբ, եկեղեցու շենքի միակ զարդարանքն են կազմում՝ դրսից։ Տանիքի խաչաձև դասավորված սրահների կենտրոնում ութ կողանի գմբեթն է բարձրանում։ Գմբեթի վեղարի և սրահների երեսպատ սալերը թափված են, վեղարինն ամբողջովին, իսկ սրահներինը մասամբ, տեղ-տեղ թափված են նաև գմբեթի թմբուկի և պատերի վերին շարքի քարերը։ Ընդհանուր առմամբ եկեղեցու շենքը, մյուսների համեմատությամբ, ավելի լավ դրության մեջ է։

Ներսից եկեղեցին խաչաձև է. խորն ընկած արսիդի երկու կողմերում կան երկու զույգ երկհարկ փոքրիկ խորաններ։ Վերին հարկի խորանների աստիճաններով բարձրացող մուտքը բեմից է, իսկ ցածի խորաններինը բացվում են եկեղեցու մեջ։

Արսիդի երկու ծայրերին և հյուսիսային ու հարավային պատերին կից դրված մույթերի վրայից բարձրանում են գմբեթակիր կամարները։ Այդ մույթերի արևմտյան զույգը (պատերին կցված) խորանների արևմտյան ճակատից հեռու են 2,28 մ., իսկ եկեղեցու արևմտյան պատից՝ 1,40 մ.։

Բեմը բարձր է և արևելյան զույգ մույթերի (արսիդի ծայրի) գծից դուրս ընկած։

Եկեղեցու լուսավորությունն աղոտ է։ Միակ կարճ ու նեղ (դրսի բացվածքի լայնքը 11—20 սմ.), դեպի ներս լայնացող լուսամուտներ կան գմբեթի չորս գլխավոր ճակատներին, արսիդի և խորանների արևելյան և եկեղեցու հյուսիսային պատերի մեջ։

Եկեղեցին ունի երկու մուտք, որոնցից գլխավորը՝ արևմտյանը՝ բացվում է ժամատան մեջ, իսկ երկրորդը հարավից՝ գավթի մեջ։ Ժամատան մեջ բացվող մուտքը լայն է, բացվածքը եկեղեցու մեջ 1,3 մ., իսկ ժամատան կողմից՝ 3,6 մ., որը բազմաթիվ անկյունավոր կորվածքներով և կիսագլաններով է զարդարված։ Դա եկեղեցու շենքի երկրորդ զարդարանքն է։

բ) Ժամատունը շինված է եկեղեցու արևմտյան պատին կից։ Այդ պատը ծառայում է իբրև արևելյան պատ ժամատան համար։ Դա մի պարզ, իրար համարյա հավասար կողեր ունեցող քառակուսի շենք է, երկարությունը (դրսից) 10,33 մ., իսկ լայնությունը 10,49 մ.։ Տանիքի ծանրությունը կրող կամարները հաստատված են երկու սյուների, եկեղեցու արևմտյան պատին կից դրված երկու մույթե-

րի, ժամատան արևմտյան պատին կից զույգ կիսամույթերի և հյուսիսային ու հարավային պատերի մեջ եղած կարնտակիների վրա: Այդ կարնտակիներն ավելի գեղարվեստական լինելով ու- նեն և թաղի ծանրությունն այդ երկու զույգե- րով, կիսակլոր պատերն են կրում: Զույգ սյունները տեղափոխված են ժամատան բը- յության առանցքին մոտ: Երկրորդ զույգա- նե Թաղը նստած է այդ սյուների և եկեղեցու պատին կից զույգ մույթերի վրայից բարձ- րացող կամարների վրա, այդ պատճառով էլ ժամատան արևելյան կեսն ավելի է լայնա- ցված քան արևմտյանը:

Ժամատան մուտքը տեղափոխված է հարա- վային պատի արևմտյան ծայրին:

Կտուրը ծածկված է հողի հաստ շերտով:

Քանդված են երդիկի բացվածքի վերին շարքերի քարերը և հյուսիս-արևմտյան ան- կյունի Թաղը: Ընդհանրապես տանիքը խար- խուլ դրության մեջ է և փլչելու վտանգի են- թակա:

գ) Գավիթը շինված է եկեղեցու հարավա- յին պատին կից, այդ կողմից բացվող մուտ- քի առաջ: Չափերն են՝ դրսից, երկարությու- նը 7,40 մ., իսկ լայնքը՝ 6,76 մ.: Պատերի արտաքին երեսպատ քարերը Թափված լինե- լու պատճառով ներքին չափերը մոտավոր ճշտությամբ են հաշված: Այս շենքը սկզբնա- կան մի ամբողջական պատ ունի միայն՝ հա- րավայինը: Իսկ հյուսիսային պատ օգտա- գործված է եկեղեցու հարավային պատից 7,40 մ., սկսած դրա արևմտյան ծայրից, իսկ արևմուտքից և արևելքից գավթի սկզբնական պատամասերը շարունակությունն են կազ- մում ժամատան արևելյան պատամասի և «Խորանիկ»-ի արևմտյան պատի:

Գավթի ներսում, արևմտյան և արևելյան պատերին կից դրված են երկուական մույ- թեր, որոնցից հյուսիսային զույգը, որն ավե- լի մեծ չափեր ունի, կցված է եկեղեցու հա- րավային պատին, իսկ հարավային զույգը՝ նույն կողմի պատից քիչ հեռու է տեղադր- ված: Տանիքը հաստատված է եղել այդ մույ- թերի վրայից բարձրացող կամարների վրա: Թե՛ տանիքը և թե՛ կամարներն այժմ քանդ- ված են:

Պատերը քանդված լինելու պատճառով, այժմ դժվար է որոշել, թե գավթի մուտքը որ կողմից է եղել: Թվում է, թե դա պետք է եղած լինի արևմտյան զույգ մույթերի մեջ- տեղից, որովհետև վանքի բակի հատակը միայն այդ կողմից է հավասարվում թե՛ գավ- թի և թե՛ ժամատան հատակներին, իսկ այդ բակը՝ իր հերթին՝ թեև փոքր, բայց վանքի միակ արտաքին բակն է եղել:

դ) «Խորանիկ»-ը կոչված շենքը, որն ավելի ճիշտ մի փոքրիկ մատուռ է եղել, տեղադր- ված է եկեղեցու հարավային պատի արևել- յան ծայրի և գավթի արևելյան պատի միջոցում անկյունում: Դրա չափերը, գա- վթով պատերի պահպանված մասերից, ներ- քուստ եղել է 3,75×1,80 մ.: Արտաքին չա- փերից միայն արևմտյան պատի երկարու- թյունն է որոշ՝ 3,80 մ.:

Այս շենքից մնացել են արևմտյան պատն ամբողջովին, որի մեջ մուտքն է, բացված գավթի ներսից: Հյուսիսային պատը, որը ներկա դրությամբ 3,90 մ. գոյը է բնկած և- կեղեցու արևելյան ճակատի գծից և մի փոք- րիկ կտոր հարավային պատից, կից արև- մտյան պատին: Արևելյան պատն ամբողջո- վին քանդված է: Այս շենքի հյուսիսային պա- տի մերձակցում (ներսից) մնացել է 28 սմ. լայնությամբ կիսամույթ, որի վրա է նստած եղել տանիքի Թաղը զառկող կամարը:

§ 4

Վերջացնելով վանքի շենքերի նկարագրու- թյունը, այժմ անդրադառնանք վանքի ան- վան, շենքերի շինության ժամանակի ու հա- րակից հարցերին:

ա) Վանքի անունը:— Հուշարձաններից այս խումբը մեր գրականության մեջ հայտնի է «Երմոնասար վանք» անունով: Պարզ է, որ այդ անունը չէր կարող վանքի պատմական անունը լինել: Ուսումնասիրելով հին բանա- ստեղծների տված տեղեկությունները այս վան- քի մասին, մեր ուշադրությունը գրավեց Մա- կար եպիսկոպոս Բարխուդարյանի հետևյալ հիշատակությունը «Արցախ»-ի 336 էջում[1]: «Վանքիս արևելյան կողմում, ոչ այնքան հե- ռի, կա գյուղատեղի և հանգստարան Երմոնա- սար անունով: Բազմաչխատ քանդակեր հի- նած գյուղատեղի հետքերը մինչև մեր օրերն էլ մնացել են, բայց աննկատելի դրությամբ: Ճարտարապետական հուշարձանների պա- հպանության կոմիտեի հին քարտերում պա- հված տեղեկություններից երևում է, որ այդ տեղում, սրանից 18—20 տարի առաջ, եղել են տների, եկեղեցիների և գերեզմանների հետքեր 12—17 դարերից: Այդ գյուղատեղում հայտնաբերվել են Թոնիրներ, պղնձե ամա- ններ և այլն: Բացի այդ, նույն աղբյուրից քաղված տեղեկությունների համաձայն, վան- քի արևմտյան կողմում գտնվող սարալանջին եղած ավերակ ամրոցը կոչվել է «Երմոնասա- ր», որը հայտնի է և «Խաչենաբերդ» անունով:

Այսպիսով պարզվում է, որ «Երմոնասար»-ը թե վանքի անունն է, այլ նրա շրջակա բնակավայրի, որի անունով և կոչել են վան- քը, որը մի սովորական երևույթ է մեր վանքերից շատերի համար:

1. Մակար եպիսկոպոս Բարխուդարյանց, «Արցախ», Բաքու, 1895 թ.:

*Իսկ թե ինչ է եղել այս վանքի պատմական անունը, այդ մասին նույն բանասեր Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը իր «Պատմություն Աղվանից աշխարհի» աշխատության 188 էջի 1 ծանոթագրության մեջ ենթադրում է՝ «Գուցե անուն «Գետակից» անունն եղած լիներ», որտեղ, ըստ նույնի, կրոնավորել է Կյուրիկյան վերջին Աղսարթանը: Թեև դա լոկ ենթադրություն է, սակայն հավանական ենթադրություն, մանավանդ եթե նկատի ունենանք «Գետակից» անվան պատշաճությունն այդ հուշարձանին, ըստ տեղագրության:*

*Վանքի անվան մասին հիշատակություն կա նրա վիմագրության մեջ երեք տեղում, մեր համարակալությամբ №№ 2, 3 և 15 արձանագրություններում, որից երևում է, որ հուշարձանները կոչվելիս են եղել «Աստվածածնի» անունով:*

*Նկատի ունենալով վերոհիշյալները, մեր կարծիքով, ճիշտ կլինի հուշարձանների այդ խումբն անվանել «Շխմուրատի Աստվածածնի անվան վանք»:*

*բ)* Շինության ժամանակը և շինողները:— *Պատմագետ ճարտարապետներին թողնելով վանքի հուշարձաններից յուրաքանչյուրի շինության ճիշտ ժամանակաշրջանը որոշելու հարցի վերջնական լուծումը, այստեղ համառոտակի կամփոփենք հիշյալ հարցի առթիվ մեր անձնական դիտողությունները:*

*Մեր պատմագիրները, որքան գիտենք, որևէ հիշատակություն չունեն այս վանքի շինության մասին:*

*Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի քարտերում վանքի շինության թվականը գրված է 1181 թիվը, իսկ թե ինչով է հիմնավորված այդ՝ պարզ չէ: Թվում է, թե Կոմիտեն այդ թվականը քաղել է բանասեր Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի «Արցախ»-ի 335 էջում գրված 1 ծանոթությունից*[3]*, որտեղ գտնում ենք թե՛ այդ թվականը և թե՛ դրա հիմնավորումը, որը կատարված է սխալ հաշվարկումով: Բարխուդարյանը, հիմք ունենալով հուշարձանների խմբից «Խորանիկ»-ի մուտքի ճակատաքարի արձանագրությունը, որտեղ այդ շենքի շինարարությունը գրված է «նորս շրջապայիս», այսինքն «Նոր» կամ «Փոքր» թվականի (Հովհաննես Սարկավագի) ԿԵ թվին, մեր թվականությամբ դուրս է բերում 1181 թվականը, «Նոր» կամ «Փոքր» թվականի սկիզբը հաշվելով 1116 թվին: Իհարկե այդ հաշվումը սխալ է, որը մի այլ տեղ՝ «Պատմություն Աղվանից աշխարհի» աշխատության 180—181 էջերում, հենց ինքը՝ բանասերը՝ ուղղում է, Սարկավագադիր թվականի սկիզբը հաշվելով 1085 թվից. նկատի ունենալով պատմագիրներ Կիրակոս Գանձակեցու և Մխիթար Այրիվանեցու հիշատակություններն այս առթիվ:*



ՇԽՄՈՒՐԱՏԻ ՎԱՆՔԸ.— Եկեղեցին հյուսիս-արևմուտքից

*«Նոր» կամ «Փոքր» (Սարկավագադիր) թվականի սկիզբը 1084 թվից է, որով Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի ուղղումը մի տարվա տարբերությամբ ճշտվում է, մի բան, որը անտես է արել Կոմիտեն:*

*Ինչպես տեսնում ենք, այս հուշարձանների շինության ժամանակը որոշելու համար, այլ աղբյուր կամ հիմք չունենալով, բանասեր Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը դիմել է հուշարձաններում պահված տվյալներին, որը նման դեպքերում միակ ճիշտ ձևն է այս հարցի լուծման գործում, ուստի մենք ևս հետևենք նրա օրինակին:*

*Վանքի վիմագրության մեջ, դժբախտաբար, թվագրեր քիչ կան՝ ընդամենը 4 հատ: Դրանք հետևյալներն են, ըստ ժամանակագրական կարգի.*

*1. «Խորանիկ»-ի մուտքի ճակատաքարի վրա, «Փոքր» թվականով ԿԵ (65+1084)= 1149 թ.*

---

*3. Տե՛ս մեր № 2 ծանոթությունը:*



ԾԱՂԿՈՏՍԻ ՎԱՆՔ.— Ժամատան հյուսիսային սյունը

2. Եկեղեցու արևելյան ճակատին՝ ՈՂԷ (697+551)=1248 թ.

3. Եկեղեցու արևմտյան մուտքի ճակատաքարի վրա ՉԺԳ (713+551)=1264 թ.

4. Գավթում գտնվող խաչքարի ճակատին ՌԿԸ (1068+551)=1619 թ.։

Այս թվագրություններից վերջինը, որը շենքի վրա չէ, այլ խաչքարի, և ըստ ժամանակի համեմատաբար շատ նոր է, միայն ապացույց է, որ 17-րդ դարի սկզբներին վանքը շեն է եղել, ուստի և մեր առաջադրած հարցի լուծմանը ծառայել չի կարող։

Ըստ ժամանակագրական կարգի, կրկին դառնանք (վերը բերված թվագրությունների կարգով) «Խորանիկ»-ի արձանագրությանը։

Համաձայն այդ արձանագրության (մեր համարակալությամբ № 1) «Խորանիկ»-ը շինել է ոմն Տէր Գրիգոր (հավանաբար քահանա) 1149 թվին, Աստծու մեծ [illegible] հրամանով։

Թեև այդ շենքն առանձին լինելը, կասկածից վեր մնում, բայց քանի որ շինողն այն համարում է խորան, ուրեմն դա պետք է կից եղած լինի մի եկեղեցու։ Այդ եկեղեցին չէր կարող լինել ներկայումս գոյություն ունեցող՝ Աստվածածնի անվան՝ եկեղեցին, որովհետև վերջինս, դատելով դրա ճարտարապետական ոճից և վրան պահված երկու թվագրություններից, ավելի նոր շենք է։ Բացի այդ, այս երկու շենքերի մեջ որևէ օրգանական կապ չկա, ինչպիսին մենք տեսնում ենք եկեղեցու և դրան կից հետագայում ավելացված երկու օժանդակ շենքերի՝ ժամատան և գավթի մեջ։ Տեղադրված լինելով եկեղեցու արևելյան ճակատի գծից շատ մոտ գտնվող՝ գետի ափին, իր դիրքով «Խորանիկ»-ի շենքը ներկայիս եկեղեցու իբրև խորան ծառայել չէր կարող, մանավանդ որ եկեղեցին ունի շատ խորան, որոնք լիովին բավական են համեստ չափեր ունեցող մի տաճարի համար։

«Խորանիկ»-ի արձանագրության 6—9 տողերում Տեր Գրիգորը պատվիրում է. «Որք սպասաւորէք ի սա, գիր զՏէր Գրիգոր և զծնողս իմ յաղօթս յիշեսջիք», որից պետք է եզրակացնել, որ այդ տեղը (ուխտատեղը) սպասավորներ, այսինքն կրոնավորներ, միաբանություն է ունեցել։ Պարզ է, որ միայն մի մատուռի, կամ «Խորանիկ»-ի համար միաբանություն (սպասավորներ) չէր լինի, այլ մի վանքի։

Այս բոլորը նկատի ունենալով, գալիս ենք այն եզրակացության, որ «Խորանիկ»-ի շինության ժամանակ, այդ վանքում մի այլ՝ հին՝ եկեղեցի է եղել, որն այժմ գոյություն չունի։

Հավանաբար այդ եկեղեցին «Խորանիկ»-ի նման մի անշուք շենք է եղել, որը հետագայում, որևէ պատճառով, քանդվել է կամ ավերվել են, թողնելով միայն «Խորանիկ»-ը, իբրև աղոթատեղի, մինչև Նոր եկեղեցու շինության ավարտը. և փոխարենը շինել ներկայիս Աստվածածնի անվան եկեղեցին։ Այս նոր եկեղեցին շինել են ոչ անմիջապես հին եկեղեցու տեղում, այլ ավելի արևմուտք, որով ստացվել է մի ներքին, փոքր բակ, եկեղեցու, «Խորանիկ»-ի, հյուսիսային պարսպի և վանականների բնակարանների միջև։

Ընդունելի լինի մեր վերոհիշյալ ենթադրությունը թե ոչ, իրոք անժխտելի փաստ մնում է այն, որ այս վանքի ներկայումս գոյություն ունեցող շատ շենքերից ամենահինը 1149 թվին շինված «Խորանիկ»-ն է, և որ իրոք՝ վանքը՝ գոյություն է ունեցել այդ թվականից առաջ։

Ժամանակագրական կարգով վերը բերված ցուցակից Աստվածածնի անվան եկեղեցու արևելյան ճակատին խոշոր գրերով փորագրված ՈՂԷ=1248 թվագիրն է։ Չենք կարծում, որ այս թվագիրը եկեղեցու շինության հետ կապ ունի, բայց և չի կարելի

այդ թվականն ընդունել իբրև այդ շենքի շինությունն ավարտելու թվական, որովհետև հակառակ պարագային կգրվեր մի ամբողջ արձանագրություն, որի մեջ կհիշվեր և շինողի անունը։ Քանի որ այդպես չի արված, այդ թվականը պետք է համարել իբրև մի ծանոթություն, որն արված է երկար ժամանակ տևող շինարարական աշխատանքի ընթացքում։ Նման դեպք մենք նկատել ենք նաև Իջևանի շրջանի Դեղձնուտի վանքի գլխավոր եկեղեցու հյուսիսային պատի վրա՝ ներսից[4]։

Այդ թվագրի տեղը (լուսամուտից ցած) ցույց է տալիս, որ 1248 թվին շենքը հազիվ լուսամուտի գծին հասած լիներ, իսկ այդ ծանուցումն անելու փաստը վկայում է, որ շինողը կամ շինողները հույս չեն ունեցել մոտ ժամանակում վերջացնելու գործը, որն ըստ երևույթին շատ է ձգձգվել։

Եկեղեցու գլխավոր (արևմտյան) մուտքի ճակատաքարի վրայի ՉԺԳ թվագիրը (1264 թվականի) թեև շինարարական բնույթի արձանագրության չի վերաբերում, սակայն մի կողմնակի ապացույց է եկեղեցու շինության ավարտելուն։ Այս ենթադրությունը հաստատելուն իբրև փաստ կարող է ծառայել այն հանգամանքը, որ վանքի, հատկապես եկեղեցու վիմագրության մեջ շինողի կամ շինողների մասին որևէ հիշատակություն չկա, բացառությամբ «Խորանիկս»-ի արձանագրության, որը, ինչպես տեսանք, վանքի շինարարության նախնական շրջանին է վերաբերում։ Թվում է, թե դրա պատճառը կարող էր լինել միայն այն, որ ձգձգված շինարարության ընթացքում մի քանի շինողներ հաջորդել են իրար, որոնցից առաջինը, բացի ՈՂԷ թվագրից, որևէ այլ բան չի հիշատակել, շինարարությունը վերջացած չլինելու պատճառով, իսկ վերջինը, այսինքն կառուցումն ավարտողը պարզապես վլացել է իր նախորդների հիշատակը հավերժացնել, որը ստիպված կլիներ անել շինարարական արձանագրություն փորագրելու դեպքում։

Մեր կարծիքով եկեղեցու շինարարությունը տևել է շուրջ 20 տարի, որն այնքան էլ բացառիկ մի երևույթ չէ, և վերջացել է 1264 թվին, կամ դրանից մեկ կամ երկու տարի առաջ։ Իսկ թե ովքեր են եղել շինողները, դրա մասին որոշ բան ասել չի կարելի, բացի այն ենթադրությունից, որ դրանք եղել են վանքի իրար հաջորդող վանահայրերը, որոնք այդ աշխատանքը կատարել են ուխտավորների նվիրատվություններով կամ այլ եկամուտներով։ Եթե որևէ իշխան կամ ունևոր մեկը շինած լիներ այդ եկեղեցին, նախ՝ համեմատաբար ավելի արագ կկատարվեր այդ աշխատանքը, և երկրորդ՝ շինողն անպայման իր անունը փորագրել կտար որևէ աչքի ընկնող տեղում։

Վանքի մյուս երկու շենքերի, այսինքն ժամատան և գավթի շինարարության ժամանակի մասին որևէ հիշատակություն չլինելու, կամ եղած սակավաթիվ արձանագրությունները (ժամատանը) առանց թվագրերի լինելու պատճառով, միայն այն կարելի է ասել, որ դրանք երկուսն էլ շինված են Աստվածածնի անվան եկեղեցին շինելուց որոշ ժամանակ հետո, այն էլ ոչ միաժամանակ, այլ հաջորդաբար և ընդմիջումներով, որովհետև, ինչպես նկարագրական բաժնում հիշել ենք, ժամատունը կցված է եկեղեցուն, իսկ գավիթը՝ եկեղեցուն և ժամատանը։ Իսկ թե որքան են տևել դրանցից յուրաքանչյուրի շինարարությունը և ընդմիջումները՝ դժվար է ասել։ Ընդունելով, որ այդ վանքում շինարարական աշխատանքի պայմանները եկեղեցու շենքն ավարտելուց հետո էլ նույնն են մնացել, ժամատան շինությունը կընկնի 13-րդ դարի վերջին, իսկ գավիթը՝ 14-րդ դարի սկզբին։

Իհարկե, վերոհիշյալ եզրակացությունների զգալի մասն արվում է ենթադրաբար, որոնց հաստատումը կամ հերքումը կկատարվի մասնագիտական մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո։ Մնում է հուսալ, որ մեր պատմագետ ճարտարապետները կզբաղվեն այս ուշադրավ, իր պարզությամբ գեղեցիկ և դժբախտաբար հեռավորության պատճառով քիչ այցելվող հուշարձանների խմբով, որը հետաքրքիր և գրավիչ այցի տեղ է նաև մեր երկրի գեղեցիկ վայրերով հետաքրքրվող տուրիստների համար։

## ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծիմուրատի վանքի վիմագրությունն այնքան էլ հարուստ չէ։ Պահպանված արձանագրությունների թիվը 15 հատ է։ Դրանցից բացի մի երկու տեղ կան արձանագրության հետքեր, որոնք մենք չենք բերում այստեղ, որովհետև պահպանված գրերից որևէ իմաստ չի ստացվում։ Արձանագրությունների մի մասը հողմահարված է։ Որոշ դեպքերում, ըստ իմաստի կամ ենթադրաբար մենք լրացրել ենք այդպիսի տեղերը անկյունավոր փակագծերի մեջ, դրա մասին հիշելով ծանոթություններում։ Կարևոր տեղերում սովորական փակագծերի մեջ դրել ենք բնագրում բաց թողնված գրերը կամ բառամասերը։

Այն արձանագրությունները, որոնք առաջին անգամ են հրատարակվում, նշված են աստղանիշով՝ համարների դիմաց։

4. Տե՛ս «Էջմիածին» ամսագրի 1953 թվականի ապրիլ ամսվա համարի 37 էջի երկրորդ սյունակում։

№ 1. [illegible]

1 ՅԱՄԻ :Կ: ԵՐՈՐԴԻ :Ե: Ե(Ր)ՈՐԴԻ ՆՈՐՍ ԾՐ-
2 ՋԱԳԱԻՍ: ԵՍ Տ̅Ր ԳՐԻԳՈՐ ԾԻՆԵՑԻ ՋԽՈՐԱ-
3 ՆԻԿՍ ԱԾ̅ԱՐՆԱԿ ՀՐԱՄԱՆԱԻ ՍԱՂՈԻԽՈ
4 ՄԵԾԻ ԻՇԽԱՆԻ ՎԱՍՆ ՅԻՇԱՏԱԿԻ Ն(Ն)ՋԵՑ-
5 ԵԼՈՑ ԻԻՐՈՑ ԵԻ ՅԱԻԳՆԱԿԱՆՈԻԹԻ(Ի)Ն ԱՆՁ-
6 ԻՆ ԻԻՐՈ ՈՐՔ ՍՊԱՍԱԻՈՐ(Է)Ք Ի ՍԱ ՋԻՍ ՋՏ̅Ր
7 ԳՐԻԳՈՐ ԵԻ ՋՕՆՈՂՍ ԻՄ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇ-
8 ԵՍՋԻՔ ԸՆԴ ՆՄԻՆ ԵԻ ՋԱՑԼ ԱՇԽԱՏՈՂՍՆ

№ 2. [illegible]

1 ԵՍ ԳՐ(Ի)Գ-
2 ՈՐԷՍ ՄԻԱՅ-
3 ՔԱՆԵՑԱՅ
4 Մ̅Ք ԱԾ̅ԱԾ-
5 ՆԻՄ ԵԻ ՄԻԱՅ-
6 ՔԱՆՔՍ ԷՏՈԻ-
7 Ն ԻՆՁ :Ա: Ժ-
8 ԱՄ ՀԵՐՈՆԻՍ
9 Հ̅Պ ԿԱՏ-
10 ԱՐԻՁ(Ք) ԱԻՐ(ՀՆԻՆ)

[illegible]

№ 3. [illegible]

1 ԵՍ ՍՈԻԼՏԱՄ
2 ԵԻ ԱՄՈԻՍԻՆ ԻՄ Ս(Ի)-
3 ԱՅՔԱՆԵՑԱՔ ԱԾ̅-
4 ԱԾՆԻՍ ՄԻԱՅՔԱ-
5 ՆՔՍ ԵՏՈԻՆ :Բ:
6 |Ժ|ԱՄ Ի ՏԱԻ-
7 |ՆԻ| Ս̅Գ Ս

1. [illegible]
2. [illegible]

№ 4. [illegible]

1 Ս̅Ք ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ: ԳՈԻԼՍԻԼԻՔԻ
2 ՍԱՐԳԻՍԻՆ: Թ̅Վ ՈԿԸ

№ 5. [illegible]

1 ԹՎԿ
2 ՈՂԵ

* № 6. ԽՆԿՂԵՆՈՒ ՆԵՐՍՈՒՄ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ԽՈՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ՎԵՐԵՎՈՒՄ, ՔԱՐԻ ՎՐԱ.

1 Ա ԺԱՄ ԵՂԷԿԱՆ ԴԱՐՊՆԻՆ ՍԱՐՈՆ ԱԼ-
2 ԹՈՒՆ ՍԱՐՈ ԽԱԹՈՒ|ՆԻՆ|

*Այս արձանագրությունը, որը մենք չենք նկատել, վերցված է Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի № 377 գործից։*

ԽՆԿՂԵՆՈՒ ՆԵՐՍՈՒՄ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՑԱԾՐ ԽՈՐԱՆԻ ՄՈՒՏՔԻՑ ՎԵՐԵՎ. ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՓՈՐԱԳՐՎԱԾ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

* № 7. 1 ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏԱԻՆԻՆ :Բ: ԺԱՄ ԻՆԱՅԻՆ ԵԻ ԴԷԴ-
2 ԻՆԻՆ ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ Ի ՏԷ:

* № 8. 1 ԿԱՄԱԻՆ ԱՅ ՍԱՌԱՅՍ ՄԻԱԲԱՆԵՑԱՅ ԵԿ(ԵՂ)ԵՑ-
2 ՈՅՍ ԵՏՈՒՆ ԻՆՋ ՆԱԻԱՍԱՐՈԴԻ :Ա: ԺԱՄ ԿԱՏԱՐԻՉՔ-
3 Ն ԱԻՐՈՒՆԻՆ ՅԱՅ

№ 9. 1 -:- ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ ԴԱՆԻԷԼՍ ԵԻ ԱՅԼ ՄԻԱՅԲԱՆՔ-
2 Ս ԷՏ | ԿԱՔ ՅՍ(Յ)Տ | Ն | ՈՒԹԷ :Բ: | ԺԱՄ ՀԷՇԱՅ
3 ԴԷ | ԴԻՆ ԵԻ | ԱՄՈՒՍՆԻՆ | ՈՎ Խ-
4 ԱՓ | ԱՆԷ ԴԱՏ | Ի | ՅԱՅ

*1. Այս արձանագրության վերջին երեք տողերը փորագրված են երեք խաչերի երկու կողմերին, իսկ երկու գիր՝ կենտրոնական խաչի մեջ։*
*2. Արձանագրության սկզբի տողերի ազատագրված ձևով ունի Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը — «Արցախ», էջ 335։*

* № 10. 1 ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ
2 ՅՈՀ: ՄԻԱԲԱՆԵՑԱ
3 ԵԿԵՂԵՑՈՅՍ: ԵԻ ԵՏ-
4 ՈՒՆ Ի ՏԱԻՆԻ ԱՌԱՔ.
5 ՅՈՀ: ԵԻ ՅԱԿ :Ա: ԺԱՄ
6 ԱՆԽԱՓԱՆ: ԿԱՏԱՐԻՉ-
7 Ք ԱԻՐՈՒՆԻՆ ՅԱՅ

*5-րդ տողում «ԺԱՄ» բառի վրայի «պատիվը» անտեղի է գրված։*

* № 11. 1 Ի ՏԱԻՆ | Ի
2 ԹԷՈԴՈՐ | ՈՍԻ :Ա:
3 ԺԱՄ ՍԷԴԻՆ

● № 12. ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԽՈՐԱՆԻՆ ԿԻՑ ՄՈՒՅԹԻ ՄԵՋ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԱԳՈՒՑՎԱԾ ՆՈՐ ՇԵՐՏՈՎ ՄԻ ԿԱՌՆԱԳՈՒՅՆ ՔԱՐԻ ՉՈՐՍ ՃԱԿԱՏՆԵՐԻՆ, ԸՍՏ ԿԻՍԱՄՈՒԹԻ ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ԿՏՐՎԱԾՔՆԵՐԻ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | ԿԱՄ | ԱԻՆ ԱՅ | ։Ո։ ԴԵ | ԴՍ ՄԻԱ- |
| 2 | ԲԱ\|ՆԵ\| | ՑԱ ԵՏ | ՈԻՆ ՍԲ | ՍԱՐԳ(Ս)- |
| 3 | ԻՆ ․Ա․ | ԺԱՄ ԿԱ | ՏԱՐԻՉ(Ք) | ԱԻՐՀ(Ն)ԻՆ |

*Առաջին տողում «[illegible]» անհասկանալի է, պետք է կարդալ «[illegible]»։*

● № 13. ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ, ԺԱՄԱՏԱՆ ՄԵՋ ԲԱՑՎՈՂ ԴՌԱՆ ՄՈՒՏՔԻ ԽԻՍՏ ՀՈՂՄԱՀԱՐՎԱԾ ՃԱԿԱՏԱՔԱՐԻ ՎՐԱ.

1 Ի ԹՎ ՉԺԳ
2 ՄԵԾ ՅՈԻՍՈՎ ԵՍ ՄԽԻԹԱՐ
3 ԵԻ ԱՄՈԻՍԻՆ ԻՄ ԹՈԻԽԻ ՄԻԱԲ|ԱՆԵՑԱ|Ք
4 ԵԿԵՂԵ|ՑՈՅՍ ՄԻԱ|ԲԱՆՔՍ ԵՏՈԻՆ ԻՆՉ ։Զ։ ԺԱՄ Ի
5 ՏԱԻՆԻ ԱԾԱԾՆԻՆ [ԱՂ]ԲԵՐԱՑԵԼԻՆ ԵԻ ԱՄ-
6 ՈԻՍՆՈ ԻԻՐՈ ՍԱՄԱԻՆ Ի ՏԱԻՆԻ ՍԲ ԽԱՉԻՆ
7 Ա։ ԺԱՄ ՏՐ Տ|ԻՐԱՆ|ԻՆ Ի ՏԱԻՆԻ Ս|Բ|.... ԿԱՏԱՐԻՉՔՆ
8 ԱԻՐՀՆԻՆ ՅԱՅ

*1. Ըստ երևույթին այստեղ երկու տարբեր արձանագրություններ են, միևնույն քարի վրա փորագրված, առանց ընդմիջումների։*

*2. 5—7 տողերի ընդգծված տեղերում քարը խիստ հողմահարված լինելու պատճառով գրերը մասամբ եղծված և մասամբ էլ բոլորովին պակասում են։ Փակագծում են հատկապես «ԱՂԲԵՐԱՑԵԼ» անվան առաջին և «ՏԻՐԱՆ» անվան վերջին վանկերը, սակայն և այդ անունների վերծանությունը արվում է վերապահությամբ։*

*«ԱՂԲԵՐԱՑԵԼ» անունը մեկ պատահում է նաև № 15 արձանագրության մեջ [illegible]։*

● № 14. ԺԱՄԱՏԱՆ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍՅԱՆ ԽՈՅԱԿԻ ՃԱԿԱՏԻՆ.

1 ՅՈԻՍՈՎՆ ԱՅ ԳԷՇՄԱՐԴՍ |ՄԻԱԲ|-
2 ԱՆԵՑԱ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՄԻԱԲ-
3 ԱՆՔ ԷՏՈԻՆ ԻՆՉ ։Ա։ ԺԱՄ ՍԲ ՅԱԿՈ[ԲԻՆ] | ՔԱՄԷՆ ԵԿԵՂԵՑ
4 ԿԱՏԱՐԻՉՔ ԱԻՐՀՆ[ԻՆ] | ԻՔ

*Արձանագրությունը հիմնականում փորագրված է խոյակի հարավային ճակատին, իսկ 3—4 տողերի վերջին մասը, որ ուղղահայաց գծով անջատված է՝ արևելյան ճակատին։*

● № 15. ԺԱՄԱՏԱՆ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄՈՒՅԹԻ ՎՐԱ ՆՍՏԱԾ ԿԱՄԱՐԻ ՈՏՔԻ ԵՎ ՄՈՒՅԹԻ ԽՈՅԱԿԻ ՃԱԿԱՏԻՆ (եկեղեցու մուտքին կից՝ ձախակողմ).

1 ՅՈԻՍ[Ո]ՎՆ ԱՅ ԱՂԲԷՐԱ-
2 ՑԵԼՆՍ ԵԻ ԱՋԱՏԱԻ-
3 ՐԵՆ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ԱԾԱ-
4 ԾՆԻՍ ԵԻ ՄԻԱԲԱՆՔՍ Է-
5 ՏՈԻՆ ՊԵՏՐՈՍ ԵԻ ՊԱԻ-
6 ՂՈՍԻ ՏԱԻՆԻՆ ։Բ։ ԺԱՄ
7 ԿԱՏԱՐԻՉ(Ք)Ն ԱԻՐՀՆԻՆ ՅԱՅ

Հ. ՍՂԽԱՋԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ)

# ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋԸ

Արտաշատը պատմական Հայաստանի ամենահին, արքայանիստ մայրաքաղաքներից է. նա հռչակված է եղել իր բնգարձակությամբ, մարդաշատությամբ, շքեղությամբ և զարգացած արտադրությամբ ու առևտրով։ Պատմական աղբյուրները սակավ տեղեկություններ են պարունակում Արտաշատ քաղաքի կառուցման և հատկապես նրա տեղադրության մասին։ Եղած տեղեկություններն էլ շատ աղոտ են, անորոշ ու հակասական։

Հայկական և օտարազգի պատմական աղբյուրները տարբեր ձևով են պատմում Արտաշատ քաղաքի կառուցման հանգամանքները։ Օտար աղբյուրների վկայությամբ Արտաշատը կառուցել է Հայոց Արտաշես Ա թագավորը, կարթագենացի հռչակավոր զորավար Հաննիբալի խորհրդով, որն Անտիոքոս Մեծի պարտությունից հետո, փախչելով հռոմայեցիներից, գալիս է Հայաստան և ապաստանում Արտաշես թագավորի մոտ, ու մի շարք օգտակար խորհուրդներ տալիս նրան։ Ի միջի այլոց, նկատելով մի բարեբեր, գեղեցիկ ու հարմար վայր, որն անմշակ էր թողնված՝ մի քաղաքի հատակագիծ է գծում և Արտաշեսին տանելով այդտեղ, ցույց է տալիս ու հորդորում, որ այդ հատակագծի վրա մի քաղաք հիմնի։

Արտաշեսը հավանություն է տալիս Հաննիբալի խորհրդին և խնդրում է նրան իր վրա վերցնել քաղաքի կառուցման գործի ղեկավարությունը։ Կարճ ժամանակի ընթացքում հիմնվում է մի ընդարձակ ու հոյակապ քաղաք, որն Արտաշեսի անունով կոչվում է Արտաշատ և հանդիսանում է արքայանիստ մայրաքաղաք։ Այդ մասին մանրամասն պատմում է հույն պատմիչ Պլուտարքոսը.

«Որմէն թէ Անտիոքոս հռոմայեցիներեն հաղթվելեն ետքը Աննիբաղ Հայոց Արտաշ (Artaxe) թագավորին քով փախավ. անոր արքունիքը եղած ատենը շատ օգտակար ու բարի խորհուրդներ տվավ իրեն։ Գեղեցիկ ու բարեբեր տեղի մը վրա, որ անմշակ թողված էր, քաղաքի մը հատակ գծեց, և զԱրտաշ թագավորը նույն տեղը տանելով ցուցուց ու հորդորեց, որ նույն հատակագծին վրա քաղաք մը շինե։ Սքանչացավ թագավորը և խնդրեց Աննիբաղեն, որ ինքը շինվածքին գլուխ կենա։ Քիչ ատենի մեջ շինվեցավ հոն մեծ ու գեղեցիկ քաղաք մը, որ թագավորին անունը առավ, և համբավվեցավ Հայոց մայր քաղաքը[1]։

Մի շարք ուսումնասիրողներ մեծ կասկածանքով են վերաբերում կարթագենացի այդ նշանավոր զորավարի Հայաստան գալու հանգամանքին և հատկապես նրա մասնակցության Արտաշատ քաղաքի կառուցման գործին, գտնելով, որ Պլուտարքոսի հիշյալ վկայությունը առասպելական բնույթ է կրում և զուրկ է պատմական ճշմարտությունից, հետևապես նա չի կարող հավաստի նյութ ծառայել Արտաշատ քաղաքի կառուցման ժամանակի, ինչպես և նրա տեղադրության խնդիրը լուծելու հարցում։

---

1. Ե. Ս.— «Արտաշատ», «Բազմավէպ», օրագիր բանասիրական, բանասիրական, տնտեսական և բնական գիտելյաց. Վենետիկ, 1858 թ., հատոր 16, էջ 46—51։

Սակայն որչափով էլ անհավանական լինի Հաննիբալի գալուստը Հայաստան, այնուամենայնիվ, Պլուտարքոսի վերի վկայությունը խիստ արժեքավոր է այն տեսակետից, որ նա որոշակի ձևով մատնացույց է անում Արտաշատ քաղաքի կառուցման ժամանակի մասին, որը ճշտիվ համապատասխանում է Հայոց Արտաշես Ա թագավորի տիրապետության ժամանակաշրջանին։

Ստրաբոնը նույնպես տեղեկացնում է, որ Արտաշատ քաղաքը կառուցել է Արտաշեսը՝ կարթագենացի Հաննիբալի միջոցով։

Հայ մատենագրական աղբյուրները Արտաշատ քաղաքի կառուցումը վերագրում են Հայոց Արտաշես Բ թագավորին, որն, ինչպես հայտնի է, թագավորել է մոտավորապես 33—20 թվականների ժամանակաշրջանում՝ մեր թվականությունից առաջ։

Այս մասին Մովսես Խորենացին պատմում է.

«Արտաշես վերջինի գործերից շատ բան հայտնի են քեզ այն պատմություններից, որ պատմում են Գողթնում... բայց մենք էլ կարճառոտ կհիշատակենք և պատմությունը կհիշատակենք։

Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ բլուրին հավանելով քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ»[1]։

Մովսես Խորենացու այս վկայությունն Արտաշատ քաղաքի կառուցման մասին, մեր կարծիքով, պարզապես սխալ է, որովհետև մինչև Արտաշես Բ-ի տիրապետությունն արդեն գոյություն ուներ Արտաշատը, որի մասին բազմիցս հիշատակում են օտարազգի պատմիչները։ Պետք է ենթադրել, որ Խորենացու վերը նշված վկայությունը կամ ձեռագրի արտագրության ժամանակ կատարված սխալ է, կամ վերաբերում է Արտաշատի վերակառուցմանն ու ընդարձակմանը (Արտաշես Բ-ի կողմից), որն, ինչպես հայտնի է, դաժան ավերածությունների էր ենթարկվել օտար նվաճողների հարձակումների ժամանակ։

Ինչպես հայտնի է, Մագնեզիայի նշանավոր ճակատամարտում (190 թ. մ. թ. ա.), հռոմայեցիները գլխովին ջախջախեցին Սելևկիացիների Անտիոքոս Մեծի բանակը՝ պարտության մատնելով նրան։ Սելևկյանների տիրապետության տակ գտնվող երկրները օգտվելով այդ դրությունից ազատվում են նրանց տիրապետությունից։ Հայաստանը նույնպես գտնվում էր Սելևկյանների տիրապետության տակ և կառավարվում էր նրանց կողմից նշանակված կուսակալներ Արտաշես և Զարեհ հայ իշխանների կողմից։ Վերջիններս նույնպես թոթափում են Սելևկյանների լուծը և իրենց հայտարարում անկախ՝ Արտաշեսն իրեն թագավոր է հռչակում Մեծ Հայքի, իսկ Զարեհը՝ Ծոփքի վրա։ Դրանից հետո Արտաշեսը զբաղվում է երկրի սահմաններն ընդարձակելու և երկիրը բարեկարգելու աշխատանքներով, որի ընթացքում կառուցում է նաև Արտաշատ քաղաքը՝ դարձնելով այն Հայաստանի արքայանիստ մայրաքաղաքը։

Արտաշատն իր ժամանակի հայտնի, բարգավաճ, գեղեցիկ ու առևտրաշահ քաղաքներից էր։ Օտարազգի պատմիչները մեծ գովեստով են խոսում նրա մասին։ Պլուտարքոսը «Հայկական Կարթագեն» է անվանում Արտաշատ քաղաքը։ Գտնվելով միջազգային տարանցիկ առևտրի գլխավոր ճանապարհների հանգուցային կետում, Արտաշատը հանդիսանում էր Արևելքի և Արևմուտքի միջև եղած առևտրական հարաբերությունների և ապրանքափոխանակության խոշոր կենտրոն, որպիսի հանգամանքը հիմնական պատճառներից մեկն էր նրա արագ թափով առևտրական զարգացման, բարգավաճման և կուլտուրական ծաղկման ուղղությամբ։

Ակադ. Հ. Մանանդյանը, իր մենագրական աշխատություններից մեկում քննության առնելով Արտաշատ քաղաքի ընդհանուր զարգացման խնդիրները և նրա դերն ու նշանակությունը միջազգային տարանցիկ առևտրի ասպարեզում, ավելացնում է.

«Մեծ Հայքը անկախ պետություն հռչակելուց հետո, ինչպես հայտնի է, Արտաշեսը հիմնեց մայրաքաղաք Արտաշատը, որը գտնվելով դեպի սեծովյան նավահանգիստները տանող գլխավոր ճանապարհի վրա, դարձավ հին Հայաստանի ոչ միայն քաղաքական, այլև առևտրական կարևոր կենտրոնը։ Կառուցված լինելով Արաքսի ափին Արարատյան հարուստ և արգավանդ հարթավայրում, մայրաքաղաք Արտաշատը աստիճանաբար առաջ ընթացավ—զարգացավ որպես առևտրական հարաբերությունների կարևոր հանգուցային կետ և, հետևաբար, որպես տարանցիկ առևտրի մեծաքանակ ապրանքների կուտակման վայր։

Արտաշատի առևտրի զարգացման վրա մեծ ազդեցություն պետք է գործած լինեն նաև միջազգային տարանցիկ առևտրի անմիջական կապերը Չինաստանի հետ, որի սկիզբը վերաբերում է երկրորդ դա-

---

[1] Մովսես Խորենացի. «Հայոց պատմություն», գիրք երկրորդ, գլ. ԽԹ, Հայպետհրատ, Երևան, 1940 թ., էջ 117։

րին՝ մեր թվականությունից առաջ։ Այդ տեսակետից զարմանալի չէ, որ մոտավորապես հարյուր տարի իր հիմնադրումից հետո, Լուկուլլոսի՝ Հայաստանի վրա կատարած արշավանքների ժամանակ (69—68 թ. թ. մ. թ. ա.), Արտաշատն ուներ խոշոր և հարուստ քաղաքի հռչակ և Պլուտարքոսի մոտ կոչվում էր «Հայաստանի կարթագեն»[3]։

Այնուհետև մեջբերելով Արտաշատ քաղաքում կատարվող մի շարք ուսումնա-կրթական և գրական-դաստիարակչական աշխատանքների մասին օտարազգի պատմիչների և գիտնական ուսումնասիրողների վկայությունները ու կարծիքները, Մանանդյանը եզրակացնում է.

«Բոլոր այդ տվյալներն ու հիշատակումները հանգում են մի մտքի, որ հին Արտաշատը եղել է հելլենիստական տիպի խոշոր կենտրոն, հավանաբար նույն Սելևկիացոց դինաստիաների կլոխայում հիմնադրված Նիկոմիդիայի, Եդեսիայի և այլ մայրաքաղաքների նմանությամբ»[4]։

Որ Արտաշատը եղել է շատ հարուստ, կուլտուրապես զարգացած և շքեղ քաղաք, զարդարված բազմաթիվ կոթողներով, արձաններով, կամարասյուներով, արքունի պալատներով, կրոնական տաճարներով և այլն, այդ մասին հաղորդում են նաև հայ մատենագիրները։ Մովսես Խորենացին նկարագրելով Արտաշատ քաղաքի կառուցման հանգամանքները, միաժամանակ ավելացնում է.

«Երասխն էլ օգնում է նրան անտառի փայտով։ Ուստի առանց դժվարության և արագ շինելով՝ այնտեղ մեհյան է կանգնեցնում և Բագարանից այնտեղ է փոխադրում Արտեմիսի արձանը և բոլոր հայրենական կուռքերը։ Բայց Ապողոնի արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս, ճանապարհին մոտ։ Երվանդի քաղաքից դուրս է բերում հրեա գերիներին, որ այնտեղ տարված էին Արմավիրից, և բերում նստեցնում է Արտաշատում։ Նաև Երվանդի քաղաքի բոլոր վայելչությունները, ինչ որ նա փոխադրել էր Արմավիրից, և ինչ որ հենց ինքն էր շինել՝ բերում է Արտաշատ, և ավելի շատ բան էլ իր կողմից շինելով՝ [այդ քաղաքը] զարդարում է իբրև արքայանիստ քաղաք»[5]։

Եղիշե պատմագիրը Արտաշատն անվանում է «Թագավորանիստ քաղաք», «մեծ քաղաք»[6]։ Հայ բանասիրական և հնագիտական գրականությունը նույնպես հարուստ է Արտաշատ քաղաքի մասին ներբողներով։ Մի շարք հեղինակներ ամփոփելով հայ պատմիչների կողմից արված գովեստները Արտաշատ քաղաքի հարստության, գեղեցկության ու շքեղության մասին՝ համարում են այն որպես Ակրոպոլիս։

Արտաշատը որչափով նշանավոր էր իր գեղեցիկ ու շքեղ կառուցվածքներով, փառահեղ արձաններով, ծաղկուն արվեստով, կուլտուրայով ու առևտրով, նույնքան էլ հռչակված էր իր մեծությամբ ու մարդաշատությամբ։ Այդ մասին որոշակի տվյալներ կան հայ մատենագրական աղբյուրներում, որտեղ մանրամասն նկարագրելով պարսից Շապուհ թագավորի 382 թվին Արտաշատ քաղաքի վրա կատարած հարձակումները, պարզ կերպով ընդգծում է քաղաքի մեծությունը, հարստությունն ու բազմամարդ լինելը։ Փավստոս Բյուզանդացին հետևյալն է պատմում.

«Ու յետ այսորիկ եկին ի քաղաքն մեծ Արտաշատ. և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա, առին անտի զգանձս մթերեալս, որ կային և գերեցին զամենայն քաղաքն։ Եւ խաղացուցին ի յԱրտաշատ քաղաքէ ինն հազար տուն երդ Հրէայս, զոր ածեալ էր գերի Տիգրանայ արքայի Արշակունւոյ յերկրէն Պաղեստինացոց. քառասուն հազար երդ Հայ, զոր յԱրտաշատ քաղաքէ խաղացուցին։ Եւ զամենայն շինուած քաղաքին հրձիգ արարին զփայտակերտն, և զքարակերտն քանդեցին. զպարիսպն ընդ նմին օրինակի և զամենայն շինված քաղաքին մինչև ի հիմունսն ապականեցին, և ոչ թողին մի, և ոչ թողին բնաւ քար ի քարի վերայ. անմարդի և թափուր յամենայն բնակչաց իւրոց կացուցին»[7]։

Արտաշատ քաղաքի պատմությամբ այս կամ այն առիթով հետաքրքրվող համարյա բոլոր հեղինակները մեծ կասկածանքով են վերաբերվում Փավստոս Բյուզանդացու վերը նշված տեղեկությունների ճշտությանը։ Շատերը գտնում են, որ Արտաշատի բնակչության թիվը խիստ չափազանցված է, իսկ ոմանք էլ պնդում են, որ եթե պարսիկները այդ աստիճան ավերած լինեին քաղաքը, ապա հայերը հազիվ թե ի վիճակի լինեին վերականգնելու այն։

---

3. Պրոֆ. Հ. Մանանդյան, «Հայաստանի առևտրի և քաղաքների մասին», Հայպետհրատ, Երևան, 1930 թ., էջ 38, 41—42։

4. Նույն տեղում, էջ 40։

5. Մովսես Խորենացի — «Հայոց պատմություն», գիրք երկրորդ, Երևան, 1940 թ., էջ 117։

6. «Եղիշէի վարդապետի պատմութիւն Վարդանանց», Վենետիկ, 1838 թ., էջ 23, 56։

7. «Փավստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913 թ., էջ 266։

Որքանով էլ կասկածելի լինեն Փավստոս Բուզանդացու հաղորդած տեղեկությունները Արտաշատի ավերման ու գերի վարած բնակչության թվի մասին, այնուամենայնիվ նրանք կարևոր են նրանով, որ բնորոշում են քաղաքի խիստ մարդաշատ լինելու փաստը:

Մեզ հասած մատենագրական տեղեկությունները հանգեցնում են մի համոզման, որ Արտաշատը իր ժամանակին եղել է Արևելքի խոշոր, հարուստ ու բարգավաճ քաղաքներից մեկը, որտեղ բարձր զարգացման են հասել արվեստն ու կուլտուրան, արդյունաբերությունն ու առևտուրը:

Արտաշատը չորս դար անընդհատ մնաց իր փառքի գագաթնակետին, որի ընթացքում կես ժամանակամիջոցը հանդիսացավ Հայաստանի մայրաքաղաքը և հայ թագավորների ամենաամուր հենակետերից մեկը:

Քանի՜-քանի՜ անգամ օտար բռնակալները Հայաստանի վրա կատարած իրենց նվաճողական արշավանքների ժամանակ ձգտել են գրավել Արտաշատ քաղաքը, սակայն ամեն անգամ էլ նրանց հսկայական բանակները հանդիպելով քաղաքի անառիկ ամրություններին և այն պաշտպանող քաջարի հայ մարտիկների անպարտելի ուժին, հետ են շպրտվել Արտաշատ քաղաքի և Հայաստանի սահմաններից շատ հեռու:

Այնպիսի մեծանուն և հռչակավոր զորավարներ, ինչպիսիք են Լուկուլլուսը, Պոմպեոսը, Կրասոսը, Անտոնիոսը և ուրիշները, իրենց հռոմեական մեծաթիվ լեգեոններով քանիցս փորձել են գրավել Արտաշատը, սակայն մեծ ջարդ կրելով իր ազատությունն ու Հայրենիքը պաշտպանող հայկական քաջարի բանակի կողմից, միշտ վերադարձել են ձեռնունայն:

Սակավաթիվ նվաճողների է հաջողվել, այն էլ շատ կարճ ժամանակով, տիրել Արտաշատին: Հռոմայեցիների Կորբուլոն զորավարը 58 թվին երկար ժամանակ Արտաշատը պաշարելուց հետո գրավում է այն, ամբողջապես ավերում և հրի ու սրի ճարակ դարձնում: Ապա հայոց Տրդատ թագավորը, Ներոն կայսեր հրամանով, վերաշինեց Արտաշատը, որը նրա անունով ժամանակ կոչվեց Ներոնիա և նորից դարձավ Հայաստանի արքայանիստ մայրաքաղաքը: Այդ մասին մանրամասն պատմում է Տակիտոսը.

«Արտաքսատան հրդեհվեց, քարուքանդ արվեց և հավասարվեց հողին, որովհետև պարիսպների լայնածավալության հետևանքով առանց ուժեղ պահակազորի չէ՛ր կարելի պահել այն, ոչ էլ մենք այնքան ուժ ունեինք, որ զորքը բաժանվեր՝ թե՛ պահակազորն ուժեղացնելու և թե՛ պատերազմը վարելու համար, իսկ եթե մայրաքաղաքն անվնաս մնար և առանց պահակազորի, ոչ մի օգուտ և փառք չէր նրանից, որ քաղաքն առնված էր»*:

Ապա մյուս անգամ Արտաշատը գրավեց պարսից Շապուհ արքան 382 թվին, որը մեծ ավերածություններ կատարեց քաղաքում և բազմաթիվ գերիներ տարավ, որի մասին խոսվեց վերևում:

Արտաշատ քաղաքն սկսեց ընկնել չորրորդ դարի վերջերից, իր տեղը զիջելով Դվին քաղաքին: Հետագա պատմիչները մինչև տասներորդ դարը հիշատակում են Արտաշատը, սակայն նա արդեն կորցրել էր իր մեծությունն ու քաղաքի փառքը և դարձել էր սոսկ մի քաղաքագյուղ կամ ավան: Այնուհետև պատմությունը լռում է Արտաշատի մասին. հավանական է, որ սելջուկյան արշավանքների շրջանում բնակիչները լքում են այն և այդ ժամանակվանից նա մնում է ամայության ու անհայտության մեջ:

Մեր նպատակից դուրս է մանրամասն շարադրել Արտաշատ քաղաքի պատմական անցյալը, ուստի սահմանափակվելով այս ամփոփ ներածականով, անցնենք հիմնական նյութի՝ Արտաշատ քաղաքի տեղագրության խնդրի քննարկմանը:

Արտաշատ քաղաքի տեղագրության խնդիրը հետաքրքրել է հայ և օտարազգի բազմաթիվ գիտնականների, բանասերների և ճանապարհորդների, սակայն պետք է նկատել, որ դրանցից և ոչ մեկը հստակապես չի զբաղվել Արտաշատի տեղը ճշտելու խնդրով, այլ այդ խնդիրն արծարծել է այս կամ այն կապակցությամբ: Դուցե այդ է գլխավոր պատճառներից մեկը, որ որչափով շատ է Արտաշատ քաղաքի տեղը ճշտելու խնդրով հետաքրքրվողների թիվը, նույնքան էլ բազմաթիվ են ու տարբեր և մեծ մասամբ հակասական նրանց կարծիքները Արտաշատի տեղագրության հարցի նկատմամբ, չնայած այն բանին, որ պատմական աղբյուրներում որոշակի կերպով մատնացույց է արվում Արտաշատի տեղագրության մասին:

Խոսելով Հայաստանի քաղաքների մասին Ստրաբոնը հաղորդում է.

«Հայաստանի քաղաքներն են Արտաշատ, որ և կոչվում է Արտաշաշատ, հիմնըված Աննիբալից՝ Արտաքսիաս թագավորի համար և Արքսատա, երկուսն էլ Արաքսի վրա, Արքսատը Ատրոպատենի սահմանների մոտ, իսկ Արտաշատը՝ Արարատյան

---

*) «Օտար աղբյուրները հայերի մասին», Լատինական աղբյուրներ.— Տակիտոս: Պետական Համալսարանի հրատարակչություն, Երևան, 1941 թ., էջ 95:

գետի մոտ, գեղեցիկ քաղաք, որ և երկրի մայրաքաղաքն էր։ Շինված է գետի թեք ձևացրած թերակղզու վրա, որի պարիսպները շուրջանակի պատում է գետը՝ բացի պարանոցից, իսկ պարանոցը փակված է փոսով և պատնեշով»[9]։

Հայ պատմիչներից ոմանք նույնպես վկայում են, որ Արտաշատ քաղաքը կառուցված է Արաքս գետի ափին.

«Արտաշատը գտնվում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ բլուրին հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ»[10]։

Ստրաբոնի և Մովսես Խորենացու մեջ բերած այս տեղեկություններից պարզ երևում է, որ Արտաշատը հիմնված է Արարատյան դաշտավայրում, Արաքս գետի ափին, բլուրների վրա, Արաքս և Մեծամոր գետերի միախառնման վայրում, այնտեղ որտեղ Արաքսը պտույտ գործելով կազմում է թերակղզի։

Արտաշատ քաղաքի տեղագրության խնդրով հետաքրքրվող մի շարք հեղինակներ քննության առնելով Արաքս և Մեծամոր գետերի ընթացքը, նկատել են, որ Մեծամոր գետը անմիջապես չի թափվում Արաքսի մեջ, այլ նա միանում է Քասաղ գետին և ապա վերջինիս հետ միասին խառնվում Արաքսին։ Միաժամանակ հետազոտելով Քասաղ-Մեծամոր և Արաքս գետերի իրար հետ միանալու վայրը, այդտեղ չեն նկատել ոչ բլուրներ և ոչ էլ որևէ բնակավայրերի հետքեր, որոնք հիմք ծառայեին ենթադրելու, թե այստեղ պետք է կառուցված լիներ Հայաստանի հին մայրաքաղաքներից մեկը՝ Արտաշատը։ Այստեղից էլ բխել է այն ոչ ճիշտ ըմբռնումը, թե Մեծամորը չպետք է լինի ներկայիս Սևջուր գետը, այլ ինչ որ մի ուրիշ գետ։ Ուստի շատերը Մեծամորը նույնացրել են Ազատ, Վեդի, Արևելյան Արփաչայ և այլ գետերի հետ։

Այդ թյուրիմացությունը հետևանք է այն բանի, որ Արտաշատ քաղաքի տեղագրության խնդրով հետաքրքրվող հեղինակների մեծագույն մասը ծանոթ չի եղել վերոհիշյալ գետերի, առանձնապես Մեծամոր գետի ընթացքի փոփոխություններին, և տեղագրական հետազոտություններ չեն կատարել։ Դրան պետք է ավելացնել նաև այն, որ հեղինակների որոշ մասը հարկ եղած չափով ծանոթ չի եղել Հայաստանի պատմության ու աշխարհագրությանը։

Մի ուրիշ հանգամանք ևս իր հերթին առիթ է տվել մի շարք հեղինակների՝ սխալ հետևություններ անել Արտաշատ քաղաքի տեղագրության վերաբերմամբ։ Ինչպես հայտնի է, Արտաշատի շրջանում (նախկին Ղամարլուի շրջան) կան Արտաշատ (Այժմ Վերին Արտաշատ, հնում Արտաշար) և Դվին անունով գյուղեր, որոնք իրարից հեռու են մոտ երեք կիլոմետր. Արտաշատը գտնվում է Դվինից հարավ, որի սահմաններում տարածվում են մի ընդարձակ բերդաքաղաքի ավերակներ։ Արտաշար-Արտաշատ գյուղի գոյությունը նման ավերակների վայրում շատ հեղինակների համար առիթ է հանդիսացել պնդելու, որ այդ ավերակները Արտաշատ քաղաքի մնացորդներն են։ Դեռ ավելին. որովհետև հայ պատմիչների վկայությամբ Դվին քաղաքը հիմնված է Արտաշատից դեպի հյուսիս, որտեղ գոյություն ունեն համանուն երկու գյուղեր (Ասորի և Հայ Դվին), ապա այդ հեղինակների կարծիքով Դվին քաղաքի տեղն էլ պետք է փնտրել վերոհիշյալ գյուղերի սահմաններում։

Այդ բոլորից պարզ երևում է, որ Արտաշատ քաղաքի տեղագրության խնդիրը որոշելու գործում, բացի մի քանի ոչ էական նշանակություն ունեցող հանգամանքներից, համարյա բոլոր հեղինակներին սխալ եզրակացությունների հանգելու առիթ են ծառայել Արարատյան դաշտով հոսող գետերի ընթացքի փոփոխությունները, Արտաշար-Արտաշատ անունով գյուղի գոյությունը Արարատյան դաշտավայրում, Արաքսին մոտիկ, տեղագրական հետազոտությունների բացակայությունը, Հայաստանի պատմությանն ու աշխարհագրությանը հարկ եղածին չափ ծանոթ չլինելը և այլն։ Բավական է միայն մի քանի մեջբերումներ անել Արտաշատի տեղագրության խնդրով զբաղվող որոշ, թերևս համեմատաբար ավելի աչքի ընկնող հեղինակներից, համոզվելու համար, թե որչափով իրավացի և ճիշտ են մեր դիտողությունները։

Այսպես, Ղևոնդ Ալիշանը գրում է.

«Ըստ կիսամասնեայ բաղդի՝ գլխաւոր քննելին (որ և քան զամենայն հին քաղաքս Հայոց հռչակեալ գոլով առ դասական մատենագիրս Յունաց և Լատինաց) Արտաշատ, գէթ ի հարևանցի հետազօտեալ և յծնեալ է յուղևորաց ոմանց գիտնոց և խնդրեալ յերկուց դարուց հետէ, որոց և նշանակին դեռ զարդ կրելով զանուն Արտաշատ կամ Արտաշ, սակայն և ոչ այնու իսպառ փաստեալ է ճշտութիւն որիցն. մի վասն ոչ բաց միաբանելոյ տեղւոյն՝ ընդ նկարագրի օտար այլ ժամանակակից հեղինակաց. և երկրորդ՝ վասն չմիաբանութեան նոցին ընդ մերումս

9. «Օտար աղբյուրները Հայերի մասին. Հունական աղբյուրներ.— «Ստրաբոն», էջ 58»

10. Մովսես Խորենացի— «Հայոց պատմություն», գիրք երկրորդ. Երևան, 1940 թ., էջ 117։

Խորենացւոյ, որ զհիմնարկութիւն քաղաքին թե-ւակէ Արտաշիսի Ա-ի ի վերջ կիսոյ Բ դա-րու Քրիստոսի, իսկ Յոյնք ընծայեն Արտաշիսատայ երկրացանի, բան զնա եր-կու և կէս դարու, և առաւելագէս զիջեն ակնակս աշխարհագիր պատմութեամբ և պա-տերազմաց յառաջ քան զժամանակս Ար-տաշիսի Ա-ի։

Զերկրորդս այս խնդիր լուծանեն ամենք անկոյն, առ որ քաղաքս լինել, կամ երկու Արտաշատու. մին (ձեռնոյն մերոց-նոյց), ենց առ ատուանակի անկանելի են. մին անյայտ գրիք, կամ խոնարհա-գոյն ի հարաւոյ արևելից անդր քան զՎէդի՝ ընդ ի գաշտին Ճապարայ, և հայոցն զեզերս Երասխայ, որ Համարին նշմարել աւերակս, զոր չէ տեսեալ զարդ առաջի-ակնական, իսկ այլք ասեն մի և նոյն քա-ղաք լինել, յԱրտաշիսատյ շինեալ (որպէս և դար լինել) և յԱրտաշիսէ վերաշի-նեալ կամ նորոգեալ, և այս է բաղձալի ընդունելի. մանաւանդ զի ոչ Խորենացի և ոչ այլ ոք ի միջոցս ոչ յիշեն զաւաքելն կամ զայլ Արտաշատ։ Իսկ ասացին խոր-դիրն, որ է գիրք այժմեան աւերակաց և զետոյն Երասխայ, մինչ ի երկուց ոչ ա-կա (քննեա ասելի քան Հինգ մղոն). և զմիկայութիւն ձևոյն ոչ միայն հայց, այլ և շրջապատեալ ասեն յԵրասխայ, զմառ-դին քան անհրեւյթ ակնութեան, գիտացեալ է՝ և քան անդամախոսութեան ընթացից գե-տոյն, և քան այնմ վկայութեան մերոյ պատմչին՝ զոր յիշեն այժմ և աշխարհա-գի գրիչ, այլ անգիտանան զի և աշխար-հագիր մեր Հին՝ պարզագոյն ևս զնոյն վկայէ, և թէպէտ ամս ի նոցանէ հասանե-լով ես անդամախոսութեան կամ ձեռնարկայ գետոյն՝ անհատան զաւանի այնքան տա-րակացութեան, այլ եթէ զհաւկր նա զմիկա-յութիւն մերոց նախնեաց՝ ոչ զԵրաս-խայ միայն, այլ և զերկրորդական գետոց Այրարատեան գաւառին. Համանէր արդեօք միութեան Արտաշատայ, Այսպէս համա-րեալ և մեր (զէթ մինչև ի յայտնութիւն այ-լոյ աւերակի մեծի և ճոխագոյն շինուածոյ ի պատշաճ տեղւոյ,— կարծեցուք զնկա-րագիր տեղւոյն»[11]։

Մեջբերված այս հատվածից պարզ է այն, որ Ալիշանը նույնպես ընդունում է, թե ինչպես մի շարք ճանապարհորդներ և ու-սումնասիրողներ հարևանցիորեն են քննել Արտաշատի տեղադրության խնդիրը, միա-ժամանակ մատնանշելով այն տարակարծու-թյունները, որոնք գոյություն ունեն Արտա-շատի տեղադրության խնդրում գրողների և ճա-մփորդների միջև. Բացի այդ, ինչպես նկա-տում ենք, Ալիշանը համամիտ է այն տեսա-կետին, որ Արտաշատ քաղաքի տեղը պետք է որոնել ներկա Արտաշատ գյուղի շրջակա-յքում և, հիմնվելով Խորենացու այն վկա-յության վրա, թե Արտաշատը հիմնված էր Երասխ և Մեծամոր գետերի միախառնման վայրում, համաձայնում է համարում, որ Երասխը այդ վայրում պետք է փոխած լինի իր հունը, մանավանդ, որ այդ մասին հի-շատակում են նաև հայ պատմիչները։

Արտաշատի կառուցման հարցում Ալիշա-նը հենվում է Խորենացու, ընդունելով նրա կառուցումը Արտաշես Ա-ի կողմից, որովհե-տև բացի օտարազգի պատմիչներից, հայ մատենագիրներից և ոչ մեկը չի հիշատա-կում Արտաշատի կառուցումը Արտաշես առաջադային կողմից, չնայած այն բանին, որ Ալիշանը չի միանում օտարազգի պատ-միչների՝ Արտաշես երկրորդից մոտ երկու և կես դար առաջ, Արտաշատ քաղաքի մնա-ցած անկյուն արշավանքների և պատերազ-մական գործողությունների նկարագրության խնդիրները։ Սակայն նա տարակուսում է, ինչպես այդ ենթադրում են նաև ուրիշները, որ կարող է գոյություն ունեցած լինել երկու Արտաշատ — մեկը, որը գտնվում է ներկա Արտաշատ գյուղի մոտ և հայտնի է հայ մա-տենագիրներին, իսկ մյուսը՝ հինգ մղոն դե-պի հարավ-արևելք, Երասխի ափին, որի մա-սին հիշատակում են օտար պատմական աղ-բյուրները։

Ալիշանը համամիտ է այն կարծիքին, թե Արտաշատ քաղաքը գտնվել է ներկա Արտա-շատ գյուղի մոտ և, որ Երասխը փոխելով իր հունը, հեռացել է քաղաքից։

Հիմնվելով Պլինիուսի ինչպես և Ստրաբո-նի վկայությունների վրա, թե Արտաշատը գտնվում է հարթավայրի վրա, Ալիշանը են-թադրում է, որ ներկա Արտաշատ գյուղի սահմաններում գտնվող ավերակները պետք է պատկանելիս լինեն Արտաշատ քաղաքին։ Բայց որովհետև Խորենացու տեղեկություն-ներով Արտաշեսը Արտաշատը հիմնեց բլուր-ների վրա, իսկ Ագաթանգեղոսի պատ-մելով Խոր Վիրապը գտնվում էր Արտաշատ քաղաքի մեջ, ուր Տրդատ Գ թագավորը ձգել տվեց Գրիգոր Լուսավորչին, ապա Ալիշանի մոտ մեծ կասկած է առաջանում Արտաշատ քաղաքի ներկա Արտաշատ գյուղի մոտ եղած ավերակների վայրում գտնվելու նկատմամբ, որովհետև այդ ավերակների վայրում չկան բլուրներ, չնայած այնտեղ նկատվում է մի փոքրիկ բլրանման բարձրություն, որը Ալի-շանի կարծիքով քաղաքի միջնաբերդը պետք

[11] Ղևոնդ Ալիշան, «Այրարատ, բնաշխարհ Հայաստանեայց», Վենետիկ, Ս. Ղազար, 1890 թ., էջ 395—396։

է եղած լինի։ Մինչդեռ Խոր Վիրապի վայրում իրոք որ կան բլրաձև բարձրություններ, սակայն նրանց վրա չեն նկատվում որևէ բնակավայրի մնացորդներ. նրանց մոտով, բացի Արաքսից, ուրիշ գետեր չեն հոսում և, որ գլխավորն է, այդ բլրաձև բարձրությունները վերոհիշյալ ավերակներից հեռու են առնվազն վեց մղոն, որից Ալիշանը անհավանական է համարում, որ այն ժամանակվա մի քաղաք այդ չափով ընդարձակված լիներ։

Ըստ Ալիշանի՝ Պլինիուսի, Ստրաբոնի, Մովսես Խորենացու և Ագաթանգեղոսի «հնագիտական» վկայությունների հիման վրա չկարողանալով վերջնականապես լուծել Արտաշատ քաղաքի տեղադրության բարդ խնդիրը, թողնում է հետագա ուսումնասիրողներին, անհրաժեշտ գտնելով, որ տեղում չափավ ստուգվեն բոլոր գետերի հին և նոր հուները, նրանցից տարվող առուների ընթացքի ուղղությունը և մանրազնին կերպով հետազոտվեն ամբողջ Ոստանի սահմաններում գտնվող հին բնակավայրերը։

Այս բոլորից միանգամայն պարզ է դառնում, որ Ալիշանը նույնպես, ինչպես և ուրիշները, որոնց մասին ինքն էլ է ակնարկում, հատկապես չեն զբաղվել Արտաշատ քաղաքի տեղը ճշտելու հարցով, այլ դրան մոտեցել են պատահական կերպով՝ այս կամ այն կապակցությամբ. հարկ եղած չափով չեն ուսումնասիրել անհրաժեշտ նյութերը, որոնց հիման վրա հնարավոր լիներ ստույգ կերպով որոշել Արտաշատ քաղաքի վայրը։ Այդ է պատճառը, որ Արտաշատ քաղաքի տեղադրության խնդրով հետաքրքրվող հեղինակների մեծ մասը ցուցաբերել է ոչ ճիշտ և սուբյեկտիվ մոտեցում դեպի այդքան լուրջ ու կարևոր պատմական հարցը, որից և առաջացել են ոչ ճիշտ, երբեմն էլ անհեթեթ եզրակացությունները։

Արտաշատ քաղաքի տեղադրության խնդրով զբաղվող հայ հեղինակներից համեմատաբար ավելի արժեքավոր և հետաքրքիր են Ղուկաս վարդապետ Ինճիճյանի հաղորդած տեղեկությունները։

Ինճիճյանի հաղորդած տեղեկությունները խիստ արժեքավոր են նախ նրանով, որ նրանք հնարավորություն են տալիս ծանոթանալու օտարազգի մի շարք հեղինակների տեսակետների հետ Արտաշատի տեղադրության վերաբերմամբ և երկրորդ՝ նա որոշակի կերպով մատնացույց է անում այն մեծ տարակարծությունները ու անճշտությունները, որոնք գոյություն ունեն Արտաշատ քաղաքի տեղադրության խնդրով զբաղվող հեղինակների միջև։

Բացի այդ, Ինճիճյանը միանգամայն իրավացի կերպով նկատում է, թե ինչպես եվրոպացի մի շարք հեղինակներ, հասկանալի պատճառներով չէին կարող վերահասու լինել Արտաշատ քաղաքի տեղը ճշտելու գործում։ Ապա ուղղակի կերպով նա մեղադրում է այդ խնդրով հետաքրքրվող հայ հեղինակներին, որոնք, չնայած հայ և օտարազգի հին պատմագիրների միանգամայն որոշակի ու պարզ ցուցումներին, ոչ ճիշտ ու անհավանական համեմատությունների են հանգել Արտաշատ քաղաքի տեղը որոշելու խնդրում՝ շփոթելով Արտաշատը Դվինի հետ։

Ինճիճյանը Արտաշատը որոշակի կերպով դնում է Խոր Վիրապի վայրում՝ ներկա Արտաշատ գյուղի մոտ գտնվող ավերակները վերագրելով Դվին քաղաքին, որը, մեր կարծիքով, պետք է համարել Արտաշատ քաղաքի տեղադրության խնդրի իրավացի և ճիշտ լուծումը։

Ինճիճյանը, ինչպես այդ կտեսնենք քիչ հետո, սխալ է մեկնաբանում Մորիերի կարծիքը Տրդատա թախտի մասին, վերագրելով այն Գառնիի Տրդատա թախտին, մինչդեռ Մորիերի մոտ հիշատակված Տրդատա թախտը վերաբերում է ներկայիս Արտաշատ գյուղի մոտ ավերակներում գտնվող փոքրիկ բարձրությանը, որը տեղացիների մոտ նույնպես հայտնի է «Տրդատա թախտ» անունով, ինչպես Գառնիում եղած Տրդատա թախտը։

Հետագայում մենք կաշխատենք ցույց տալ, որ Արտաշատ քաղաքի տեղադրության մասին հայ և օտարազգի պատմիչների հաղորդումների մեջ ոչ մի հակասություն գոյություն չունի, որ, ընդհակառակը, նրանք լրացնում են միմյանց։

(Շարունակելի)

Ա. ԻՐԻՄՅԱՆ

# ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՐԱՆԿԱՐՉԻ ԱՐՎԵՍՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

**(13-րդ դար)**

*Տասներեքերորդ դարի մանրանկարչական արվեստի լավագույն և պայծառ դեմքերից մեկն է Իգնատիոսը, որն իբրև հմուտ մանրանկարիչ, գրիչ և գեղագիր հայ մշակույթին ավանդ է թողել թանկագին ձեռագրեր, որոնք հայ գրչագրության և նկարչության պատմության մեջ պատվավոր տեղ են գրավում և իրենց հիմնական գծերով պարզ գաղափար տալիս արվեստագետի գեղարվեստական ստեղծագործական կերպարի մասին։*

*Արդարև, երբ 13-րդ դարի հայ ժողովրդի պարծանքը և Հռոմկլայի դպրոցի փառքն է կազմում բազմաշխատ, տաղանդավոր մանրանկարիչ* Թորոս Ռոսլինը, *ապա Հոռոմոսի, Հավուց Թառի, Տեկորի վանքերի հպարտությունն է վաստակավոր արվեստագետ* Իգնատիոսը. *երբ 14-րդ դարում իր գեղարվեստական ստեղծագործություններով Սյունիքի Գլաձորի վանքում հռչակվում է արևելահայ գեղարվեստական անվանի մանրանկարիչ* Թորոս Տարոնեցին, *ապա նույն 14-րդ դարի առաջին կեսում իր բարձր արվեստով և բոլորովին ինքնուրույն վրձինով Կիլիկիայում փայլում է* Սարգիս Պիծակը, *որի արվեստի ուրույն կառուցվածքը և ոճային հատկանիշները վկայում են նրա նկարչական և գրչագրական հարուստ ձիրքերի և նվաճումների մասին։*

*Սակայն անժխտելի է, որ այդ տաղանդավոր մանրանկարիչների կյանքի հիմնական գծերի և արվեստի էության մասին մինչև օրս դեռ առանձին մենագրություններ չեն հրատարակվել։ Այսօր, սակայն, ժամանակն է, որ այդ կարևոր աշխատանքը մասամբ կատարվի։*

*Անհրաժեշտ ենք համարում այստեղ գծել այդ անվանի մանրանկարիչներից մեկի, Իգնատիոսի պատկերը, որի կյանքի պատմության էջերը մեզ տանում են 13-րդ դարի առաջին շրջանը։ Նա մի նկարիչ է եղել, որն իր հմուտ վրձինով առանձին տաղանդ և ինքնուրույնություն է ցուցաբերել ո՛չ միայն զարդագրության, մանրանկարչության մեջ, այլև հռչակ է վայելել որպես վարպետ գրիչ ու գեղագիր։ Այդ հանգամանքը հաստատում են մանրանկարչից մինչև օրս հայտնագործված և գեղարվեստական ուրույն արժեք ներկայացնող այն ձեռագրերը, որոնք նա կերտել է գլխավորապես Հոռոմոսի, Հավուց Թառի (Հավուցթառի և Խծկոնի ուխտի—Շիրակում, Բեշ-քիլիսա), Տեկորի նշանավոր վանքերում, ինչպես այդ տեսնում ենք Նոր-Ջուղայի (Սպահանի արվարձանը) Ամենափրկիչ վանքի մատենադարանում գտնվող № 36 Ավետարանի հիշատակարանում. «ի յարդար վաստակոց իմոց և ստացեցի զսա ի հրեշտակաբնակ ուխտին Խծկոնս, որ Տեկորոյ վանք կոչի»։*

***

*Վաստակավոր նկարիչ, գրիչ և ծաղկող Իգնատիոսի մանրանկարչական արվեստի մասին գաղափար տալու համար գծենք 10—13-րդ դարերի հայ գրքի նկարազարդման և առհասարակ հայկական գրականության ու գեղարվեստի պատմության սեղմ էջերը։*

*Պատմական փաստ է, որ նույն դարերի հայ մշակույթի մեջ բանաստեղծական, նկարչական, ճարտարապետական ու քանդակագործական արվեստներն ուշագրավ դեր են կատարում։ Այդ տեսակետից բնորոշ է նաև հայ գրչության արվեստը, որը 10—13-րդ դարերում նշանակալից նվաճումներ է ունեցել։ Հանդես են գալիս գրական փայլուն և հարուստ ձիրքերով օժտված լուսապսակ, պայծառ դեմքեր, որոնք իրենց հոյակապ ստեղծագործություններով նորություններ են բերել հայ գրականությանը և հարստացրել հայ մշակույթի գանձարանը։*

*Արդ, համառոտակի ցույց տանք, թե մինչև Իգնատիոսի երևան գալը ի՞նչ պատկեր էր ներկայացնում հայ նկարչությունը, մանավանդ մանրանկարչությունը, որոնց նմուշները զարդարում են ձեռագիր գրքերի էջերն ու լուսանցքները։ Ճիշտ է, 6-րդ դարի հայ մատենագիր Վրթանես Քերթողը խոսում է իր ժամանակի մանրանկարչության մասին, բայց փաստն այն է, որ միայն 10—11-րդ դարի ձեռագրերում ենք տեսնում ուշադրության արժանի արվեստ։ Այդ տեսակետից ուրույն արժեք ունի Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում (Ձեռագրատանը) գտնվող փղոսկրյա նուրբ կազմով ձեռագիր Ավետարանը։ Դա արվեստի մի գեղեցիկ հուշարձան է, որի նկարներն ու մանրանկարները իրենց նրբությամբ, ցույց են տալիս 10-րդ դարի նկարչական արվեստի զարգացման բարձր աստիճանը Հայաստանում։ Նշենք և այն, որ 11-րդ դարում իշխում են երկու որոշ հոսանքներ, որոնցից մինը հավատարիմ է մնում արևելյան ոճին, իսկ մյուսը կրում է բյուզանդական արվեստի ազդեցությունը։*

*«Եթե մենք ի նկատի ունենանք հայ ձեռագրական արվեստը մինչև ԺԱ դարի վերջերը և մինչև իսկ ԺԲ դարի կեսերը,— գրում է հմուտ արվեստագետ Գարեգին կաթողիկոսը,— կտեսնենք, որ նորա բնույթը տարբեր է, քան թե այնուհետև երևան եկող երևույթներն են կիլիկյան շրջանում։ Մինչ այդ հայ արվեստի բնույթը արևելյան է, համեմատ յուր դրացիների՝ Առաջավոր Ասիայի ազգերի և Պարսկաստանի հետ ունեցած փոխ-ազդեցության» («Հայաստանյայց եկեղեցի», 1942 թ., № 1)։*

*Նշված նկարներից ու մանրանկարներից շատերը, որոնք գծված են բարձր արվեստով և հիացնում են գեղարվեստագետներին, ցայտուն գաղափար են տալիս ժամանակի նկարիչների նրբին ճաշակի և բարձր արվեստի մասին։*

*Գիտենք և այն, որ 10—14-րդ դարերում գրված ձեռագրերի որոշ նկարներն ուշագրավ են իրենց ուրույն բովանդակությամբ։ Նկարիչները վերծնել են ոչ միայն կրոնական, այլև աշխարհիկ նյութեր։ Այդ օրանչելի մանրանկարներում տեսնում ենք հովվի, զառնարածի, նախրապանի կերպարներ իրենց ինքնատիպ տարազներով։ Ծանոթանում ենք նկարների հետ, որոնցից շատերին առանձին փայլ են տալիս ոսկե երանգավորումները։*

*Այստեղ առաջ է գալիս մի ուշագրավ հարց։ Ընտիր գրչության, զարդանկարչության ու մանրանկարչության արվեստները Հայաստանի ո՞ր վայրում են զարգանում։ Միջնադարում առանձին փայլ են ստանում Արևելյան Հայաստանի նշանավոր կենտրոնները՝ հոչակավոր Տաթևը, Գլաձորը, Հաղբատը կամ Նորավանքը, Տարոնը և Աղթամարը։ Էլ չենք ընդգծում Սկևռան ու Կարմիր վանքը։ Ահա արվեստի այդ նշանավոր կենտրոններում հայ վարպետ մանրանկարիչներն ստեղծագործում են մեկը մյուսից ավելի գեղեցիկ նկարներ։ Նշենք և այն, որ 12-րդ դարի կեսերից հետո ձեռագրերը գրվում են է՛լ ավելի գեղարվեստորեն և զարդարվում նուրբ նկարներով։ 12-րդ դարի վերջերին՝ 1197 թվին գրված, նկարչական արվեստի մի գլուխգործոց է Սկևռայի Ավետարանը, որի մոտիվների ճոխությունն ու զանազանությունը, գույների նրբությունը առանձին երանգ են տալիս ձեռագրին։*

*13-րդ դարի երկրորդ քառորդից հետո Կիլիկիայի իշխանության շրջանում, հայ գրչության, գեղագրության և մանրանկարչության արվեստները իրենց բարձրագույն զարգացման շրջանն են ապրում։ Եվ դա շնորհիվ գիտության ու արվեստի լավագույն մեծ դպրոցների և քաղաքական-տնտեսական բարենպաստ պայմանների։ Ահա դրանցից Կիլիկիայում Հռոմկլայի հայտնի դպրոցը, ուր հայ արվեստագետները վրձինել են իրենց գեղարվեստական ուշագրավ գործերը։ Ահա և Դրազարկի ու նրա հետ կապված Գռների և Ակների վանքերը, որտեղ առանձին փայլ են ստանում զարդանկարչությունն ու մանրանկարչությունը։ Ուշագրավ է և այն, որ այդ դպրոցները հովանավորում են Կիլիկիայի հայ թագավորները, իշխաններն ու բարձրաստիճան հոգևորականները—Հեթում Ա արքան, Լևոն Գ և թագուհի Կեռանը, Հեթում Բ, Կոստանդին*



Մարկոս Ավետարանի առաջին էջը
Գրիչ և ծաղկող՝ Իգնատիոս, վայր՝ Հռոմկլայի վանք, 1231 թ.։
(Հայկ. ՍՍՌ Պետ. մատեն. ձեռ. № 1519)

և կաթողիկոսը և ուրիշները։ Այդ գեղարվեստների և մեկենասների նյութական գործունեության շնորհիվ Կիլիկյան հայ գեղագրության, մանրանկարչական և գրչագրական արվեստները կերտում են պարծանքի արժանի գեղեցկություններ։ Այդ ձեռագրերից հիշատակության արժանի են Հեթում Բ-ի ճաշոցը, Հովհան Երզնկացու փառահեղ Աստվածաշունչը, Լևոն Գ-ի ճաշոցը և հատկապես Ներսես Լամբրոնացու համար նկարազարդված Նարեկը, որոնք հայ գեղարվեստի սքանչելի ստեղծագործություններ են։ Առհասարակ, կիլիկյան շրջանում առաջ են գալիս տաղանդավոր նկարիչներ, մանրանկարիչներ, վարպետ գեղագրեր, ծաղկողներ, ոսկողներ, որոնց վարպետորեն մշակած գեղարվեստական ստեղծագործությունները մարմնացնում են հայ ժողովրդի մանրանկարչական և գեղագրական արվեստի վսեմ գծերը։ Ահա դրանցից փայլուն կերպով օժտված հռչակավոր մանրանկարիչ Թորոս Ռոսլինը, 13-րդ դարի լուսավոր ու բեղմնավոր մի արվեստագետ, որի անունը սերտ կերպով կապված է մշակութային մի մեծ կենտրոնի՝ Հռոմկլայի դպրոցի արվեստի հետ, և որի պարծանքն է նկարիչը։

Կիլիկյան տաղանդավոր նկարիչների շարքում պատվավոր տեղ է գրավում նաև մի ո՛չ վաստակավոր և պայծառ արվեստագետ. Դա 13-րդ դարի առաջին կեսի խոշորագույն մանրանկարիչ Սարգիս Պիծակն է. նա իր վրձինի ստեղծագործություններով հարստացրել է հայ մանրանկարչական արվեստի գանձարանը։

Սակայն կիլիկյան մանրանկարչական արվեստի փառքն ու պարծանքն է կազմում Թորոս Ռոսլինի տաղանդը և առաջնակարգ վարպետ մանրանկարիչ Հովհաննեսը, որի վրձինած հոյակապ մանրանկարները ոչ միայն կիլիկյան նկարչական արվեստի ամենագեղեցիկ էջերն են, այլև իրենց ինքնատիպ, նուրբ ոճով, բանաստեղծական խորությամբ և երանգների աննման ներդաշնակությամբ հիացմունք են պատճառում արվեստագետներին։

Արվեստի վաստակավոր գործիչ Լ. Ա. Դուռնովան «Հին հայկական մանրանկարչության» ալբոմի ներածության հոդվածում գտնում է, որ Կիլիկիայի հայ մանրանկարիչները, մասնավորապես Ռոսլինը, առաջ են քաշել և լուծել այնպիսի հարցեր, որոնք հետագայում մշակվել են միայն Վերածննդի ժամանակ։ Նրա կարծիքով, Ռոսլինը առաջին հաստատուն քայլերն է արել Վերածննդյան դարաշրջանի արվեստի ուղղությամբ[1]։

Ահա այդ անվանի նկարիչների շարքում իր արժանի տեղն ունի նաև վարպետ գրչագիր, ծաղկագիր և մանրանկարիչ Իգնատիոսը։

***

13-րդ դարի անվանի մանրանկարչի կյանքի ու ստեղծագործության հիմնական էջերի մասին ավելի հստակ գաղափար տալու համար այստեղ առաջ բերենք հայ մամուլում արձանագրված բանասիրական գրականության պատկերը։

Դեռ 1933 թվականին Երուսաղեմի «Սիոն» ամսագրում (հունիս-հոկտեմբեր) տաղանդավոր մանրանկարչի մասին լույս է տեսնում մի ուշագրավ հոդված։ Երկու տարի անց, 1935 թվին, «Իգնատիոս մանրանկարիչ և Նոթառկյանց տոհմը» վերնագրով «Սիոն»-ում հրատարակված նյութը լույս է տեսնում առանձին պրակով։ Ապա 1936 թվին, նկարչի մասին կարդում ենք նաև «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթում։

1. Առաջին հաստատուն քայլերի պատիվը պատկանում է ոչ թե Թորոս Ռոսլինին, այլ նրա ուսուցիչներ Հովհաննեսին և Կիրակոսին։

Այդ երեք արժեքավոր նյութերի համար պարտական ենք հայ արվեստի փայլուն և վաստակավոր մշակ Տ. Գարեգին կաթողիկոս Հովսեփյանին։ Երեք տարի հետո, 1939 թվին, Արշակ Չոպանյանի «Անահիտ»-ում (№ 3) «Իգնատիոս մանրանկարիչ» խորագրով մի հոդված է գրում Հարություն Քյուրքճյանը, որը բազմաթիվ սխալներ է թույլ տալիս թե՛ հիշատակարաններում և թե՛ արված բացատրությունների մեջ։ Այնուհետև անցնում է ամբողջ 4 տարի և միայն 1943 թվին, «Հայաստանյայց Եկեղեցի» ամսագրի № 9-ում Տ. Գարեգին կաթողիկոսը Իգնատիոսի մասին լույս է ընծայում մի նոր հոդված։ Դա այն շրջանն էր, երբ Սպահանի Նոր-Ջուղա արվարձանում ուսումնասիրում էր Ամենափրկիչ վանքի մատենադարանում գտնված № 36 Իգնատիոսի վարպետ գրչով գրված և հմուտ վրձինով նկարազարդված մագաղաթյա Ավետարանը։ Այդ նյութը տպագրվեց Թեհրանում հրատարակվող «Լույս» ամսագրի 1944 թվի 11—12 և 1945 թվի 1, 2 և 3 համարներում։ Այնուհետև, 1947 թվին, արվեստագիտուհի օրիորդ Սիրարփի Տեր-Ներսեսյանը «Բազմավեպ»-ի № 11—12-ում անդրադարձավ Ս. Ղազարի (Վենետիկ) № 151 ոսկով և երանգ-երանգ խառնուրդով զարդարված Ավետարանի բովանդակությանը։

Իգնատիոս մանրանկարչի մասին տեղեկություններ կարդում ենք նաև Գարեգին կաթողիկոսի «Հիշատակարանք ձեռագրաց» արժեքավոր հատորի 768, 898—900 և 909—926 էջերում։

Հայ մամուլում լույս տեսած բանասիրական գրականության ավյալներն էլ վկայում են, որ 13-րդ դարի նշանավոր մանրանկարիչ և գեղագիր Իգնատիոսի գրչական և նկարչական արվեստի վերլուծությամբ զբաղվել են ոչ միայն Գարեգին կաթողիկոսը, այլև Ս. Մելիք-Հակոբյանը «Բազմավեպ»—ում (1924 թ., էջ 325—328), Հ. Քյուրքչյանը՝ «Անահիտ»-ում և ուրիշները՝ «Լույս»-ում։

⁂

13-րդ դարի մանրանկարիչ և գրիչ Իգնատիոսի մանրանկարչական գործունեությանն ու գրչության արվեստին պատիվ են բերում երեք հայտնի գեղարվեստական արժեք ունեցող ձեռագրեր, որոնք ընդգրկում են երեք տարբեր թվականներ՝ 1214, 1232 և 1236։ Այդ թվերն էլ որոշում են վաստակավոր նկարչի ստեղծագործության ժամանակաշրջանը։

Գրչագրերից առաջինը Հավուց Թառի Ավետարանն է, երկրորդը՝ Բագնայրի, երրորդը՝ Խծկոնք վանքի։ Մեծատաղանդ ճարտարապետ Թորոս Թորամանյանն իր «Հայկական ճարտարապետություն» խորագրով գրքի 310-րդ էջում Խծկոնք պատմական վանքի մասին արձանագրել է այսպես. «Տեկորի հնագարյան եկեղեցիի արևմտյան կողմը, երկու կամ երեք կիլոմետր հեռավորության վրա, Տեկորի գետի ձորի բարձունքներում հիմնարկված է Խծկոնք կամ Խծկունք վանքը, որ ներկայիս ծանոթ է Բեշ-քիլիսէ անունով»։



Ղուկաս Ավետարանի առաջին էջը

Գրիչ և ծաղկող՝ Իգնատիոս. վայր՝ Հոռոմոսի վանք, 1231 թ.։

(Հայկ. ՍՍՌ Պետ. մատեն. ձեռ. № 1519)

13-րդ դարի Հայաստանի այդ մեծ վանքը մեկն է այն խոշոր կենտրոններից, որը իր ժամանակի մտավոր շարժման մեջ որոշակի դեր է կատարել և որի միջոցով առանձին գուրգուրանքով ու մեծ խնամքով պատրաստվել են հայ արվեստի ու գրականության թանկագին շատ նմուշներ։ Այդ կարգի ձեռագրերից մեկն է 1236 թվականին գրված Ավետարանը։ Առհասարակ Իգնատիոսի երեք ձեռագրերն էլ, որոնք հարուստ են ընդարձակ հիշատակարաններով և պատմական ժամանակագրական տեղեկություններով, ընդգրկում են մի կարևոր ժամ-

դամանք, որ Իգնատիոսը հանդիպացել է ոչ միայն Հոռոմոսի վանքի² (Անիի մոտ), այլև Հաղվաց Թռոփ և Խծկոնք վանքերի գրիչ և մանրանկարիչ։ Նկարչական այդ թանկագին ձեռագրերի գեղարվեստական մանրանկարները և արտաքին երկաթագրերն այսօր ցայտուն գաղափար են տալիս Իգնատիոսի մանրանկարչական և գրչական ու գեղագրական արվեստների նմուշների մասին, մի արվեստագետի, որը հանդիսանում է 13-րդ դարի նկարչական մշակույթի նշանավոր նկարիչներից և գրիչներից մեկը և որի ստեղծագործությունները արժանի են ուսումնասիրության։

***

Մանրանկարիչ և գրիչ Իգնատիոսի արվեստը պատկերող ձեռագրերից մեկը պահվում է Վենետիկի Ս. Ղազար կղզում։ Դա № 151 Ավետարանն է, որ 13-րդ դարի մանրանկարչական արվեստի նմուշներից մեկն է։ Հիշատակենք նաև Երևանի Պետական մատենադարանում (Ձեռագրատունը) գտնվող երկաթագիր մագաղաթյա գրչագիրը՝ № 1519,

Նկարչի մի այլ գրչագրական և մանրանկարչական արվեստի կարևոր աշխատանքը խնամքով պահված է Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանում։ Դա № 36 նշանավոր մագաղաթյա Խծկոնք վանքի Ավետարանն է, որ իր նկարչական և գրչագրական արվեստով հիշյալ մատենադարանի 13-րդ դարում գրված ձեռագրերի շարքում ուրույն տեղ է գրավում։

Սակայն Իգնատիոսից մինչև օրս հայտնաբերված ձեռագրերի պատկերը լրիվ գծելու առումով պետք է ասել, որ նրա գրչի և վրձինի հետաքրքիր մեկ գործը գտնվում է Չիկագոյի համալսարանի մատենադարանում, իսկ մյուսը՝ Կալիֆորնիայում և մասնավոր սեփականությունն է Վ. Սիմոնյանի։

Իգնատիոսի այլ ձեռագրերի մասին գաղափար կազմելու համար պետք է կարդալ նաև «Հայաստանի կոչնակ»-ում (1936 թ., էջ 492) Գարեգին կաթողիկոսի հոդվածը։

Մանրանկարչի վրձինից ու գրչից ուրիշ գործեր ինձ հայտնի չեն. գուցե անհայտացել են կամ քաղաքական փոթորիկների ժամանակ ոչնչացել։

***

Իգնատիոսի մանրանկարչական և գրչագրական արվեստները գնահատել են արվեստագետ բանասերները։ Դրանցից առանձնապես նշում ենք հմուտ բանասեր, արվեստագետ Տ. Գարեգին կաթողիկոս Հովսեփյանին, որ «Հայաստանյայց Եկեղեցի» ամսագրի № 11-ում (1940 թ.) մանրանկարչի մասին գրել է հետևյալը. «... Իգնատիոսի մասին մենք ունենք հատուկ ուսումնասիրություն. հայտնի են նրա մի քանի գեղագրական և գեղարվեստական արժեք ունեցող գործերը... Բայց նա ունի և ուրիշ գործեր էլ բանասիրության դեռ անհայտ... Երեք հաստատուն թվական ունենք Իգնատիոսի կյանքի հետ կապված՝ 1214, 1232 և 1236. առաջինը Հաղվաց Թռոփ Ավետարանի թվականն է, երկրորդը Բագնայրի, երրորդը Խծկոնքի. երեք ձեռագրերն էլ ընդարձակ հիշատակարաններով և պատմական ժամանակագրական տեղեկություններով։ Բարեբախտաբար վերջին Ավետարանի մեջ հիշատակված է նաև Իգնատիոսի աշակերտը՝ Հովսեփ»։

Բանանք նաև Վենետիկի Ս. Ղազարի Մխիթարյան միաբանության պաշտոնական ամսագիրը՝ «Բազմավեպ»-ի 1947 թվի № 11—12-ը, որտեղ 270-րդ էջում, գեղարվեստագետ օրիորդ Սիրարփի Տեր-Ներսեսյանը մանրանկարիչ Իգնատիոսի մասին գրել է այսպիսի բնորոշ տողեր. «... Նկարչության համար այս շրջանի (13-րդ դարու սկիզբը) աչքառու դեմքն է Իգնատիոս նկարիչը, որ աշխատած է Հոռոմոսի և Հաղվաց Թռոփ նշանավոր վանքերուն մեջ։ Գարեգին կաթողիկոս ուսումնասիրած է այս նկարչի գործունեությունը, և այս գործունեության նմուշներեն մեկն է Ս. Ղազարու թիվ 151 Ավետարանը «ոսկիով և երանգ-երանգ խառնուածով զարդարեալ»։ Բյուզանդական ազդեցությունը և Իգնատիոսի ոճը ավելի զուտ հայկական և արևելյան է»։

***

Իգնատիոս մանրանկարչի նկարազարդ գրչագրերի էջերն ուսումնասիրող բանասերը գտնում է 13-րդ դարաշրջանի ո՛չ միայն հայ մանրանկարչության, գեղագրության ու գրչության արվեստների, այլև հայ ժողովրդի պատմության, լեզվաբանության և ազգագրության վերաբերյալ թանկագին նյութեր, երևույթներ, որոնք բարձրացնում են նրա ձեռագրերի գեղարվեստական և հասարակական արժեքը։ Առհասարակ, Իգնատիոսի ավանդ թողած գրչագրերն անգնահատելի հիշատակարաններ են, որոնք գալիս են հարստացնելու հայ արվեստի պատմության էջերը։

Իգնատիոսի ձեռագրերին առանձին փայլ են տալիս զարդագրերը, որոնք հայ մանրանկարչության պատմության մի կարևոր էջն են կազմում։ Այնտեղ տեսնում ենք երկրաչափական և հյուսվածքի հիմնական մոտիվ-

2. Իգնատիոսի մշտական բնակության վայրն էր Հոռոմոսի վանքը։

ները, երևույթներ, որոնք մանրանկարչական տառերի էական հատկանիշներ են։ Զարդերի զանազանությունը, ճոխությունը, ներդաշնակությունը և մանրանկարչական պես-պես գծագրությունները վկայում են Իգնատիոսի վառ երևակայության և գեղագիտական ճաշակի մասին։ Առհասարակ, նրա ձեռագրերի զարդագրերը մանրանկարչի տաղանդի և հայ արվեստի գեղեցկության ցայտուն ապացույցն են։

Իգնատիոսի վրձինած աստվածաշնչական գունագեղ նկարներից շատերը գաղարվեստական նուրբ գործերի տպավորություն են թողնում։ Այդ պատկերներից հատուկ ուշադրության արժանի էն մի շարք դիմանկարները, որոնք գրավում են մեզ իրենց նրբությամբ։ Այդպես են, օրինակ, 1236 թվականին, Տեկորի պատմական մեծ վանքում գրած գրչագրի «Խաչելությունը» և «Ննունդը» նկարները։ Վրձինի հաջող գծագրություններ են նաև «Քրիստոսի ընծայումը Տաճարին», «Հարություն Ղազարու», «Չորս ավետարանիչները», «Սիմեոն ծերունին» և այլն, որոնք ընդգծում են նկարչի վրձինի իրապաշտական բնույթը։ Անտեղ արվեստագետի վրձինը կերտել է ցայտուն կերպարներ, արտահայտելով նրանց բարեպաշտ և ջերմեռանդ ոգին։ Դրանցից մի քանիսի բնորոշ դեմքերի արևելյան արտահայտությունները իրենց ուրույն դիմագծերով՝ կարճ մորուք, արտահայտիչ աչքեր, ոմանց էլ դիմանկարների միջամաղձոտ արտահայտությունն ու լրջությունը կամ վեհությունն ու նրբությունն առանձին դրավչություն են տալիս կերպարների դեմքերին և վկայում, որ Իգնատիոսը 13-րդ դարի ամենագույն դիմանկարիչներից մեկն է[3]։

Արվեստի նրբություն և գեղեցկություն ունեն նաև Իգնատիոսի ձեռագրերի խորանազարդերը, որոնք որքան պարզ են, նույնքան էլ գեղեցիկ են և տպավորիչ։ Ընդգծենք և այն, որ վրձինված նկարներում տեսնում ենք ո՛չ միայն ինքնատիպ արվեստ, հարուստ, բազմազան և գեղեցիկ հյուսվածք, հատկանիշներ, որոնք վկայում են 13-րդ դարի նկարչի վրձինի հմտության մասին։

Իգնատիոսի մանրանկարները և նկարչական պես-պես տառերը, իրենց երկրաչափական, բուսական և հյուսվածքի մոտիվներով, անկասկած, չի կարելի համեմատել, օրինակ, Երուսաղեմի № 2556, Վենետիկի Ս. Ղազարի № 1400 և Էջմիածնի № 369 (գրված 1066 թ.) ձեռագիր ավետարանների հետ, որոնք հայ մանրանկարչական արվեստի գլուխգործոցներ են։ Սակայն, մի հանգամանք պարզ է, որ Իգնատիոսը, շնորհիվ իր հմուտ վրձինի, թե՛ մանրանկարչության, թե՛ գեղագրության և թե՛ գրչության արվեստները հասցրել է գեղարվեստական որոշ բարձրության։ Այդպես է նրա արվեստը, օրինակ, 1236 թվականի ձեռագրում, որտեղ նա փայլում է իր վրձինած մի շարք մանրանկարներով ու զարդագրերով։ Նրբին գեղագրության դրոշմ են կրում առանձնապես գրչագրի Գ, Ս, Ք մեծադիր գունագեղ և ոսկեզօծ մանրանկարչական գլխատառերը և նրանց հաջորդող փոքրատառերը, որոնք երկրաչափական և հյուսվածքի գեղեցիկ մոտիվներ էն և գրավում են կապույտ, ոսկի, կարմիր և ա՛յլ երանգների հարուստ և այնքան ներդաշնակ ու սիրուն ծաղկումով։ Թարդ չեն գույները, սակայն զարդերը գրավիչ են, քնքուշ և նուրբ, ինչպես կիլիկյան շրջանի 13—17-րդ դարերի շատ ձեռագրերի զարդագրերը։ Առհասարակ, Իգնատիոսի զարդագրերի մեջ շատ կարևոր դեր են կատարում ո՛չ միայն գույների համադրությունն ու ներդաշնակությունը, նրանց կենդանի, խոսուն առանձնահատկությունները, այլև գեղարվեստական մոտիվները, որոնք իրենց լռությամբ վկայում են Իգնատիոսի մանրանկարչական հմուտ վրձինի և նրա արվեստի նրբության մասին։ Ընդհանրապես, նկարչի ձեռագրերի զարդագրերը հայ մանրանկարչական պատմության կարևոր մի էջն են կազմում և գեղագրության լավագույն նմուշներ են։

Արձանագրե՛նք և այն, որ Իգնատիոսի մանրանկարչական և գեղագրական արվեստում նկատելի են նրա անհատական ստեղծագործության ուրույն գծերը, նկարչի առանձնահատուկ էությունը, առավելությունը և գնահատելի գիծն այն է, որ նա մեքենայական կերպով չի հետևել իր ժամանակի միայն սովորական, ընդունված ձևերին, այլ ստեղծագործել է ինքնուրույն, անձնական գծերով և արտահայտություններով նայե՛ք նրա վրձինած գունագեղ, գրավիչ, սիրուն գեղագրերին, նուրբ դիմանկարներին, խորանների գեղարվեստական ձևերին, մանրանկարչական գեղեցիկ արվեստին ու զարդարանքներին, որոնք իրենց վրա պահում են նկարչի ինքնուրույն դրոշմը և հայկական արևելյան գեղարվեստի ու ոճի առանձնահատկությունները։ Իգնատիոսի արվեստի բնույթը, իր էությամբ, արևելյան է և նոտ սիրիական պատկերագրության։ Նույն երևույթն է ընդգծել Տ. Գարեգին կաթողիկոս

3. Այստեղ ընդգծենք մի էական հանգամանք։ Բուն Հայաստանի վարպետ գրչագրերի սուրբգրական նկարների դիմագծերն իրենց վրա կրում են զուտ արևելյան դրոշմ, խոշոր գծեր, մուգ, պղնձագույն դեմքեր, մեծ մասամբ մորուսավոր, ունեն հայկական երեսներ, իսկ կիլիկյան շրջանի շատ նկարներում նկատվում է լատինական ազդեցությունը՝ դեմքերը մաքուր, ածիլված, զգեստները կլասիկ ու ծալքերով։



Մի էջ Ղուկասու Ավետարանից

Գրիչ և ծաղկող՝ Ռոսլին Թորոս, վայր՝ Հռոմկլայի վանք, 1251 թ.։

(Հայկ. ՍՍՌ Պետ. մատեն. ձեռ. № 1519)

Հովսեփյանը։ Ահա նրա տեսակետը. «Բայց ավելի կարևորն այն է, որ... Ռոսլինի արվեստը զուտ արևելյան բնույթ ունի, ազատ բյուզանդական ազդեցություններից, և ավելի մոտ սասանյան և միջագետքյան-արաբական ավանդների... Նկարներն ավելի նմանություն են բերում սիրիական պատկերագրության, քան բյուզանդականին։ Այսպես են առհասարակ մեր 13-րդ դարի հայունի ավետարանները, ինչպես Հաղբատի, Թարգմանչաց և մյուս իշխանական ձեռագիրները»։

Ռոսլինի նկարներից երևում է, որ նա հմուտ ու ճշտորեն արտահայտել է հայկական ինքնուրույն ոճը, ապրել է նա հայ արվեստով և, որ էականն է, հարազատորեն պատկերացրել է հայ մանրանկարչության և գեղագրության ոգին ու էությունը։ Նարծ Ռոսլինի մանրանկարների ու գեղագրերի մեծ մասը պարզ, բայց խորունկ ստեղծագործության նմուշներ են, որոնք իրենց լռությամբ վկայում են նրա մշակված, փարթամ վրձինի, հմուտ տեխնիկայի և, վերջապես, ինքնատիպ արվեստի մասին։

***

Ռոսլինի նկարչական արվեստում իշխում են գլխավորապես կապույտ, կանաչ, կարմիր, դեղին, ոսկեգույն երանգները, որոնք առանձին ազնվություն են տալիս նրա մանրանկարներին։ Նրա արվեստում գերիշխող գույներից կապույտը, կանաչը, մասամբ դեղինը ո՛չ միայն լուրջ են, տպավորիչ, ո՛չ միայն Արևելքի գեղեցկագիտական ճաշակի և մտքի արտահայտություններ են, այլ և իրենց տպավորությամբ համապատասխանում են նկարչության մեջ արտահայտված մտայնության և հոգեբանության։ Առանձնապես բնորոշ է կապույտ երանգը, որ նկարիչը գործածել է ավետարանիչների պատկերների, ինչպես և այլ բազմաթիվ գործողությունների, խորանների շրջանակների և զարդանկարների մեջ։ Բայց դա պատահական մի երևույթ չէ։ Կապույտ երանգը խորը և նշանակալից դեր է կատարում նկարչական արվեստում, մի հանգամանք, որը խորապես հասկացել են ո՛չ միայն հայ դասական նկարիչները, օրինակ՝ Գրիգոր Երեցը, այլև նորագույն հմուտ արվեստագետները։ Այդ տեսակետից հատկապես մեր [illegible] գնում ենք տպավորիչ նկարիչ Սարգիս Խաչատրյանի նկարչական արվեստի վրա, որը բնորոշվում անհաման կապույտ երանգի գեղարվեստական առանձնահատուկ տեսքը. լայն կերպով օգտագործել է այն իր նկարներում։ Ահա թե ինչու նրան կարելի է անվանել կապույտ գույնի բանաստեղծ-նկարիչ։ Եվ իրոք, կապույտը, որ այնպես գերազանցորեն իշխում է նրա արվեստում, ո՛չ միայն առանձին փայլ է տալիս նրա նկարներին, այլև բարձրացնում է նրանց նկարչական արժեքը։

Նույն երևույթը տեսնում ենք Ռոսլինի նկարներում։ Կապույտից հետո կարմիրն ու կանաչը մեծ չափով իշխում են նրա ոչ միայն նկարներում, այլև խորանազարդերի ու զարդանկարների մեջ։ Նույնպես տեղ-տեղ աչքի են ընկնում դեղին, սպիտակ, ոսկեգույն և այլ երանգները։

***

Ռոսլինի գրչության արվեստի հատկանշական գծերը պարզելուց առաջ հիշենք, որ Մեսրոպյան երկաթագրով գրված հին ձեռագրերը, մինչև 10-րդ դարը, անզարդ են և անպաճույճ, իսկ կիլիկյան շրջանի ծաղկուն ձեռագրերն են երկաթագիր են, հետո միայն մշակվում և տիրապետող է դառնում կիլիկյան բոլորագիրը, որ տարբեր է արևելյան բոլորագրից, որին առավել են նման երկաթագիրը։

Այդ տեսակետից ուշագրության արժանի է նաև Իգնատիոսը, որի գրչության արվեստի գեղեցկությունը տեսնում ենք նրա արժեքավոր ձեռագրում։ Դա 1236 թվին ընդօրինակված Ավետարանն է, որ իր գրչության արվեստով մի սքանչելի ստեղծագործություն է։ Սկսած սկզբից մինչև վերջը, 404 մեծադիր ընտիր մագաղաթների վրա, սև, թանձր, իսկ նոր տողից սկսող նախադասությունները կարմիր թանաքով և երկայուն դրոշմված նույն երկաթագրերը շատ գեղեցիկ են ու ներդաշնակ։ Գրված են արտակարգ խնամքով, տառերը չափազանց նման են միմյանց և տողերն այնքան մարգարտաշար, որ միանգամայն տպագիր գլխատառերի տպավորություն են թողնում, մի երևույթ, որը ոչ միայն բարձրացնում է ձեռագրի գեղարվեստական արժեքը, այլև վկայում, թե 13-րդ դարի առաջին շրջանում երկաթագիր գրչության արվեստը Տեկորի վանքում ինչպիսի նրբության և բարձր զարգացման է հասել, միաժամանակ վկայում տաղանդավոր արվեստագետ Իգնատիոսի ուրույն ձևակերպված գրչի հմտությունը։ Առհասարակ Ավետարանի երկաթագիր տառերն իրենց նրբին գեղագրությամբ և ներդաշնակությամբ ցայտուն գաղափար են տալիս Իգնատիոսի մշակած և ուրույն կերպարանք ստացած գեղեցիկ ձեռագրի և նրա գրչության արվեստի բարձր աստիճանի մասին։ Այդ սքանչելի երկաթագրերով նա զարկ է տվել իր ժամանակի գրչության արվեստին։ Սակայն, պետք է ասել, որ Իգնատիոսն ունի տարբեր գրչության գրություններ, նրա գրչությունը Բագնայրի Ավետարանի մեջ տարբեր է նույն ձեռագրի հիշատակարանների գրչությունից, թեև երկուսն էլ իր գրչին են պատկանում։ Ահա թե ինչու 13-րդ դարի տաղանդավոր հայ գրչագրերի և գեղագրերի շարքում նա իր պատվավոր տեղն ունի։



Հովհաննու Ավետարանի առաջին էջը
Գրիչ և ծաղկող՝ Իգնատիոս, վայր՝ Հոռոմոսի վանք, 1231 թ.։
(Հայկ. ՍՍՌ Պետ. մատեն. ձեռ. № 1519)

⁂

Իգնատիոսի մանրանկարչական արվեստում հիշվում են նաև ազգագրական արժեքավոր նյութեր։ Դրանք ավանդական պատկերացումներ են։ Ծալքավոր զգեստների և զարդարանքների մեջ արտացոլում են միայն տեղական բնույթն ու արվեստը, ինքնատիպ վրձինի անկախ ձեռներեցությամբ։ Հատկապես ո՛րքան գեղեցկություն և գույների սքանչելի ներդաշնակություն կա ավետարանիչների կլասիկ հագուստների և ծալքերի մեջ, որոնք իրենց ուրույն ոճով ցայտուն գաղափար են տալիս ո՛չ միայն ժամանակաշրջանի տարազների, այլև նրանց պես-պես ձևերի, կտորների և կերպասների մասին։ Եվ եթե ցանկանում ենք ծանոթանալ, թե ի՛նչ էր ներկայացնում հայ ժողովրդի տարազն այդ դարաշրջանում, հարկավոր է դիմել Իգնատիոսի նկարները, որոնք իրենց ամբողջությամբ ցայտուն ու պերճախոս աղբյուրներ են։ Այնտեղ կենդանի գույներով վրձինված են ժամանակաշրջանի որոշ տարազները, իրենց բնորոշ, առանձնահատուկ գույներով, նրբությամբ և գեղեցկությամբ, որոնք ո՛չ միայն գաղափար են տալիս ժամանակի զգեստի տիպիկ ձևերի, այլև ժողովրդի ճաշակի ու նրբության մասին։ Այդ տեսակետից էլ Իգնատիոսի ձեռագրերի նկարները ոչ միայն պատմական, այլև ազգագրական խոշոր արժեք ունեն։

⁂

Անժխտելի է, որ ձեռագիր հիշատակարանները ամենից վավերական աղբյուրներն են մեր դեռ չգրված իսկական պատմության համար։ Այդ տեսակետից էլ դրանք խոշոր արժեք են ներկայացնում։ Այդպես է, օրինակ, Իգնատիոսի գրած Խծկոնի մագաղաթյա ձեռագիրը, որի արժեքավոր և հատկանշական երևույթներից մեկը պատմական-ժամանակագրական տեղեկություններն են,

տարոնց մեջ կան թեև սեղմ, բայց լիարժեք տաղեր հայ ժողովրդի հեռավոր դարերի հերոսական պատմության համար։ Նա Կիլիկիայի Հեթում Ա-ի թագավորության (1226 թ.) և միաժամանակ թաթարական մոնղոլ-թաթար ցեղերի գերիշխանության ու հարստահարությունների ժամանակաշրջանն է։

1236 թվին, թաթարների 20.000-անոց մի զորաբանակ, Չարմաղան զորավարի առաջնորդությամբ, արշավում է դեպի Անդրկովկաս։ Պարսկաստանը նվաճելուց հետո Չարմաղանը մտնում է նախ Մուղանի տափաստանը, ապա հարձակվում Գանձակի վրա։ Չնայած քաղաքի բնակիչները — հայերը, պարսիկները և ադրբեջանցիները — ուժեղ դիմադրություն են ցույց տալիս, բայց դրսից օգնություն չստանալով պարտվում են։ Մոնղոլները գրավում են քաղաքը, բնակիչներին կոտորում և մի մասն էլ գերի տանում։ Այնուհետև Չարմաղանի բանակը, երեք տարբեր գծերով, արշավում է Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի զանազան շրջանների վրա։ 1236 թվին, թաթարների արյունարբու խմբերը, Չարմաղանի առաջնորդությամբ, առաջին անգամ մտնում են Հայաստան։ Նրանք միաժամանակ պաշարում են Լոռին և Սյունիքը։ Սարսափելի տեսարան է ներկայացնում այն մեծագլուխ, անմորուս, նեղաչվի, տափաքիթ, թանձրաշուրթն, բոկոտն և սրաձայն բարբարոսների բազմությունը, որոնք անխնա կոտորում են, կաթնակեր մանուկներին քարերին խփում, մատաղահաս աղջիկներին հափշտակում։

«Հայոց աշխարհը ծածկվեց դիակներով,— գրում է Կիրակոս Գանձակեցի ժամանակակից պատմիչը,— ոչ ոք չկար, որ թաղեր նրանց, որովհետև կենդանի մնացողները անծանոթ տեղեր թաքչում էին անօրենների սրից ազատվելու համար»։

Այնուհետև մոնղոլական զորքերը նվաճում են Արարատյան դաշտը, Շիրակը, ապա դիմում դեպի Բագրատունյաց մայրաքաղաք Անին։ Նախքան քաղաքի պաշարելը, Չարմաղանը դեսպաններ է ուղարկում անեցիներին, որ անմիջապես անձնատուր լինեն, բայց նրանք վստահ իրենց ուժի և քաղաքի հաստ պարիսպների վրա, ոչ միայն մերժում են առաջարկը, այլև սպանում ուղարկված դեսպաններին։ Չարմաղանը, զայրացած, Անին պաշարում է։ Հայ մեծամեծները, դժբախտաբար, քաղաքը հանձնում են թշնամուն, որի հետևանքով մի սոսկալի տեսարան է բացվում։ Թաթարները մտնում են Անի, տներն ու եկեղեցիները կողոպտում, ժողովրդին անգթորեն կոտորում և մեծ մասը գերի տանում։ Այդ ժամանակ էլ կործանվում են և բանդվում Անիի գեղարվեստական կոթողները։

Իգնատիոսի ձեռագիր Ավետարանի վկայությամբ Չարմաղանի հալածանքներից գերծ չեն մնում նաև վրացիներն ու տաճիկները։ Ահա թե ինչու ձեռագրի էջ 404-ի հիշատակության պատմական արժեքը կրկնակի տեսակետից ուշագրավ է։

Իգնատիոսի ձեռագիրը պարզում է նաև մի ո՛չ կարևոր հանգամանք։ Մեզանում իշխում է ա՛յն սովորական կարծիքը, թե 13-րդ դարի անիշխանության և ֆեոդալական հարստահարությունների շրջանում հայ ժողովրդի ստեղծագործական կյանքը կանգ է առել։ Սակայն պատմական փաստն այն է, որ հակառակ տիրող ծանր կացության, երբ բարբարոս մոնղոլ-թաթարների հեղեղումով ստեղծվում է Հայաստանում, ինչպես և Առաջավոր Ասիայում, հայ ժողովրդի շինարար ոգին և ստեղծագործող միտքը շարունակում են կերտել։ Այսպես, պատմական վանքերում ճարտար գրիչները արտագրում են նախնիքներից ավանդ հասած գանձերը։ Ճնորհալի նկարիչները նրբին գեղագրությամբ նկարազարդում են ձեռագրերի էջերը, գունագույն ներկում, ոսկեզօծում։ Կանգ չի առնում նաև գրականությունը։ 13-րդ դարի գրական հորիզոնի վրա փայլում են երեք նշանավոր դեմքեր՝ Վարդան Այգեկցի, Ֆրիկ և Կոստանդին Երզնկացի։ Այգեկցին իր հորինած առակներով և նովելներով, որոնք գեղարվեստական բարձր արժեք ունեն և երեվան են բերում ժողովրդի իմաստությունը, սուր ծաղրի է ենթարկում ժամանակի տգետ հոգևորականներին և աշխարհիկ ֆեոդալներին։ Ֆրիկն առաջին բանաստեղծն է, որ մոնղոլական տիրապետության դեմ արտահայտելով ժողովրդի զայրույթն ու ատելությունը, համարձակ բողոքում է ոչ միայն քաղաքական, այլև սոցիալական անհավասարության դեմ։ Նա գտնում է, որ մարդիկ պետք է ապրեն հավասար կյանքով։ Իսկ Երզնկացին, սիրո ու բնության տաղանդավոր բանաստեղծը, երգում է իր «պայծառ սուրաթ»-ով սիրուհուն և բնության բարիքները, որոնց կերտել է Աստված։

Հանդես են գալիս նաև մատենագիրներ, որոնք արձանագրում են ժամանակի քաղաքական մռայլ անցքերը և ժողովրդի անլուր տանջանքները։ Այդ պատմագիրներից հատուկ ուշադրության արժանի են Վարդան վարդապետը, Կիրակոս Գանձակեցին, Սմբատ պատմիչը (Հեթում Ա թագավորի եղբայրը) և Հեթում պատմիչը, որոնց պատմագրության մեջ գտնում ենք կարևոր տեղեկություններ իրենց դժբախտ ժամանակաշրջանի, մանավանդ թաթարական արշավանքի և Հայաստանում նրանց կատարած անգթությունների մասին։

13-րդ դարի մոայլ դեպքերի հարազատ արձանագրության տեսակետից մանավանդ շատ գնահատելի է Իգնատիոսի մագաղաթյա ձեռագիրը, որի երկու հիշատակարաններում, թեև սեղմ, բայց հուզիչ տեղեկություններ կարդում ենք հատկապես Չարմաղան զորապետի բարբարոսության մասին։ Այդ աղբյուրներն առանձնապես արժեքավոր են նրանով, որ միանգամայն նոր էջ են պարզում Անիի ժողովրդի անլուր հերոսական տանջանքների պատկերը գծելիս, նշելով, թե «անողորմ» թաթարները ոչ միայն գրավում են մայրաքաղաքը և անխնա կոտորում, ավերում ու քանդում, այլև բռնակալներին հատուկ անգթությամբ անրիվ մարդկանց ողջ-ողջ թաղում են գրքերի մեջ:

Նկարիչ Իգնատիոսից ավանդ մնացած 1214, 1232 և 1236 թվականների թանկագին ձեռագրերը իրենց նրբարվեստ գրչությամբ, ընտիր գեղագրերով ու դեղեցիկ մանրանկարներով այսօր պարզ գաղափար են տալիս 13-րդ դարի տաղանդավոր գրչագրի և մանրանկարչի պայծառ դեմքի, նրա ինքնուրույն արվեստի մասին։

Այդ արժեքավոր գրչագրերից 1236 թվականին գրված Տեկորի վանքի ու Խծկոնի ուխտի մագաղաթյա Ավետարանի հատկանշական գծերից մեկն այն է, որ իր երկու հիշատակարաններով մեծ ծառայություն է մատուցում պատմական գիտության, նկարում է 13-րդ դարի հայոց պատմության ամենամռայլ մի էջը. գծում է Անիի դրավումը և մայրաքաղաքի ժողովրդի անլուր տանջանքների և այն արյունահեղությունների, կոտորածների և չարչարանքների մասին, որ «մարդադեմ գազան թաթարները» պատճառում են նաև վրաց և տաճիկ ժողովուրդներին, ավերելով նրանց գավառներն ու քաղաքները։

«...Որ եկն ի վերայ ամենայն աշխարհաց Հայոց և Վրաց և Տաճկաց ի մարդադէմ գազանաց՝ դՏաթարէն պատմեսցուք զդառնութիւն և զչարչարանս ժամանակիս... Անթիւ էր աւերումն քաղաքաց և դաւառաց մինչև ի մեր սահմանս որ էր թուականս ՈՁԵ (1236)»։

Եթե հայոց պատմությունը 1236 մռայլ թվականի մասին չունենա մի այլ աղբյուր, միայն այս ձեռագիր փաստաթուղթը բավական է հաստատելու Անիի հայ ժողովրդի ողբերգությունը, որ տեղի է ունեցել թաթար Չարմաղան զորապետի հարվածների ներքո։

Իգնատիոսի ինքնատիպ արվեստը դրսևորում է 13-րդ դարի մանրանկարչական և գրչագրական մշակույթի էական առանձնահատկությունները, միաժամանակ ընդգծում իր ստեղծագործական խոշոր ձիրքը։ Իբրև ձևակերպված և ինքնատիպ արվեստագետ, նա իր հմուտ վրձինով և վարպետ գրչով զարկ է տվել հայ մանրանկարչության, մանավանդ գրչագրության արվեստին։ Ահա թե ինչու հայ գեղարվեստի պատմության մեջ նա ունի իր ուրույն և պատվավոր տեղը։

ՇԱՀԱՆ ՍԻՄՈՆ

# ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

(Մահվան 100-ամյակի առթիվ)

Ռուս-թուրքական պատերազմի օրերին, 1828 թվին, ավելի ծանրացավ քրիստոնյաների՝ մասնավորապես հայերի վիճակը Արևմտյան Հայաստանում. Երկյուղ կրելով, թե հայերը կարող են անցնել ռուսների կողմը, տաճիկները զանազան առիթներ էին որոնում բոլոր քրիստոնյաներին սրի քաշելու։ Տաճկական կառավարությունն ուզում էր մեջտեղից վերացնել Կարապետ արքեպիսկոպոսին, որը կողմնակից էր ռուսական տիրապետության։ Մի կիրակի, երբ Կարապետ արքեպիսկոպոսը պատարագ էր մատուցում, եկեղեցի խուժեցին տաճիկ զինվորները և ստիպեցին նրան պատարագն ընդհատել։ Սրբազանը հաստատապես իմանալով, որ տաճիկները իր կորուստն են կամենում, խորապես զգացված ծունկ է չոքում սեղանի առաջ և իր անձն ու իր հոտը հանձնում աստվածային հովանավորության, ապա դուրս գալիս եկեղեցուց։ Ժողովուրդը սարսափահար փախչում է, ցրվում ու ցրվում եկեղեցուց։

Զինվորները կալանավորում են եպիսկոպոսին և ծեծելով տանում պալատ, որտեղ բազմած էին տաճիկ աստիճանավորները. ներկա էր նաև տաճկական զորաբանակի հրամանատարը։

Կարապետ արքեպիսկոպոսին մեղադրում էին պետական դավաճանության մեջ՝ որպես թե շաբաթ օրը հայերը ինքնագլուխ փակել են խանութները։ Ամբաստանությունը հիմնված էր, թե հայերը ա՛յն նպատակով են փակել, որ կարողանան ավելի հաջող կերպով իրենց տներում խորհրդակցել տերության դեմ ապստամբությունը գլուխ բերելու. և որովհետև պատերազմի ժամանակ էր, հայերի այդ ապստամբությունը կարող էր Էրզրումը մատնել «անհավատ» ռուսների ձեռքը, ուստի ժողովրդին ահաբեկելու նպատակով Կարապետ արքեպիսկոպոսին դատապարտում են մահվան կախաղանի միջոցով։

Անողոք վճիռը չսարսափեցրեց քաջակորով հոգևորականին. Նա համոզված էր միայն, որ այդ դեպքը կարող է նշանակ լինել ամբողջ քրիստոնյաներին սրախողխող անելու։ Նա որոշեց պաշտպանել հայերին։ Նա տաճիկ պաշտոնյաներին հայտնեց, թե հայերը ո՛չ թե ապստամբելու նպատակով են փակել խանութները, այլ տաճիկներին պատվելու, որովհետև շաբաթ օրը տաճկական մեծ տոն էր. եթե այդ հանգստավոր օրը հայերը առևտուր անեին, պիտի նշանակեր, թե նրանք չեն հարգում տաճիկների կրոնը։ Կարապետ արքեպիսկոպոսի բացատրությունը մեղմացնում է տաճիկ պաշտոնյաներին և նրանք մահվան դատավճիռը փոխարինում են հայերի մասսայական ծանր աշխատանքով՝ ամուր պարսպապատել են տալիս Էրզրումը Ս. Նշան լեռան մոտ։

Էրզրումի հայությունը Կարապետ արքեպիսկոպոսի գլխավորությամբ աշխատանքի է անցնում և կարճ ժամանակամիջոցում ավարտում ծանր աշխատանքը՝ պարսպի կառուցումը։

Հայերը հանում են պատնեշի հատակագիծը և հանձնում ռուսական բանակի հրամանատար Պասկևիչին։ Այսպիսով ռուս հրամանատարներին հայտնի են դարձնում ամրոցի թույլ և դյուրամատչելի կետերը և ապահովում քաղաքի հեշտ անարգել գրավումը։

Դեռ նոր էր ավարտվել պատնեշը, երբ Կարապետ արքեպիսկոպոսը կանգնում է մի նոր անակնկալի հանդեպ։ Նա Էջմիածնի կաթողիկոսից ստանում է կոնդակ, որով

տաճկահայերին կոչ է անում օգնել ռուսներին իբրև քրիստոնյա եղբայրների։ Կոնդակը բռնվում է, սակայն Կարապետ սրբազանը մեծ փրկանք վճարելով կարողանում է ազատվել փորձանքից, իսկ հայությունը վճարում է մեծ տուգանք։

Որքան ռուսները մոտենում էին Էրզրումին, այնքան վատթարանում էր քրիստոնյաների վիճակը։ Նրանցից շատերն սպանվում են կատաղած խուժանի ձեռքով, բազմաթիվ տներ կողոպտվում։ Սարսափելի էր մանավանդ հունիսի 27-ի օրը, երբ ռուսները երևում են Էրզրումի մոտակայքում։ Այդ միջոցին մուսուլմանների հրոսակախմբերը թափառելով քաղաքի փողոցներով, պահանջում էին քրիստոնյաների արյունն ու մահը։ Բարեբախտաբար քաղաքի պատգամավորությունը ներկայացնում է հաղթողին քաղաքի բանալիները և փրկում ժողովուրդը խուժանի վրիժառությունից։

Հունիսի 27-ի գիշերը ռուսները գրավում են Էրզրումը, իսկ 1829 թվի սեպտեմբերի 2-ին տեղի է ունենում Ադրիանուպոլսի ռուս-տաճկական հաշտությունը, որի որոշմամբ Էրզրումը մնում է տաճիկներին։ Ռուսական բանակը պետք է թողներ նվաճած հողերը։ Պասկևիչը հաշտության լուրն առնելուն պես մտնում է Էրզրում՝ հայերի տրամադրությունն իմանալու։ Նա տեսնում է քրիստոնյաների հուզմունքը, որոնք աղաղակում էին միաբերան. «Գաղթում ենք, այլևս չենք կամենում մնալ օսմանցիների ձեռքի տակ»։

Կարապետ արքեպիսկոպոսը վաղուց էր ժողովրդին ներշնչել Ռուսաստան գաղթելու միտքը։ Գաղթն սկսվեց միայն 1830 թվի մայիսին։ Հայ գաղթականների բեռնասայլերը սկսեցին հոսել Թյուրքիայի դաշտերում, լեռներում ու ձորերում։ Ճանապարհին ձմեռը վրա հասավ, գաղթողների դրությունը վատթարացավ. շատերը զրկվել էին տաք հագուստից և ոտնամաններից, ոմանք էլ չունեին մինչև անգամ օրվա ապրուստի պաշար։

Անտանելի նեղությունների ու կարիքի մեջ էր ժողովուրդը։ Կարապետ արքեպիսկոպոսը ժողովրդին ներշնչում էր կորով և համբերություն. Նա ռուսական բանակից ստանում է նյութական օգնություն թշվառ գաղթականների դրությունը բարելավելու համար։ Վերջապես Կարապետ արքեպիսկոպոսի գլխավորությամբ գաղթականությունը, բաղկացած 3.000 հոգուց, բնակություն է հաստատում Ախալցխայում։

Կարապետ արքեպիսկոպոսին այցելում է ռուսաց կայսր Նիկոլայ Պավլովիչը, որը ճանապարհորդում էր Կովկասում։ Կայսրը զրույցի ժամանակ սրբազանին առաջարկում է պարգև, բայց նա հրաժարվում է կայսերական պարգևից և միայն շնորհ ու ողորմություն խնդրելով ասում. «Որպես քրիստոնյա, ես երկար ժամանակ պաշտպանում էի քրիստոնյաներին Թյուրքիայում. այժմ նրանց հանձնում եմ քրիստոնյա թագավորիդ հայրական խնամոցն ու հոգատարությանը»։

Կայսրը հեռանալով ավելացնում է. «Ա՜յ դիվանագետ»[1]։

Կարապետ արքեպիսկոպոսը Էրզրումից բերում է մեծ հարստություն և ապահովում գաղթականների դրությունը։ Նա Նոր քաղաքամասում կառուցում է մի Նոր հոյակապ եկեղեցի, որը ավարտվում է 1836 թվին։ Ինքն անձամբ օծում է եկեղեցին և անվանում Ամենափրկիչ սուրբ եկեղեցի։

Այնուհետև Հովհաննես Կարբեցի կաթողիկոսը Կարապետ արքեպիսկոպոսին նշանակում է Վրաստանի և Իմերեթի հայության առաջնորդ։ Որպես առաջնորդ նա ապրում էր Թիֆլիսում, բայց չէր մոռանում Ախալցխան։ Նա ձեռնարկում է շինարարական աշխատանքների. Ախալցխայում հիմնում է ազգային դպրոց, որ իր անունով կոչվում է Կարապետյան։ Դպրոցի ապահովության համար Ախալքալաքի ու Ծալկայի շրջաններում գնում է գյուղեր ու հողամասեր, որոնց եկամուտը հատկացնում է դպրոցին։

Կարապետ արքեպիսկոպոսը վախճանվում է 1856 թվին և թաղվում Ախալցխա քաղաքի Ամենափրկիչ եկեղեցու բակում։

1. «Նոր դար», 1903 թ., № 40.

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆԸ

(Ծննդյան 125-ամյակի առթիվ)

*Հայ ժողովուրդը մեծ երախտագիտությամբ ու սիրով նշեց Ռափայել Պատկանյանի՝ հայկական գրականության խոշորագույն դեմքերից մեկի ծննդյան 125-ամյակը։*

*Մեծ է եղել Ռափայել Պատկանյանի վաստակը հայ ժողովրդի գրական ու կուլտուրական կյանքի ասպարեզում։ Հանդես գալով անցյալ դարի 50—60-ական թվականներին Ռափայել Պատկանյանը մեկն էր այն նախաձեռնողներից, որն իր ամբողջ կյանքը նվիրեց հայ ազգի մտավոր ու կուլտուրական զարգացման գործին, այն մեծ գործին, որի հիմնադիրը եղավ մեծ լուսավորիչ-գրող Խաչատուր Աբովյանը։ Պատկանյանի անվան հետ է կապված հայկական ինքնուրույն բանաստեղծության զարգացումը։ Պատկանյանը առաջիններից մեկն էր, որ բանաստեղծության նյութ դարձրեց հասարակության շահերը, աշխատավոր ժողովրդի կյանքն ու ձգտումները, և որ կարևորն է, դարերով ճնշված ու հարստահարված, օտար բռնադատիչների տիրապետություններին ենթակա հայ ժողովրդի ազգային ինքնաճանաչման ու ազատագրության հարցը։ Այդ պատճառով էլ հայ ժողովուրդը Ռափայել Պատկանյանին մկրտեց ազգային բանաստեղծի մեծ կոչմամբ, որին նա իրավամբ արժանի է իր գրական ու հասարակական գործունեությամբ։*

*Հարուստ, բայց դժվարին կյանքի ուղի է անցել Ռափայել Պատկանյանը։ Նա ծնվել է 1830 թվի նոյեմբերի 8-ին, Նոր-Նախիջևանում, Գաբրիել քահանա Պատկանյանի ընտանիքում։ Պատկանյանի ընտանիքը հայ ազգին պարգևել է գրական ու հասարակական բազմաթիվ գործիչներ։ Բավական է հիշել, որ Ռափայել Պատկանյանի հայրը՝ Գաբրիել քահանան հանդես է եկել որպես բանաստեղծ, լրագրող ու մանկավարժ, հորեղբորորդին՝ Քերովբեն եղել է նշանավոր հայագետ՝ լեզվաբան և ազգագրագետ, պապը՝ Սերովբեն իր ժամանակին աչքի է ընկել հայրենասիրական բանաստեղծություններով և այլն։ Այնպես որ, պատանի Ռափայելի մանկական կյանքի տարիներն անցել են մտավորական, զարգացած ընտանիքում, որտեղ և հոր հսկողությամբ նա ստացել է նախնական կրթությունն ու ուսումնառությունը։ 1843 թվին Պատկանյանը գնում է Մոսկվա և ընդունվում Լազարյան ճեմարան, որտեղ դասախոսում էին ժամանակի նշանավոր հայագետներն ու գիտնականները, որոնց թվում և երիտասարդ Մկրտիչ Էմինը։ Սակայն Պատկանյանին չի վիճակվում ավարտել ճեմարանը։ Հոր հակառակորդների լարած որոգայթների պատճառով նա ստիպված է լինում վերջին դասարաններից թողնել ճեմարանը և գնալ Թիֆլիս (1849—1850 թ. թ.), որտեղ նա պարապում է ուսուցչությամբ Ներսիսյան դպրոցում և աշխատակցում է իր հոր նոր հիմնած «Արարատ» շաբաթաթերթին։ Այնտեղ էլ լույս են տեսնում Պատկանյանի բանաստեղծական առաջին փորձերը՝ բանաստեղծ Բատյուշկովի «Թըռչնակ» ոտանավորի թարգմանություն-փոխադրությունը գրաբար լեզվով և աշխարհաբար լեզվով հինգ բանաստեղծություններ, որոնցից «Մահ Զարմայր նահապետի», «Տինականի առավոտյան երգը», «Տինականի երե-*

կոյան երգս ստանավորները իրենց հայրենասիրական ու մարդասիրական բովանդակությամբ և գեղարվեստական բարձր արժեքով ճանաչելի դարձրին երիտասարդ բանաստեղծին գրական հասարակայնության։ Շուտով փակվում է «Արարատ» շաբաթաթերթը և Ռափայելը հոր հետ միասին տեղափոխվում է Նոր-Նախիջևան։ Կարճ ժամանակամիջոցից հետո Ռափայել Պատկանյանը գնում է Դորպատ, որտեղ տեղական համալսարանում սովորում է հորեղբոր որդու՝ Քերովբե Պատկանյանի հետ միասին մինչև 1852 թիվը, և կիսավարտ թողնելով համալսարանը, նյութական միջոցների պակասությունից հարկադրված վերադառնում է Մոսկվա։ 1854 թվին իր երկու ընկերների հետ միասին (Գևորգ Քանանյան և Մնացական Թիմուրյան) Պատկանյանը ստեղծում է գրական մի ընկերություն՝ Գամառ-Քաթիպա անվամբ (ընկերության անդամների անվան սկզբնատառերից[1])։ Գրական այդ ընկերությունը նպատակ է դնում ինքնուրույն և թարգմանական ստեղծագործություններով զարկ տալ նորաբողբոջ հայ նոր գրականությանն ու աշխարհիկ լեզվին։ Հետագայում այդ ընկերության անդամները հեռանում են, ընկերությունը ցրվում է և Գամառ-Քաթիպա գրական ծածկանունը կրում է Ռ. Պատկանյանը։



Ռափայել Պատկանյան

1855 թվին Պատկանյանը Մոսկվայից փոխադրվում է Պետերբուրգ՝ զինվորական-բժշկական ակադեմիա ընդունվելու նպատակով և նրան հաջողվում է այդ, բայց

1. Ռափայել Պատկանյան, Գևորգ Քանանյան, Մնացական Թիմուրյան։

մեջտ ան՛հանգիստ ու պրպտող Ռափայելը չի բավարարվում դրանով, թողնում է ավարտելու ընդհատված Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժինը, որը և ավարտում է 1860 թվին։ Համալսարանական ուսման տարիները միաժամանակ Պատկանյանի ստեղծագործական բուռն ծաղկման ու աճման տարիներն էին։ Հասարակական կյանքի հասցեում կազմակերպվում են բանաստեղծի աշխարհհայացքն ու նպատակադրումները։ Պատկանյանը լույս է ընծայում Գամառ-Քաթիպայի «Երգոց և չափաբերական աշխատություններ»-ի հինգ տետրակները (1855—1857 թ. թ.)։ Այդ տետրակներից առաջինը որպես նշանաբան իր ճակատին կրում է ռուս գրող Կարամզինի նշանավոր խոսքը՝ «Գրի այնպես, ինչպես որ խոսում ես, և խոսի այնպես, ինչպես որ գրում ես»։ «Գամառ-Քաթիպա» ընկերության այդ տետրակներում տպագրված են նաև այլ գրողների ստեղծագործություններ, օրինակ՝ այստեղ է տպագրված առաջին անգամ Գևորգ Դոդոխյանի «Մեծ հանակ» ոտանավորը, սակայն այդ տետրակների մեջ բանաստեղծության շունչ ավագը Ռափայել Պատկանյանն էր։ Այս տետրակներից մեկում (2-րդ տետրակ) տպագրված է նրա հանրահռչակ «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը, որը լայն ժողովրդականություն է ստանում ու մեծ համբավ ստեղծում բանաստեղծի անվան շուրջը։

Նույն ժամանակաշրջանում բարձր գնահատելով ազգի կուլտուրական ու լուսավորական մեծ գործը, գրական պարապմունքներին զուգահեռ Պատկանյանը զբաղվում է նաև մանկավարժական-կրթական հարցերով և հրատարակում մի շարք օգտակար ու կարևոր գրքեր (այբբենարան գրոց լեզվի ուսումնասիրության համար և մի այլ այբբենարան՝ Նշյական մեթոդով աշխարհաբարի ուսումնասիրության համար)։ Պատկանյանի հրատարակած գործերից առանձնահատուկ արժեք է ներկայացնում նրա «Ազգային երգարան»-ը (1856 թ.)։ Վարպետորեն ընտրելով ինչպես մեր հին ձեռագրերում պահպանված կամ հետագայում հրատարակված միջնադարյան տաղերը, այնպես և ժողովրդական բանահյուսության լավագույն նմուշները, Պատկանյանը մի հրաշալի ծաղկեփունջ է կազմել, որը ժամանակի կուլտուրական առաջադիմության խոշորագույն քայլերից մեկն էր։ Պատկանյանի հրատարակած գրքերից հիշատակության արժանի են նաև «Մարինոսի Սրոսկո»-ն, Եզոպոսի առակների թարգմանությունները, «Մեծին Պետրոսի պատմությունը» ինքնուրույն շարադրանքը և այլն։

Հրատարակչական գործունեության ավելի ընդարձակելու նպատակով Պատկանյանը Պետերբուրգում ձեռք է բերում հայ և ռուս տառերով մի տպարան և շուտով հիմնադրում է նաև իր տպագիր օրգանը՝ «Հյուսիս» շաբաթաթերթը, որը, սակայն, չնայած Պատկանյանի զոհողություններին ու ջանքերին, չի կարողանում պահել իր գոյությունը։

1866 թվին Պատկանյանը թողնում է Պետերբուրգը և փոխադրվում Նոր-Նախիջևան։ Այս շրջանից էլ սկսվում է նրա մանկավարժական բեղուն գործունեությունը, որին զուգակցվում է նաև գրական ու հրապարակախոսական աշխատանքը։ Ազգի կրթության ու լուսավորության գործը Պատկանյանի համար կենսական նշանակություն ուներ, և նա իր բոլոր ուժերով ու կարողություններով նվիրված էր այդ գործին։ 1867 թվին Պատկանյանը Նոր-Նախիջևանում բացում է մի «օրինակելի դպրոց», որ վարում է իր անձնական ղեկավարությամբ։ 1873 թվին նույն դպրոցը տեղափոխվում է Ռոստով։ Այս շրջանում Պատկանյանը հրավիրվում է Նոր-Նախիջևանի Բեսարաբիայի թեմական դպրոցի դասատու, բայց երկար չի մնում։ 1879 թվին Պատկանյանը կազմակերպում է «մանկական դպրոց» և մեծ սիրով նվիրվում իրեն մանուկների դաստիարակության գործին։ 1880 թվին նա նշանակվում է Նոր-Նախիջևանի 100-ամյակի հիշատակին հիմնված Արհեստական դպրոցի տեսուչ։ Այդ պաշտոնը իրեն հատուկ ջանասիրությամբ ու եռանդով նա վարում է շուրջ 12 տարի, մինչև իր մահը, որ տեղի ունեցավ 1892 թվին։

***

Ռափայել Պատկանյանի գրական ստեղծագործությունը չափազանց հարուստ և բազմակողմանի է թե՛ իր գեղարվեստական և թե՛ գաղափարական բնույթով։ Պատկանյանն օգտագործել է գրեթե գրական բոլոր ժանրերը. նա գրել է պոեմ, բանաստեղծություն, երգ, նովելներ ու պատմվածքներ, մանկական ստեղծագործություններ, վեպ, գրել է գրական լեզվով և բարբառով, փորձել է իր ուժերը նաև երգիծաբանության մեջ։ Բազմակողմանի ու հարուստ իր ստեղծագործության մեջ Պատկանյանը հետևողականորեն զարգացրել է մի մեծ գաղափար, որը եղել է նրա կյանքի ու գործունեության սևեռուն նպատակը։ Դա հայ ժողովրդի ազգային ինքնաճանաչության հարցն էր, որի հետ կապված էր նրա առօրյան ու ապագան։ Արևելյան Հայաստանի ազատագրումը թյուրքական բռնակալական լծից և 1828 թվին Ռուսաստանին միացումը պատմական մեծ առաջընթաց էր, որը հիմք դրեց հայ ժողովրդի հոգևոր ու կուլտուրական ուժերի ծաղկմանը։ Պատկանյանը գրականա-

պես գնահատվում. պատմական այդ մեծ առաջընթացը, իր ստեղծագործության մեջ նոր հարցեր բարձրացրեց. դա Արևմտյան Հայաստանի՝ սուլթանական Թյուրքիայի դաժան տիրապետության տակ հեծող աշխատավորության ազատագրության հարցն էր։ Պատկանյանը չէր սահմանափակվում միայն թյուրքական բռնակալներից հայ ժողովրդի ազատագրության հարցով. իր ստեղծագործության մեջ նա հասավ ամբողջ հայ ժողովրդի ազգային ազատագրության մեծ գաղափարին։ Հայրենասիրական այդ մեծ գաղափարը Պատկանյանը փայփայել է իր գրական ու հասարակական գործունեության ողջ ընթացքում։ Իր ստեղծագործության բազմակողմանի ձևերով Պատկանյանը ցանկացել է ազգային ինքնագիտակցության բերել ստրկության և հալածանքի տակ ճնշված իր հայրենակիցներին՝ դիմելով անցյալի փառավոր օրինակներին և իրենց հայրենիքի ազատագրության համար կռվող ժողովուրդների փորձին։ Հայրենասիրական այդ մեծ գաղափարը Պատկանյանը առաջին հերթին արտահայտել է բանաստեղծական իր բոցավառ խոսքով, ժողովրդին ոգեշնչող ու քաջալերող իր բանաստեղծական ստեղծագործության մեջ։

Պատկանյանի քնարերգության հիմնական լարը, նրա բանաստեղծական ներշնչման կենսահորդ աղբյուրը հայրենասիրության անմար զգացմունքն է։ Հայրենասիրական բովանդակությունն է պայմանավորում Պատկանյանի ստեղծագործության հասարակական բնույթը։ Բանաստեղծը իր ողջ կյանքը, իր հոգաշխարհն ու ներքին ապրումները ծառայեցնում է մի կետ նպատակի՝ թշվառ ու հալածված հայրենակիցներին ազատելու գործին։ Իր «Երկու բանաստեղծ» ոտանավորում շատ որոշակի ցույց է տալիս, որ ինքը վարդ և «գինեստաստ խնջույք» գովերգող բանաստեղծների թվին չի պատկանում, այլ այն բանաստեղծների, որոնք «հոգին անվրդով, ճակատը պայծառ», անհողդողդ կամքով դեմ են կանգնում չարին ու անիրավությանը։

Պատկանյանի հայրենասիրական քնարը երբեմն ըմբոստ ու ցասկոտ բողոքներ է հնչեցնում, երբեմն խոր թախիծով ու վշտով համակվում, բայց միշտ առույգ ու անվհատ պայքարի ու կռվի կոչում։ Հայ ժողովրդի որհասական ճակատագրից և դառն առօրյայից են բխում Պատկանյանի պոեզիայի այլորինակ շեշտերը։ Պատկանյանը ցուցադրում է դարերով օտար բռնապետությունների կրնկի տակ հալածված հայ ժողովրդի դառն անցյալը և նրա անհրապույր ներկան, ցիրուցան եղած, թյուրքական արյունարբու սուլթանական տիրապետության տակ, ֆիզիկական բնաջնջման ենթակա հայ ժողովրդի վիճակը, ինչպես և ցարական կառավարության հալածած քաղաքականության հետևանքով տնտեսական ու հասարակական անապահով կյանքի պայմանները։ Այստեղից է բխում նաև Պատկանյանի հայրենասիրական խորունկ վիշտը, որի ամենաազդեցիկ արտահայտությունը նրա հանրահայտ «Արաքսի արտասուքը» ոտանավորն է։ Պատկանյանը գեղարվեստական անմեռ պատկերներով ցույց է տվել հայ ժողովրդի դարավոր վիշտը՝ օտարի տիրապետության ենթակա ստրկական գոյությունն ու վիճակը։ Որպես Հայաստանի խորհրդանիշ հանդես է գալիս Արաքս գետը։ Բանաստեղծությունն ընթանում է հեղինակի և անձնավորված Արաքս գետի միջև զարգացող երկխոսությամբ։ Հեղինակը խորհուրդ է տալիս Արաքս գետին սրտախ ու կայտառ լինելու՝ «Մի՛ պղտորիր հատակդ, հանդարտ հոսե խայտալով»։ Մինչդեռ Արաքսը պայքարում է և մայրի նման գոռալով ճչեցնում իր դարավոր վիճակը։ Իսկ այդ սուգը հայ ժողովրդի կյանքից է բխում։ Արաքսը դառնությամբ հիշում է անցյալ փառքը.

«Այր ժամանակ, որ ես էի
Շքեղազարդ հարսի պես
Հազար ու բյուր աշխարհքով,
Փախչում էի ափերես»։

Սակայն, ժամանակներն ու հանգամանքները փոխել են ամեն ինչ.

«Ի՞նչքան մնաց են օրից,
Ո՞ր ցրված են գեղերը,
Ո՞ւր իմ շեն քաղաքից,
Ո՞ւր բերկրալի ակերը»։

Երջանկության ու հանգամանքները ատարացել են Արաքսի համար. նա ցավում է ծառայած, նաև, «անտերունչ» օտար աշխարհներում թափառող իր որդիների համար և սպասում է միշտ ազատ օրվա.

«Քանի որ իմ զավակները
Այսպես կու մընան պանդուխտ, —
Ինձ միշտ սուգով կըտեսներ,
Այս է անխախտ իմ սուրբ ուխտ...»։

Այլևս չի խոսում Արաքսը. նա հորձանք տվավ և

«Օղակ-օղակ օձի պես
Անցավ սարաց մեջերին»։

Բնության այլաբանության և հատկապես Արաքս գետի գեղարվեստական շնչավորման, անձնավորման շնորհիվ բանաստեղծն ստեղծել է անմոռանալի պատկերներ։

Սակայն ազգային այդ վիշտն ու դառնությունը երբեք չի մթագնում բանաստեղծի գիտակցությունը և հուսահատության տեղիք չի տալիս։ Պատկանյանը իր հոգու խորքում փայփայում է հայ ժողովրդի ազգային ազատագրության մեծ հավատն ու հույսը։ Նա բողոքում է դարավոր անտարբերության, հանդուրժողության և բռնակալի լուծը անմռունչ տանելու դեմ, ժողովրդին թմրեցնող դարավոր քնի դեմ («Սրտից Հայաստանից»)։ Ժողովրդի հոգու մեջ հայրենասիրական հուրը բոցավառելու համար Պատկանյանն իր ստեղծագործությամբ ցանկանում է ազգային ինքնագիտակցության ու ազգային ինքնաճանաչության բերել ժողովրդի լայն խավերին։ Հայրենիքը սիրելու համար հարկավոր է ճանաչել նրա հերոսական անցյալը և պատմությունը։ Այդ նպատակով Պատկանյանը ստեղծագործության նյութ է դարձնում նույնիսկ պատմական հեռավոր անցյալի հերոսական դրվագները։ Այդպիսին է «Զարմայր Նահապետի մահը» պոեմը, որտեղ նկարագրվում են Տրոյական պատերազմի դաշտում ընկած վիրավոր հայազգի քաջ զորապետ Զարմայր Նահապետի հայրենաբաղձական ապրումներն ու զգացմունքները։ «Քաջն Վարդան Մամիկոնյանի մահը» ընդարձակ չափածո վիպասանության մեջ Պատկանյանը ընթերցողին փոխադրում է 5-րդ դարը։ Հետևելով իրեն նախորդող հայ բանաստեղծների օրինակին, մասնավորապես հայրենախոս Նահապետի՝ Ղ. Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» հիասքանչ պոեմին, Պատկանյանը իր վիպասանության նյութ է դարձրել հայ ժողովրդի հերոսական պայքարը պարսկական ասպատակիչների դեմ, քաջ զորավար և սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ։ Այս վիպասանության մեջ տեղ գտած Վարդանի երգը լայն ժողովրդականություն է վայելում։ Դա փնդարվեստորեն ընդհանրացված բողոքն է ազգային դարավոր ռռնության ու հալածանքի դեմ և անհողդողդ կամքը, դիմագրավելու թշնամուն։ Ներկայացնելով հայերի վիճակը բռնավորների լծի տակ և բողոքով ու ցասումով անընդհատ կրկնելով «Հիմի՞ էլ լռենք», բանաստեղծը այդ նշանավոր երգը վերջացնում է այսպիսի մարտաշունչ տրամադրությամբ.

> «Ո՞վ լռել մունջը, անզգամայույծը,
> Կամ՝ որոց քաղցր է թըշնամու լուծը.
> Բայց մենք, որ ունենք հոգի և սիրտ քաջ,
> Ե՛կ անվախ ելնենք թըշնամու առաջ,
> Թողնե մեր փառքը մահով ետ խըլենք—
> Ու այնպես լըռենք».

Անցյալի հեռավոր պերպերին արձագանքելով Պատկանյանը այն շաղկապում է ներկայի հետ։ «Վարդանի երգը» որքանով որ արտահայտում է 5-րդ դարի հայերի ազատագրական պայքարի կամքը, նույնքան և հավասարապես մարմնավորում է Պատկանյանի ապրած ժամանակաշրջանի ընդհանուր ոգին։

Երգելով ու գովաբանելով անցյալի փառավոր դրվագները ու հերոսական դեմքերին Պատկանյանը կենդանի սարկազմով խարազանում է ժամանակակից իր սերնդի այն խավերին, որոնք սնոտիամոլության ախտով վարակված, արհամարհում են ազգային ավանդներն ու ժողովրդի շահերի պաշտպանությունը («Մայրաքաղաքում կրթված հայ երիտասարդ», «Մայրաքաղաքում կրթված հայ աղջիկ»)։ Այդ սերնդի համար կարևորը անձնասիրական նեղ ձգտումներն ու մանր շահամոլական հաշիվներն են, զուրկ հասարակական բարձր գաղափարներից ու նպատակից։ «Հայ և հայություն» ծրագրային բանաստեղծության մեջ Պատկանյանը առաջ է քաշում այն հարցը, թե ո՞վ է հայը և ինչպե՞ս պետք է ըմբռնել հայությունը։ Բանաստեղծը հայ լինելը կամ հայության զգացմունքը չի տեսնում ոչ ազգանվան վերջավորության մեջ և ոչ էլ ազգային ծեսերն ու սովորությունները կուրորեն պահպանելու մեջ։ «Չէ, սիրելիս, ազգությունը չէ արտաքին արարմունքը»,— գոչում է բանաստեղծը և գտնում, որ «Հայ ծնելըդ անգամ չի տալ քեզ հայության իրավունք».

> «Թե դու հայ ես՝ հայությունդ պիտի
> հարգես անպատճառ,
> Հայաստանը պիտի լինի հույս աստղ
> մեզ համար.
> Օտարինը դու մի՛ ատիլ, մի՛ էլ սիրիլ
> կուրորեն,
> Բայց դու հայի օգուտները միշտ վե՛ր
> դասե ամենեն»։

Ճշմարիտ ազգասերը, իսկական հայը, բանաստեղծի պատկերմամբ, պետք է կյանքը չխնայի ազգի համար, պետք է ունենա կամք ու կորով կռվելու թշնամու դեմ հանուն ազգի շահերի։ Դրա համար էլ բանաստեղծը կոչ է անում քաջասիրտ լինել ազգային պատմությանը, ամեն կերպ նպաստել ժողովրդի հոգևոր ու մտավոր բարգավաճմանը։ Մի այլ բանաստեղծության մեջ («Օտար օրիորդ և հայ պատանի») Պատկանյանը փառաբանում է ճշմարիտ ազգասերին՝ հայ պատանուն, որի հայրենասիրական զգացմունքները սեր ու համակրանք են ծնում անգամ օտար օրիորդի սրտում։

Պատկանյանն իր բանաստեղծություններում մեջ չի սահմանափակվում լոկ ազգասիրական կոչերով ու հրավերներով. Նա պատկե-

րում է ազգի ազատագրության համար ակտիվ պայքարի անհրաժեշտությունը, «գերության մեջ գտնվող եղբորը» անհապաղ օգնության հասնելու անհրաժեշտությունը։ «Թորոսցի երգ գյուղական այրի կնոջ» և «Ազատամար երգը» բանաստեղծությունների մեջ վրշտացած մայրը վրիժառության արդար զգացմունքով է դաստիարակում որդուն՝ դաժան ու նենգ թշնամու դեմ կռվելու և բռնության մեջ գտնվող հայ եղբայրներին ազատագրելու համար։

Պատկանյանի հայրենասիրական ոտանավորների անմիջական շարժառիթը արևմտահայ հատվածի անելանելի ու օրհասական վիճակն էր։ Թյուրքական բռնակալությունը տնտեսական ու մտավոր ահավոր ճնշում էր գործադրում հայ ժողովրդի տառապյալ այդ հատվածի նկատմամբ։ Եվ ահա, երբ բռնկվում է 1877 թվի ռուս-տաճկական պատերազմը և բալկանյան ժողովուրդները թոթափում են թյուրքական բռնակալության լուծը, Պատկանյանը ստեղծագործական նոր ներշնչում ու ավյուն է ստանում։ 14 տարվա լռությունից հետո բանաստեղծը նորից զարկում է ազգային-հայրենասիրական լարերին և ոգեշունչ նոր երգեր հնչեցնում։ Երգերի այդ շարքը կոչվում է «Ազատ երգեր»։ Խանդավառված տաճկահայերի ազատագրության մեծ հույսով ու հավատով, բանաստեղծն իր երգերում ազգային միասնության ու համախմբվածության է կոչում արևմտահայ ճնշված ժողովրդին, կրակոտ խոսքերով անվեհեր պաշտպան կանգնելով նրանց մարդկային իրավունքներին և անխնա մտրակելով ու դատափետելով թյուրքական չարագործներին ու ճնշիչներին («Վանեցոց աղոթքը», «Վանեցոց հայր մերը», «Վանեցի մոր երգը», «Վաբիր մշեցին», «Տաճկահայերի հառաչանքը», «Տաճկահայերի օրհնաս», «Կարինի կոտորածը» և այլն)։

Պատկանյանը որպես ազատագրության միջոց իր երգերում առաջ է քաշում ինքնապաշտպանությունը և ակտիվ պայքարը, նա բացեիբաց զենքի է կոչում ճնշված ու հալածված աշխատավորներին։ Վանեցի գեղջուկի անունով («Վանեցի գեղջուկի տաղը») Պատկանյանը կոչ է անում.

«Բա՛վ է, գութան, մեր տանջանքը,
Համբերությունն վերջ ունի.
Դուն տեսա՞ր, որ մեր դուշմանը ամոթ,
խիղճ ու գութ չունի։
Արի՛ փշրեմ ես քու խոփը, տանք
դարբինին կռելու,
Սրենք-կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի
դեմ կռվելու։»

Մի այլ բանաստեղծության մեջ («Մշեցու հեկեկանքը»), բանաստեղծը ազատագրության ու ապահով կյանքի ուղին տեսնում է ակտիվ ինքնապաշտպանության մեջ.

«Ո՞ւր է, դու գիտե՞ս, բախտըդ ու
փառքըդ
Ու ազատ կյանքըդ։— Ի ծայր քո
սուրին...»

Ականատես լինելով, թե ինչպես արևմտահայերի ազատագրության հույսերն ի դերև են ելնում, Պատկանյանը պարսավում է կեղծ ազգասերներին, որոնք խոսքով ոգևորում, կոչ են անում, բայց կառչած իրենց գանձերին ու փափուկ կյանքին ոչնչով չեն օգնում տառապյալ եղբայրներին («Հայերուս թուքը», «Ազգասեր» և այլն)։

Պատկանյանը դիմակազերծ է անում եվրոպական դիվանագիտության կեղծիքն ու փարիսեցիությունը արևմտահայերի ազատագրության հարցում. Բեռլինի վեհաժողովի կեղծ ու նենգավոր խաղերը («Թողոք առ Եվրոպա», «Վեհաժողով» և այլն)։ Մերկացնելով եվրոպական դիվանագիտության էությունը բանաստեղծը գրում է.

«Ապերա՜խտ Եվրոպ, հիշե՛ հայերուն,
Դու շատ մի՛ խարվիլ սուրի շաչյունեն,
Արյուն ոթիլն չէ՛ առաքինություն
Եվ ո՛չ նա ազատ ոգու նշան է։

Ինչերո՞ւս էր պետք առաքինի վարք.
Ե՞ր չէղանք հայքըս սրիկա, մարդասպան.
Անշուշտ կը դասեր մեզի ազգի կարգ
Արյունածարավ գռված Եվրոպան»։

Մինչև իր կյանքի վերջը Պատկանյանը ապրում էր ազգային ամենամեծ վշտով՝ արևմտահայերի դատով, հնչեցնելով իր բողոքի ձայնը աշխարհի մի ծայրից մյուս ծայրը, հուզելով շատ հոգիներ ու սրտեր։

Բազմազան են Պատկանյանի գրական ժառանգության թեմաներն ու մոտիվները։ Ազգային-ազատագրական մոտիվներից բացի Պատկանյանի ստեղծագործության մեջ կարևոր տեղ են գրավում կարեկցանքի ու համակրանքի երգերը խեղճերի, աղքատների, տառապյալների նկատմամբ, մյուս կողմից երգիծանքն ու պարսավանքը աղաների, իշխանավորների և կեղծ ազգասերների նկատմամբ։ Ուշագրավ է այդ տեսակետից «Մշակ» ոտանավորը, որտեղ բանաստեղծը կարեկցությամբ ու գորովանքով նկարագրում է «շլինքն արևառ, քրտինքն երեսին, բեռը շալակին» Մեյդանի մեջ կանգնած հոգնաբեկ զարիր մշեցուն, նրա ապրումներն ու թախծոտ երգը՝ տուն ու տեղից զրկված, ընտանիքի կարոտն ու մերը։ Շինականի կյանքի պարզության ու համեստության նկատմամբ

ձգած բանաստեղծի համակրանքն է արտահայտված «Ճգնավորի աստվածային երգը», «Ճգնավորի երկնային երգը» ծավալուն երգերում։ Այս նույն թեմաներով են ստեղծված Պատկանյանի մի շարք արձակ երկերը՝ «Ես նշանած էի», «Տիկին և նաժիշտ» վիպակները, «Ջախու» գեղջկի պատմվածքը և այլն։

Մեծ տեղ են գրավում երգիծական ստեղծագործությունները Պատկանյանի գրական ժառանգության մեջ։ Պատկանյանի երգիծական երկերն ընդգրկված են գլխավորապես «Նոր-Նախիջևանի քնար» շարքում և արձակ շարքում։ Այդ երգիծանքն իր սուր ծայրով ուղղված է ճգճիմ ագահների ու կաշառակեր, օրինազանց պաշտոնյաների դեմ («Ատամ աղան», «Չեռքինի աղոթքը», «Թամամայ աղան», «Կոպիտօտաթեսին հայրը», «Կայֆա», «Փառասեր» վեպը և այլն), հասարակական միջավայրի ու կենցաղի հոռի կողմերը («Խաղ ու բէֆ», «Հին ու նոր ատեններ», «Փարոսիկին Ակոպը» և այլն)։ Հետաքրքրական են նաև Պատկանյանի մանկական բանաստեղծությունները, որոնք նա գրել է ուսուցողական նպատակով՝ հաշվի առնելով իր մանկավարժական աշխատանքի երկարամյա փորձը։ Պատկանյանն իր ստեղծագործության մեջ բազմաթիվ թելերով կապված է ժողովրդական բանահյուսության հետ։ Նրա գրչին են պատկանում «Քյոռ-օղլի» հերոսական վիպասանությունը, որի նյութը առնված է ժողովրդական բանավոր ավանդություններից։ Բազմաթիվ այլ ավանդություններ, զրույցներ ու լեգենդներ է օգտագործել Պատկանյանը հարմարեցնելով իր ստեղծագործական նպատակադրմանն ու ժամանակաշրջանի («Աղբյուր», «Լևոն կայսր», «Գև Մրաւ» և այլն)։

Ռ. Պատկանյանը շատ բարձր է գնահատել ռուս ժողովրդի և հայերասիրության դերը հայ հասարակական ու քաղաքական կյանքում։ Նա կարծում էր, որ սիրով գրված է հայերականի առանձին աշխատանքը՝ հասարակական զարգացման անչափ ծառայելու պատրաստակամությունը. կերտելով հայերականի բանաստեղծական կերպարը («Թոհանդա Արեգա»), բայց միևնույն ժամանակ գտավ փնտրել է նաև իրենց կոչման բարձրության վրա չկանգնած և այդ կոչումն արատավորող հայերականներին («Տերտերը»)։

Ռ. Պատկանյանն անհուն սեր է տածել Ս. Էջմիածնի նկատմամբ, որը, որ բխում է հայության կյանքում Էջմիածնի ունեցած մեծ դերի ու նշանակության գիտակցությունից։ Պատահական չէ, որ Պատկանյանն իր բանաստեղծ «Կռունկ»-ում գրել է՝

«Այանքիս մեջ մի հույս սրտի փառք ունենամ,
Սուրբ Էջմիածնում թաղվել ցանկանամ,
Սիրտակա՛ն իմ ազգ, թե Աստված սիրես,
Այս իմ մի հատիկ իղձըս կատարես»։

Պատկանյանի իղձը կատարվեց։ Ս. Էջմիածնում թաղված է նրա աճյունը, բայց այդ իղձը շատ համեստ էր։ Բանաստեղծը չէր կարող երևակայել, որ վերածնված հայ ժողովուրդը պետք է մեծարի նրա հիշատակը և բարձր գնահատի նրա ստեղծագործությունը, որպես ազգի ու ժողովրդի շահերին անձնվիրաբար ծառայելու պայծառ օրինակ։

Ժ. ՓԱՓԱԶՅԱՆ

# ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Երգել եմ քեզ, հաճախ երգել՝ որպես անուրջ, որպես երազ.
Տենչանքների ծնունդ չքնաղ, դու ոսկեսփ Եդեմ անհաս,
Անդր կայան երանության, ուր պիտի գա մի օր հոգիս
Խոնջանք փետրել, ազատ շնչել ու վերջ գտնել խոր մորմոքիս...

Այնքա՛ն, այնքա՜ն տառապել եմ ես քեզ համար, քո ցավի հետ,
Երբ ապաստեր մարդկանց գրկում զգացել եմ ես ինձ օտար,
Երբ գրկանքի քամին փչել ու տարել է ինձնից անհետ
Լույս նավատր քո զարթոնքի և իմ հույսը անմխիթար:

Կուրծք եմ տվել տառապանքի մրրիկներին աշխարհացրիվ
Ու կասկածի խավարի մեջ խարխափել եմ անօգնական,
Հաճախ ընկել, կրկին կանգնել, հաղթել, պարտվել եմ անհաշիվ,
Քե՛զ եմ երգել, քե՛զ ողբացել, քե՛զ տենչացել, ի՜մ Հայաստան:

Ու երգում եմ, նորից երգում քե՛զ, Հայրենի՛ք իմ փառակերտ.
Դու ապրում ես, կաս երկնի տակ քո մեծ սրտով միլիոնավոր.
Մեր կապն այնքա՛ն է հարազատ, այնքա՛ն ամուր, այնքա՛ն է սերտ,
Ու ես ձուլվում եմ, տե՛ս, քեզ հետ ու չեմ լինի այլևս որբ:

Սիրում եմ քեզ անհուն սիրով, ո՜վ մարմնացած երազ չքնաղ,
Եվ երգում եմ քո կյանքը նոր, ստեղծագործ ճիգդ խաղաղ,
Էլեկտրավառ խոյանքն անհաս քո կերտումին երկնասլաց,
Քո հնավանդ մշակույթի վերափթթումն աննախընթաց.

Սկանակատ ադաներից աշխատանքի խանդն առնական,
Արրկավարս աղջիկներից անկասելի եռանդը ժիր,
Խաղաղատենչ մարտիկներից հայրենապաշտ ուժն հաղթական,
Ու լուսամիտ Լերողներից ֆանֆարախույզ հանճարն անձիր:

Ու տենչում եմ միախառնել նրանց ջանքին արդասավանդ,
Ո՜չ լաց ու կոծ, ո՛չ վիշտ ու ցավ, այլ տենդագործ երգ ու եռանդ.
Կարոտավառ հոգիս պարզած լայնածածան դրոշի նման,
Ձգտում եմ քե՛զ, քե՛զ հետ ձուլվում, ի՛մ Հայրենիք, ի՛մ անման:

Պլովդիվ

Մ. ՔՈՒԼՃՅԱՆ

# ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿԻՐ

Քու կոչին, երկի՛ր, ունկնդիր եմ ես,
Թող անհագ լսեմ, լսեմ հրճվագին
Հնչյուններն անուշ ուրախ քու ձայնին
Ու կարկաչումը լեզվիդ այդ վես:

Սուրբ, վերածրնած, անուրջն երկիր,
Բուժի՛ր իմ սրտի խոցերը այս խոր,
Անմար արևից շողով լուսավոր
Այրի՛ր հոգիս հեզ ու վշտակիր:

Որ տենչամ անցնին օրերն իմ դժնի.
Ու քու առօրյան տեսնեմ ես հավետ.
Որ տենչամ մոռնալ կյանքըս դառնագետ՝
Ընկած կարոտին գիրկըդ մայրենի:

Համբերո՞ղ երկիր, ո՜հ, առե՛ք ինձ.
Ավետե՛ք դու ցող. ավետե՛ք գարուն
Թարմացած, գունատ իմ ծաղիկներուն
Ու հանգստություն հոգվույս այս անբիծ:

Քու կոչին, երկի՛ր, ունկնդիր եմ ես,
Թող անհագ լսեմ, լսեմ հրճվագին
Հնչյուններն անուշ գրավիչ քու կանչին
Ու վերադառնամ ես կարոտակեզ...





# ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

## ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ

*ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎՈԳՐԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ.*— Փետրվարի 5-ին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ Շ. Մ. Առուշանյանը Լենինի շքանշան հանձնեց բանաստեղծ Ավետիք Իսահակյանին, որը պարգևատրվել է գեղարվեստական գրականությանը մատուցած աչքի ընկնող ծառայությունների համար և ծննդյան 80-ամյակի կապակցությամբ։

Ընդունելով շքանշանը, բանաստեղծ Ավետիք Իսահակյանը ջերմագին շնորհակալություն հայտնեց բարձր պարգևի համար և հավաստիացրեց, որ իր բոլոր ուժերը, իր ամբողջ հմտությունը ի գործ կդնի սովետահայ գրականության հետագա զարգացման համար։

Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի 50-ամյակի կապակցությամբ Պատվոգիր հանձնվեց ձեռնարկության հնագույն աշխատողներ Հմայակ Դիլանյանին, Ղազար Մանուկյանին, Հակոբ Բեգոյանին, Տիրան Թումիկյանին, Արամ Սիմոնյանին, Միսակ Մնացականյանին՝ ընդամենը 40 բանվորի և ինժեներա-տեխնիկական աշխատողի։

Գերագույն Սովետի Պատվոգիր հանձնվեց նաև Ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Ա. Խարազյանին՝ ծննդյան 75-ամյակի կապակցությամբ, ինչպես նաև Կուլտուրայի մինիստրության Ռադիոինֆորմացիայի գլխավոր վարչության ժողովրդական գործիքների անսամբլի ղեկավար Ա. Մերանգուլյանին՝ կատարողական բարձր վարպետության և ժողովրդական արվեստի զարգացմանը նպաստող գեղարվեստական հայցող գործունեության համար անսամբլին «Հայկական ՍՍՌ վաստակավոր անսամբլ»-ի կոչում շնորհվելու կապակցությամբ։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ Շ. Մ. Առուշանյանը Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Պատվոգիր հանձնեց Հայէլեկտրո գործարանի ձուլող, արտադրության նորարար Արմենակ Զեյլյանին, ինչպես նաև Սպիտակի շրջսովետի գործկոմի քարտուղար Արամ Շահբազյանին և Վեդու շրջսովետի գործկոմի քարտուղար Բալյուլ Արգույանին, որոնք պարգևատրվել են երկարամյա և անբասիր աշխատանք կատարելու համար։

Պարգևատրվածները շնորհակալություն հայտնեցին իրենց աշխատանքի նկատմամբ ցուցաբերված բարձր ուշադրության համար։

Վերջում Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ Շ. Մ. Առուշանյանը ջերմորեն շնորհավորեց պարգևատրվածներին և նրանց ցանկացավ առողջություն ու աշխատանքային հետագա հաջողություններ՝ ի բարօրություն Սովետական Հայրենիքի։

*ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՆՔԸ.*— Երևանի համալսարանական թաղամասում, Գետառի ձախափնյա այգիների մեջ, Այգեստանի փողոցում վեր է բարձրացել չորս հարկանի պատկառելի մի շենք. դա Երևանի Պետական համալսարանի կենսաբանական, երկրաբանական և քիմիական ֆակուլտետների ուսումնական նոր շենքն է, որ կառուցվել է ճարտարապետ Է. Տիգրանյանի նախագծով՝ Նոյեմբերյանի շրջանի կաթնագույն ֆելզիտ քարից։

Նորակառույցն ունի 11 ակադեմիական լսարան, ավելի քան 60 սենյակ գիտական կաբինետների ու լաբորատորիաների համար, նիստերի դահլիճ։ Ուսումնական պարապմունքները նորմալ անցկացնելու համար շենքը ապահովված է բոլոր հարմարություններով։

*ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ «ՍԵՎԱՆ» ԲԱԼԵՏԸ ԵՐԵՎԱՆԻ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ.*— Սովետահայ բալետային արվեստը հարստացավ մի նոր ստեղծագործությամբ՝ «Սևան» բալետով, որի երաժշտությունը գրել է կոմպոզիտոր Գ. Եղիազարյանը, հաջողությամբ օգտագործելով ժողովրդական երգերն ու մեղեդիները։

«Սևան» բալետի լիբրետոն պատկանում է Ի. Արբատովին և Վ. Վարդանյանին, բեմադրողն է վաստակավոր արտիստ Ի. Արբատովը, բալետմեյստերը՝ վաստակավոր արտիստ Զ. Մուրադյանը, կոնսուլտանտն է ՍՍՌՄ Մեծ թատրոնի բալետմեյստեր, Ստալինյան մրցանակի լաուրեատ, պրոֆեսոր Լ. Լավրովսկին, դիրիժորը՝ վաստակավոր արտիստ Ռ. Ստեփանյանը։

Ներկայացումը բանաստեղծական շնչով ձևավորել է նկարիչ Ն. Մինասյանը, դեկորները՝ նկարիչ Ս. Տարայանը։

Դերերի կատարման վարպետությամբ, խաղի ներդաշնությամբ ու ամբողջությամբ աչքի են ընկնում արտիստներ Ա. Մինասյանը, Հ. Ներսեսյանը, Վ. Վաղարշյանը, Բ. Գրիգորյանը, Ա. Վարդանյանը և ուրիշներ։

«Անուշ» բալետը պետք է ցուցադրվի Մոսկվայում կայանալիք հայկական արվեստի և գրականության տասնօրյակում։

ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ 25-ԱՄՅԱԿԸ.— 25 տարի առաջ, 1931 թվականին, հիմնադրվեց Կիրովականի թատրոնը։

Թատրոնի 25-ամյակի առթիվ փետրվարի 11-ին Կիրովականում տեղի ունեցավ հոբելյանական հանդիսավոր երեկո։

Թատրոնի 25-ամյա գործունեության մասին զեկուցեց ռեսպուբլիկայի վաստակավոր արտիստ, թատրոնի գլխավոր ռեժիսոր Հովհաննես Կարապետյանը։

Երեկոյին ընթերցվեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը՝ թատերական արվեստի զարգացման գործում մատուցած ծառայությունների համար Կիրովականի թատրոնի մի խումբ արտիստ-արտիստուհիների ժողովրդական և վաստակավոր արտիստների պատվավոր կոչումներ շնորհելու և Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի պատվոգրերով պարգևատրելու մասին։

Հանդիսավոր երեկոյից հետո Կիրովականի թատրոնի արտիստները ներկայացրին հատվածներ Ա. Շիրվանզադեի «Չար ոգի» և Ա. Պարոնյանի «[illegible]» պիեսներից։

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԱՍՆՕՐՅԱԿԸ.— Այս տարի, ամռան ամիսներին Մոսկվայում կայանալու է Հայաստանի գրականության ու արվեստի տասնօրյակը։ Մոսկվա են գնալու գրողներ, արտիստներ, նկարիչներ և գեղարվեստական ինքնագործունեության մասնակիցներ, ավելի քան հազար մարդ։ Ի պատրաստություն տասնօրյակի, այս տարվա ստեղծագործական առաջատարին ներկայացվելու են և կինեմատոգրաֆիայի ու ճարտարապետության։ Մոսկվացիները ծանոթանալու են նաև հայկական գրքի պատմությանը։

Տասնօրյակի ավարտից հետո նրա մասնակիցները առանձին խմբեր գնալու են Լենինգրադ։ Տասնօրյակի օրերին արձակագիրների, բանաստեղծների, դրամատուրգների գործերի ընտրանիներից բացի, լույս են տեսնելու նաև «Սովետական գրականություն» ամսագիրը և «Գրական թերթ»-ը։ ՍՍՀՄ Գրողների միության քարտուղարությունը հաստատել է հայկական տասնօրյակի գրական մասի նախապատրաստման ու անցկացման հանձնաժողովը, որի նախագահն է բանաստեղծ Ն. Տիխոնովը։ Տասնօրյակի համար Մոսկվայում և Երևանում ռուսերեն հրատարակվելու են հայ գրողների ավելի քան հարյուր գիրք։ Գեղարվեստական գրականության պետական հրատարակչությունը լույս կընծայի Ա. Շիրվանզադեի «Քաոս»-ը, Հ. Հակոբյանի, Ն. Զարյանի ընտիր երկերի միհատորյակները, Ս. Խանզադյանի երկերը (երկու հատորով), Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպը, Ս. Զորյանի վիպակներն ու պատմվածքները, Հ. Շիրազի, Ա. Գրաշու, Գ. Էմինի պոեմներն ու բանաստեղծությունները։ Վ. Անանյանի, Ալազանի, Գ. Սարյանի, Գ. Էմինի ստեղծագործությունները և հայկական պատմվածքների ժողովածուն հրատարակվելու են «Սովետսկի պիսատել»-ի կողմից։ «Դրուժբա նարոդով» ամսագրի մայիսյան համարը նվիրվելու է Հայաստանի գրողների ստեղծագործություններին։

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնը տասնօրյակի օրերին Մոսկվայում ցուցադրելու է Պ. Չայկովսկու «Պիկովայա դամա» օպերայի պրեմյերան, Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ», Տ. Չուխաջյանի «Արշակ Երկրորդ» օպերաները և Գրիգոր Եղիազարյանի «Անուշ» բալետը։ Տասնօրյակին ներկայացում են տալու Հայաստանի դրամատիկական թատրոնները։ Մոսկվայի համերգային դահլիճներում, արդյունաբերական խոշոր ձեռնարկություններում և մշակութային հաստատություններում ելույթներ են ունենալու Հայֆիլհարմոնիայի կոլեկտիվները։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնելու հայկական գրքի ցուցահանդեսը, ուր ցուցադրվելու են հնագույն ձեռագրեր, առաջին տպագրական գրքերը, հայ կլասիկների հրատարակությունները։

Տասնօրյակի օրերին կայանալու է հայկական ֆիլմերի կինոֆեստիվալ։

ՓԱՅԼՈՒՆ ԵՐԳԻՉ՝ ՆՇԱՆԱՎՈՐ ԴԵՐԱՍԱՆ ՕՐԻ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԸ.— Վերջերս Թատրոնական ընկերության դահլիճում տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ ժողովրդական դերասան Օրի Բունիաթյանի ծննդյան 60-ամյակին նվիրված պատվո երեկո։

Պատվո երեկոն բաց արեց Հայկական ՍՍՌ ժողովրդական դերասանուհի Ռ. Վարդանյանը՝ բնութագրելով հոբելյարի դերասանական արվեստը։

Օրի Բունիաթյանի կյանքի և թատերական գործունեության մասին հանգամանալից զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Գ. Ջանիբեկյանը։

Հայաստանի կառավարությունը բարձր է գնահատել բազմավաստակ դերասանի ծառայությունները ազգային թատրոնի զարգացման գործում, նրան շնորհելով 1942 թվին Հայկական ՍՍՌ վաստակավոր դերասանի, իսկ 1950 թվին՝ Հայկական ՍՍՌ ժողովրդական դերասանի կոչում։

Երևանի Թատերական ընկերության կողմից հոբելյարին ողջունեց Վ. Աճեմյանը, Սունդուկյանի անվան պետական թատրոնի անունից՝ Ա. Ավետիսյանը, Հայաստանի Գրողների միության անունից՝ Հ. Սալախյանը։

Կուլտուրայի աշխատողների արհեստակցական միության կողմից Ն. Սաթյանյանը հոբելյարին հանձնեց պատվոգիր։ Ողջույնի խոսք ասաց նաև գրող Դ. Դեմիրճյանը։ Հոբելյարի անունով ստացվել էին բազմաթիվ հեռագրեր։

Օ. Քուչիկյանը ջերմ շնորհակալություն հայտնեց այն կազմակերպություններին ու անձանց, որոնք կազմակերպել էին պատվո երեկոն։

Երեկոյի վերջում տեղի ունեցավ համերգ։

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇ-ԵՐԵԿՈ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ.— Փետրվարի 23-ին Երևանի պետական համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ երեկո՝ նվիրված սովետահայ ականավոր բանաստեղծ Ե. Չարենցին։

Երեկոն բաց արեց բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Վ. Բաղյանը։ Ե. Չարենցի կյանքի և գրական ստեղծագործության մասին զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Սարգսյանը։ Նա նշեց այն ծառայությունները, որ Ե. Չարենցը մատուցել է սովետահայ գրականության զարգացմանը՝ գրավելով իր արժանավոր տեղը մեր գրականության մեջ։

Ե. Չարենցի մասին հուշեր պատմեցին բանաստեղծներ Վ. Ալազանը, Վ. Նորենցը և արձակագիր Մ. Արմենը։

Չարենցին նվիրված բանաստեղծություններով հանդես եկան համալսարանի երիտասարդ բանաստեղծները։

ԴԵՐԱՍԱՆ ԱՄՈ ԽԱՐԱԶՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ.— Լրացավ հայ թատրոնի բազմավաստակ գործիչներից մեկի՝ ժողովրդական դերասան Համազասպ (Ամո) Խարազյանի ծննդյան 75-րդ տարելիցը։
Վերջերս Գ. Սունդուկյանի անվան թատրոնում կայացավ Ամո Խարազյանին նվիրված հոբելյանական երեկո։ Հոբելյարի կյանքի ու գործունեության մասին զեկուցում կարդաց ժողովրդական արտիստ պրոֆ. Լ. Քալանթարը։

Վերջում ելույթ ունեցավ հոբելյարը։

Երեկոյի գեղարվեստական բաժնում հանդես եկավ նաև Արտաշատի շրջանային թատրոնը, որը այսուհետև կրելու է հոբելյարի անունը։

ԳՈՒՍԱՆ ՀԱՎԱՍՈՒ 60-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ.— Վերջերս Երևանի հասարակայնությունը նշեց Գուսան Հավասու ծննդյան 60-ամյակը։ Այդ նպատակով Արվեստի աշխատողների տան դահլիճն էին հավաքվել մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչները։

Երեկոն բացեց Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Շարա Տալյանը։ Բանաստեղծ Սողոմոն Տարոնցին ներկաներին ծանոթացրեց Հավասու կենսագրության հետ և հակիրճ կերպով կանգ առավ նրա ստեղծագործությունների վրա։ Աշուղ գուսանի երաժշտական առանձնահատկությունների մասին խոսեց արվեստագիտության թեկնածու Մ. Մուրադյանը։

Գուսան Հավասուն, նրա 60-ամյակի կապակցությամբ, ողջունեցին Հայաստանի Սովետական գրողների միության, կոմպոզիտորների միության, ժողովրդական ստեղծագործության տան, նկարիչների միության կենտրոնական վարչության և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները։

Ապա ընթերցվեցին հոբելյար գուսանի անունով ստացված ողջույնի հեռագրերը և մատուցվեցին թանկարժեք նվերներ։

Հավասին իր ելույթում սրտանց շնորհակալություն հայտնեց ջերմ ողջույնների և բարեկամական ցանկությունների համար։

Երեկոյի հանդիսավոր մասից հետո տեղի ունեցավ համերգ։ Գուսան Հավասու ստեղծագործություններից կատարեցին Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Ռադիոինֆորմացիայի գլխավոր վարչության ժողովրդական գործիքների պետական անսամբլը և Սայաթ-Նովայի անվան աշուղական երգի պետական անսամբլը։

Վերջում իր մի շարք ստեղծագործությունների կատարմամբ հանդես եկավ հոբելյարը։

ՆՈՐ ՑՈՒՑԱՆՄՈՒՇՆԵՐ ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ.— Աշտարակում հայ նշանավոր վիպասան Պերճ Պռոշյանի տուն-թանգարանը հիմնվել է յոթ տարի առաջ։ Տարեցտարի թանգարանը հարստանում է նոր ցուցանմուշներով։ Վերջերս թանգարանի նոր բերած նյութերի մեջ աչքի է ընկնում Գևորգ Բաշինջաղյանի «Արագած լեռը» կտավը, որ նկարիչը նվիրել է Պռոշյանին՝ նրա գործունեության քառասնամյա հոբելյանի օրերին։ Հոբելյանի առթիվ գրողին նվիրված նյութերի մեջ հետաքրքիր են նաև Ղազարոս Աղայանի անձնական գործածության իրերը։

Ցուցադրված նյութերի շարքում ուշագրավ են Գ. Սունդուկյանի անվան թատրոնի «Հացի խնդիր» բեմադրության ձևավորման էսքիզները, մակետը և գլխավոր դերակատարների լուսանկարները՝ դերերում։

# ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Նշանավոր մարդկանց կյանքը» ընդհանուր խորագրով Հայպետհրատը լույս է ընծայել մի շարք գրքեր։ Բանասիրական գիտությունների թեկնածու Արամ Ինճիկյանի գրույկը նվիրված է նշանավոր գրող ու հասարակական գործիչ Միքայել Նալբանդյանի կյանքին ու գործունեությանը։ Բանասիրական գիտությունների թեկնածու Ռուբեն Զարյանը հանրամատչելի ու հետաքրքրական ձևով պատմում է մեծ լուսավորիչ ու գրող Խ. Աբովյանի կյանքի, գործունեության ու ողբերգական վախճանի մասին։ Հայ ժողովրդի հանճարեղ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի մանկությունն ու պատանեկությունը իր գրույկում ներկայացրել է բանաստեղծի դուստրը՝ բանասիրական գիտությունների թեկնածու Նվարդ Թումանյանը։

«Աղվեսագիրք», Երևան, 1956 թ., 80 էջ։

Հայպետհրատը վերահրատարակել է միջնադարյան առակագիր Վարդան Այգեկցու հատընտիր առակները՝ «Աղվեսագիրք» խորագրով, որն իր ժամանակին կազմել, վերամշակել ու խմբագրել է հանգուցյալ գրող Ակսել Բակունցը։ Գիրքն ունի նաև առաջաբան, որը պատկանում է կազմողի գրչին։ Այդ առաջաբանում մանրամասնորեն խոսվում է միջնադարյան հայ արձակի ասպարեզում առակների ունեցած նշանակության մասին։ Աղվեսագրքի այս հրատարակությունը մասսայական է և նպատակ ունի հանրամատչելի լեզվով ընթերցող լայն խավերին ծանոթացնել միջնադարյան հայկական առակների հետ։

ԱՐԱԶԻ, «Երկերի ժողովածու», հատոր 1-ին, Երևան, 1955 թ., 367 էջ։

Հայաստանի Պետական հրատարակչությունը լույս է ընծայում արդի, սովետահայ գրականության ավագ սերնդի նշանավոր գեղարվեստագետներից մեկի՝ Մովսես Արազու «Երկերի ժողովածու»-ն երեք հատորով։ Արդեն լույս է տեսել առաջին հատորը, որն ընդգրկում է գրողի մի շարք կարևոր ստեղծագործությունները՝ պատմվածքներն ու նորավեպերը։ Առաջին անգամ Արազու երկերի մեջ է մտնում նրա «Դոն Կարապետի արշավանքը» երգիծական պատմվածքը, որը ժամանակին լույս էր տեսել «Մուրճ» հանդեսում 1912 թվին։ Այս հատորում տեղ գտած երկերը ընդգրկում են ինչպես նախահեղափոխական շրջանի կյանքը, այնպես և սովետական կյանքի առաջին շրջանը։ Նախահեղափոխական շրջանի գործերի մեջ Արազին ընդգծել է ազգային անհավասարությունն ու անարդարությունը կյանքում, հասարակության ներքին խավերի անելանելի գոյության պայմանները, ինչպես և բողոքն ու ըմբոստությունը կյանքի այդպիսի պայմանների դեմ։ Այդ տեսակետից գեղարվեստական հաջող արժեք է նրա «Ալիքը» հուզիչ նորավեպը, որը հանրահայտ է, և դարձել է դասագրքերի զարդը։ Նույն հաջող է պատկերված Արազու երկերում Սովետական իշխանության առաջին տարիները Հայաստանում՝ կոլեկտիվացումը, էլեկտրիֆիկացիան ու շինարարությունը և այլն։

Գ. ԴԵՄԻՐՃՅԱՆ, «Երկերի ժողովածու», հատոր 1-ին, Երևան, 1955 թ., 323 էջ։

Սկսել է լույս տեսնել սովետահայ արձակի և դրամատուրգիայի վարպետ Դերենիկ Դեմիրճյանի երկերի հրատարակությունը, որը բաղկացած է լինելու 6 հատորից։ Արդեն լույս է տեսել 1-ին հատորը, որը պարունակում է հեղինակի պատմվածքներն ու վիպակները։ Պատմվածքների «Անցյալի ստվերներ» շարքում պատկերված է նախահեղափոխական շրջանի կյանքը, համաշխարհային առաջին պատերազմի հետևանքով ստեղծված ծանր պայմանները հայկական գյուղում և այլն։ Այդ տեսակետից ուշագրավ են «Ավելորդը», «Ժպիտը», «Կանոնությունը», «Միայն մեկը» պատմվածքները և ուրիշները։ «Նրանց մոտիվը» խորագրով պատմվածքների շարքում Դեմիրճյանը ներկայացրել է Սովետական իշխանության առաջին տարիները Հայաստանում։ Այստեղ էլ իրենց գեղարվեստական անմիջականությամբ աչքի են ընկնում «Ընկերները», «Մերկը», «Հայաստանի Ակորը», «Թարմացածները», «Սաթոն», «Հոգը», «Արզուկը» և մի շարք այլ պատմվածքներ։ Այս հատորի մեջ են զետեղված նաև «Ռադիո» և «Նիկոլայ» վիպակները, որոնց ավելի լայն ծավալով է ներկայացված կոլեկտիվացման շրջանի կյանքը հայկական գյուղում։

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ», Երևան, 1955 թ., 121 էջ։

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել բազմավաստակ պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի նոր աշխատությունը, որը վերաբերում է միջնադարյան հայ խոշորագույն բանաստեղծ Ֆրիկի կյանքին ու գործունեությանը։ Թեև հեղինակը իր աշխատությունը վերնագրել է «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ», բայց այն ավելի լայն է ու խոր իր ընդգրկումով ու առհամաններով։ Պատմաբանական վերլուծությունից բացի, հեղինակը անդրադառնում է Ֆրիկի ստեղծագործության գաղափարական բովանդակության ու բանաստեղծական մի շարք վիճելի հարցերի, որոնք շատ են զբաղեցրել ժամանակի ընթացքում մեր գրականագետներին, պատմաբաններին ու բանասերներին։

Ֆրիկի կյանքի ու գործունեության քննության մեջ հեղինակը անդրադառնում է միջնադարյան հայ մեծ բանաստեղծի մասին գրված աշխատանքներին, հաճախ բանավեճի մեջ մտնելով մի քանի հեղինակների հետ այս կամ այն հարցի կապակցությամբ։ Իր քննական հետազոտության մեջ Ա. Հովհաննիսյանը հատկապես կանգ է առնում վերջերս Նյու-Յորքում լույս տեսած Տիրայր արքեպիսկոպոսի բազմամյա աշխատանքի վրա՝ Ֆրիկի տաղերի [illegible] և նրանց գիտական տեքստը հրատարակելու համար։ Ա. Հովհաննիսյանը մի շարք դիտողություններ է անում «Դիվան»-ին կցված ընդարձակ քննական ուսումնասիրության առթիվ, ցույց տալով անճշտություններ ու վիճելի

կետեր Ֆրիկի կենսագրության, գործունեության և ստեղծագործության քննարկման մեջ։

Հիմնվելով Ֆրիկի ստեղծագործության մեջ պահպանված վկայությունների ու փաստերի վրա և դրանք համադրելով պատմական արժանահավատ ու ստույգ աղբյուրների հետ, Ա. Հովհաննիսյանը իր հետազոտության մեջ բնութագրել է Ֆրիկի ապրած ժամանակաշրջանը, սոցիալ-քաղաքական ու տնտեսական հանգամանքները։ Այս տեսակետից հատկանշական է Ֆրիկի «Վասն Արղուն ղանին և Բուղային» տաղի մեջ պահպանված «մասաու» և «մասաուլիք» հասկացողությունների բացատրությունը։ Ա. Հովհաննիսյանը մերժում է մինչ այդ եղած բոլոր բանասերների, այդ թվում և Տիրայր արքեպիսկոպոսի, բացատրությունը «մասաու»-ի և «մասաուլիք»-ների մասին և պատմական աղբյուրների բաղդատությամբ ապացուցում, որ «մասաու»-ն ու «մասաուլիություն»-ը առևտրական միջնորդ ընկերություն է եղել մոնղոլական տիրապետության օրոք։

Իր աշխատության մեջ Ա. Հովհաննիսյանը ուղղումներ ու նոր մեկնաբանություններ է առաջարկում Ֆրիկի կենսագրության ու գրական ստեղծագործության վերաբերյալ, մասնավորապես առանձին երկերի գրության ժամանակի ճշգրտման, անձնական կյանքի ընթացքի ու վիճակի մասին։

Ա. Հովհաննիսյանը իրավամբ հակադրվում է այն բանասերներին ու գրականագետներին, որոնք նշանավոր «Գանգատ»-ը Ֆրիկի ստեղծագործությունը չեն համարում, կամ թե համարում են ժողովրդական բանահյուսության նյութ, մշակված Ֆրիկի կողմից։ Նա բազմաթիվ փաստարկներով համոզում է, որ «Գանգատ»-ը բխում է Ֆրիկի ստեղծագործության ամբողջական ոգուց և հանդիսանում է նրա բարձրակետը։

ԱՐԻՍՏՈՏԵԼ, «Պոետիկա», Երևան, 1956 թ., 252 էջ։

Հայաստանի Պետական հրատարակչությունը լույս է ընծայել հունական մեծ մտածող, համաշխարհային կուլտուրայի խոշորագույն դեմքերից մեկի՝ Արիստոտելի «Պոետիկա» աշխատությունը, որը ռուսերենից հայերեն է թարգմանել փիլիսոփայական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Արամայիս Կարապետյանը։ «Պոետիկա»-յի տեքստին կցված է նաև ընդարձակ հետազոտություն, որը պատկանում է նույնպես Արամայիս Կարապետյանի գրչին։ Թարգմանությունը, ինչպես նշվում է առաջաբանի մեջ, համեմատված է հունարեն բնագրի հետ, հունարենին գիտակ Հ. Բարթիկյանի օգնությամբ։

Արիստոտելի «Պոետիկա» աշխատության հայերեն թարգմանությունը չափազանց կարևոր ու գնահատելի երևույթ է հայ գրականության մեջ։ Այդ աշխատությունը թարգմանված է աշխարհի մի շարք ժողովուրդների լեզուներով և իր շուրջն ստեղծել է մեծաքանակ մեկնաբանություններ։ Հայերը դեռ շատ հնում թարգմանել են Արիստոտելի մյուս երկերը բնագրից, ինչպես օրին․ «Ստորոգութիւնք Արիստոտէլի», որոնցից շատերը կարևոր արժեք են ներկայացնում բնագրին հարազատ մնալու տեսակետից։ Արիստոտելի «Պոետիկա»-յի հիշյալ թարգմանությունը լրացնում է եղած բացը։

Իր ուսումնասիրության մեջ դոկտոր-պրոֆեսոր Ա. Կարապետյանը կանգ է առնում Արիստոտելի փիլիսոփայական հայացքների վրա, որոնց առնչված են նրա էսթետիկական հայացքները։ Անդրադառնալով «Պոետիկա»-յի վերլուծությանը, ուսումնասիրության հեղինակը մանրամասնությամբ քննում է դրամատիկական և էպիկական պոեզիայի մասին արտահայտած Արիստոտելի դրույթները և բազմաթիվ այն մեկնաբանությունները, որոնք հանդես են եկել դրանց շուրջը էսթետիկայի պատմության մեջ։

ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆՅԱՆ, «Պոեմներ», 1955 թ., 122 էջ։

Հայաստանի Պետական հրատարակչության լույս ընծայած Մ. Խերանյանի այս ժողովածուն պարունակում է տարբեր ժամանակներում գրած ու ավարտած հեղինակի պոեմները՝ «Մոկաց Միրզան», «Արա Գեղեցիկ և Շամիրամը», «Ասք հերոսական» և «Արագիլներ»։

«Մոկաց Միրզա» պոեմը հիմնված է ժողովրդական նույնանուն վիպերգի վրա։ Ժողովրդական վիպերգի համառոտ, բայց շատ հարուստ բովանդակությունը բանաստեղծը բացել է, նոր հունի մեջ դրել ու զարգացրել։ Խերանյանի պոեմից ընթերցողը լայն պատկերացում է ստանում Մոկսի աշխարհագրական միջավայրի ու կենցաղի մասին։ Շատ դեպքերում հաճելի տպավորություն են թողնում համապատասխան տեղերում օգտագործված ժողովրդական երգերն ու նրանց ոգով ստեղծված ինքնուրույն ընդօրինակումները։ «Արա Գեղեցիկ և Շամիրամ» հայրենասիրական պոեմն էլ հիմնված է ժողովրդական առասպելի վրա, որտեղ սակայն հեղինակը Խորենացու «Հայոց պատմության» մեջ հիշատակված առասպելի մի քանի տողի հիման վրա ստեղծել է դեմքեր ու գործողություններ, բայց որում երբեք չշեղվելով առասպելի բուն ժողովրդական ոգուց։

«Ասք հերոսական» պոեմն արդեն վերաբերում է ժամանակակից կյանքին։ Այստեղ պատկերված են Հայրենական Մեծ պատերազմի շրջանի մարտիկների խոհերն ու ապրումները։ «Արագիլներ» պոեմի նյութը վերցված է արտասահմանում ապրող հայերի կյանքից։ Այստեղ նկարագրված է, թե ինչպես Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ թյուրքական զավթիչները դատաստան տեսան անպաշտպան ու անզեն հայ աշխատավորների հետ։ Այդ կոտորածներից ազատված մի ընտանիքի պատմությունն է ընկած պոեմի առանցքում. նկարագրված է, թե ինչպես, վերջապես, տարագիր այդ ընտանիքը հանգրվան է ստանում Սովետական Հայաստանում։

Վ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Վարդանանց պատերազմը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանք»», Երևան, 1956 թ., 250 էջ։

Երևանի Պետական համալսարանի հրատարակությամբ լույս տեսած բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Նալբանդյանի «Վարդանանց պատերազմը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանք»» աշխատությունը նվիրված է սովետահայ գրականության արձակի խոշորագույն վարպետ Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի հետազոտմանն ու ուսումնասիրությանը։

Հեղինակը անդրադառնում է Վարդանանց պատմագրության պատմական հիմքերին ու աղբյուրներին։ Առաջին գլխում հեղինակը հանգամանորեն քննում է 451 թվի ապստամբության ու պատերազմի մասին հայ պատմիչների հաղորդած բոլոր տեղեկությունները, և այդ բոլորը համադրելով, մի ընդհանուր եզրակացության է գալիս Վարդանանց պատերազմի քաղաքական-տնտեսական ու հասարակական դրդապատճառների ու նպատակների մասին։ Հեղինակը առանձնապես երկար է կանգ առնում 5-րդ դարի հայ նշանավոր պատմիչ Եղիշեի պատմության վրա, որովհետև Եղիշեն է, որ առավել լիակատարությամբ ու խորությամբ է ընդգրկել 451 թվի ապստամբության հետ կապված դեպքերն ու նրանց մանրամասները։

Նախքան Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի վերլուծությանն անցնելը հեղինակը անդրադառնում է այն հարցին, թե ինչպես է արտացոլվել Վարդանանց պատերազմի թեման նախասովետական պատմագեղարվեստական գրականության մեջ։ Այստեղ նշված են առանձին ինչպես պոեզիան, այնպես և դրամատուրգիան և արձակը։

Իր աշխատության մեծագույն մասը հեղինակը նվիրել է Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպի բազմակողմանի վերլուծությանը։ Առանձնապես ցուցադրված է Դեմիրճյանի «Վարդանանք»-ը որպես հայ ժողովրդի հերոսական անցի, ժողովրդական մասսաների ակտիվության գեղարվեստական արտացոլում։ Այնուհետև հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես «Վարդանանք»-ում լույս պատկերում է տալիս նաև ժողովուրդների բարեկամության ու համերաշխության։ Ըստ առանձին վերլուծված են «Վարդանանք» պատմավեպի գեղարվեստական առանձնահատկությունները։

**ԱՆԱՀԻՏ ՍԱՀԻՆՅԱՆ, «Առավոտ», Երևան 1955 թ., 487 էջ։**

Հայաստանի Պետական հրատարակչությունը լույս է ընծայել լենինյան արձակագիր Ա. Սահինյանի «Առավոտ» վեպի 1-ին գիրքը։ Այս վեպի վրա Սահինյանն աշխատել է երկար տարիներ։ Այդ նպատակով նա մի ամբողջ եղել է շինարարների մոտ, ծանոթացել նրանց կյանքին ու կենցաղին։ Իր այս վեպի կենտրոնում հեղինակը դրել է գյուղի և առողջանալու հարցը։ Վեպի առաջին գիրքը պատկերում է նախապատերազմյան հայ գյուղի կյանքը, ժամանակակից շրջապատում գյուղի ներքին առօրյան ու տնտեսական ձևեր վճիռը։ Ընթերցողի առաջ պատկերվում է հայ ժողովրդի հայ գերդաստանի իր հոգեկան ու վշտերով։ Ներկայացված է ժամանակի կյանքը, ներքին կենցաղը, առանձնահատկությունը, արդյունքը, կոլխոզների ու երկաթուղային գծերի համար և այլն։ Այնուհետև հեղինակը վեպի գլխավոր հերոսին գյուղական միջավայրից տեղափոխում է քաղաք, երբ կյանքն ավելի է զարգանում է նշանավոր մարդ։ Վերջինս շատ պատասխան գործ է կատարում իր հայրենակիցների համար, համառորեն առաջնորդում նրանց իր

վերջում հեղինակը ներկայացնում է նաև խմբերգային տեսական ասույթն պատերազմից առաջ փոխառական ների ձևեր վճիռը։

**ՌԱԲԻՆԴՐԱՆԱԹ ՏԱԳՈՐ, «ՊԱՐՏԻԶՊԱՆԸ», ԹԵՀՐԱՆ**

Հայաստանի պետական հրատարակչությունը վերահրատարակել է հնդիկ հռչակավոր բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ և հրապարակախոս Ռաբինդրանաթ Տագորի «Պարտիզպանը» պոեմների ժողովածուի հայերեն թարգմանությունը։

«Պարտիզպանը» պոեմների ժողովածուն անգլերենից հայերեն է թարգմանել Համլիկ Թումանյանը։ Այդ թարգմանությունն առաջին անգամ լույս է տեսել 1922 թվին Վիեննայում։ «Պարտիզպանը» ունեցել է նաև մի այլ թարգմանություն, որը լույս է տեսել 1910 թվին Թեհրանում։ Տագորի ստեղծագործությանը քաջ ծանոթ է եղել հայ ընթերցող հասարակությունը հայերեն հրատարակված նրա պատմվածքներով և առանձին հոդվածներով։

Տագորի ստեղծագործությունը համակված է մարդասիրության, ժողովրդայնության ու խաղաղասիրության վեհ գաղափարներով, որոնք արտահայտվել են խոստովանական խոր ու ձևային պատկերներով, գեղարվեստական զուսպ ձևերով։ Եվս խոշոր ու նշանակալից տեղ է գրավում Տագորը համաշխարհային գրականության մեջ։ Բայց առավել մեծ է Տագորի դերն ու նշանակությունը հնդիկ ժողովրդի գրականության համար։ Տագորն սկսել է գրել շատ վաղ շրջանից, դեռ պատանի հասակից։ Առաջին պատմվածքը նա տպագրեց 13 տարեկան հասակում, որով հռչակվեց որպես Բենգալի տաղանդավոր գրող։ Ունենալով մեծ ձիրք և ընդունակություններ, Տագորը դեռ պատանի շրջանից զուգահեռել է բազմակողմանի հետաքրքրության արվեստի տարբեր բնագավառների նկատմամբ։ Նա աշխատասիրել է բանաստեղծություններ, գեղանկարչություններ, թատրոններ, երաժշտություններ։ Սկզբնական շրջանում երգել է գյուղավորապես բնության երևույթները։ Այդ շրջանի նրա ստեղծագործության վրա նկատվում է միջնադարյան բանաստեղծության խոր ազդեցությունը։ Տագորի ստեղծագործությունը ծավալվել է գրական գրեթե բոլոր ժանրերի բնագավառում։ Նա գրել է բանաստեղծություններ՝ «Առավոտյան երգեր» (1854 թ.), «Ոսկե համերաշխություն» (1895 թ.), «Պատարագ» (Գիտանջալի, 1905 թ.), «Փախստական» (1918 թ.), «Պարտիզ» (1925 թ.) և այլն։ Տագորի խոշորագույն դրամաներից հիշատակելի են «Զոհը» (1892 թ.), «Չիտրա» (1896 թ.), «Չիտրանգադա» (1892 թ.), «Ռաջա» (1902 թ.), «Փոստը» (1912 թ.) և այլն։ Տագորը գրել է նաև պատմվածքներ ու վեպեր։ Պատմվածքներից հնդկական գրականության մեջ մեծ ժողովրդականություն է վայելում «Կիչկաձությունները» խորագրով ժողովածուն, որտեղ գեղարվեստական մեծ վարպետությամբ պատկերված է բանաստեղծի մտերմությունն ու պատանեկությունը։ Վեպերից նշանավոր են՝ «Գորա» (1909 թ.), «Նավաբեկում» (1906 թ.), «Տուն և աշխարհը» (1916 թ.) և այլն։

Տագորը գրագէտ է նաև գրական-գեղարվեստական, փիլիսոփայական հարցերով և գրել մի շարք քննադատական-հրապարակախոսական հոդվածներ։ Հայտնի է Տագորի մի աշխատությունը, որը կոչվում է «Սահդհանա» (Կյանքի ստեղծագործությունը)։ Այնտեղ ամփոփված են Օքսֆորդի համալսարանում կարդացած Տագորի դասախոսությունները, որտեղ հեղինակը արծարծում է չարի, բարու, գեղեցիկի ու գեղագիտական մի շարք այլ հարցեր։ Այդ աշխատության մեջ Տագորը կյանքում ամեն ինչ համարում է Աստծու ստեղծագործություն։ Նույն գաղափարը նա զարգացնում է «Կաբիրի երգեր», «Ճիտրա» և «Գիտանջալի» կրոնական պոեմներում։

Բացի գրական ստեղծագործությունից, Տագորը հայտնի է նաև որպես հասարակական գործիչ։ Նա մի շարք ճանապարհորդություններ է կատարել աշխարհի տարբեր երկրներում, եղել է ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Չինաստանում, իսկ 1930 թվին՝ ՍՍՌՄ-ում։ Սովետական Միության մասին իր տպավորությունները Տագորն արձանագրել է «Նամակ Ռուսաստանից» գրքում։ 1912 թվին առաջին անգամ անգլերեն թարգմանվում է Տագորի «Գիտանջալի» պոեմների ժողովածուն, որի համար 1913 թվին ստանում է Նոբելյան մրցանակ։ 1914 թվին բրիտանական կառավարությունը նրան շնորհում է բարոնետի տիտղոս, բայց 1919 թվին հասարակական մեծ գործիչն ու հայրենասերը հրաժարվում է այդ տիտղոսից, ամբաստանական նամակ ուղղում հնդկական գործիչ Մոհանդաս Կարամչանդ Գանդիին, Ամրիտսարում բրիտանական զորքերի կողմից անմեղ ու անզեն հնդիկ ազատամարտիկների գնդակահարության առթիվ։

Իր կյանքի վերջում Տագորը հանդես եկավ համաշխարհային քաղաքակրթության մոլի թշնամի գերմանական ֆաշիզմի դեմ, մերկացնելով ու անարգելով նրա ցեղապաշտական և արյունարբու քաղաքականությունը։

Տագորը մեռավ 1941 թվին։ Նա մեծ ծառայություն է մատուցել բենգալյան գրականության զարգացման գործում և հանդիսացել բենգալյան գրական լեզվի հիմնադրման ու կատարելագործման ասպարեզում։ Նա շատ լավ գիտեր մայրենի բարբառները և գրականությունը հարստացնում էր ժողովրդական խոսակցական լեզվի արտահայտություններով, ամեն կերպ գրական լեզուն մաքրելով մեռած ու բարդացած հին սանսկրիտիզմի ծանրաբեռնվածությունից։ Տագորը պաշտպանում էր գրական լեզվի մաքրությունն ու պարզությունը, աշխատավորական ամենալայն խավերին հասկանալի ու մատչելի լինելու սկզբունքը։ Ահա թե ինչու Տագորի ստեղծագործությունը Հնդկաստանում մեծ ժողովրդականություն է վայելում։

Ռաբինդրանաթ Տագորի ստեղծագործության ամենաբնորոշ գիծը նրա քնարերգական գործը չունեն է, որը նկատվում է ոչ միայն նրա բանաստեղծություններում ու պոեմներում, այլ դրամաներում ու պատմվածքներում։ Տագորը Արևելքի հեքիաթային աշխարհի ֆանտաստիկ գույները ներշնչում է ռոմանս ու մեղմ երաժշտական ռիթմիկ խոսքին և ստեղծել է խոհական քնարերգության գողտրիկ նմուշներ։

Այդ տեսակետից հատկապես համաշխարհային ճանաչում ունեն «Գիտանջալի» և «Պարտիզպանը» պոեմների ժողովածուները, որոնք թարգմանված են աշխարհի շատ ժողովուրդների լեզուներով։

Տագորը իր «Պարտիզպանը» ժողովածուն կոչել է «Սիրո և կյանքի պոեմներ»։ Դրանք արձակ բանաստեղծություններ են, չունեն որոշակի գործողություն ու դեպքերի զարգացում։ Դրանք սիրո և գեղեցկության ու կյանքի բազմազան երևույթների նկատմամբ բանաստեղծի խոհերն ու խորհրդածություններն են, որոնք տոգորված են բերկրությամբ ու աչքի են ընկնում գեղարվեստական պատկերների արտակարգ շքեղությամբ։ Մեր աչքի առաջ Տագորը բացում է Հնդկաստանի հրաշագեղ բնապատկերը՝ արևելյան խորհրդավոր գիշերը, փայլատակող հյուղերն ու խրճիթները, լաստանավերը գետերի ու լճերի վրա, ծաղկաբույր պարտեզները, արևելյան շուկան, անտառի սոսափյունը։ Մենք տեսնում ենք խեղճ ու աղքատ մարդկանց, լսում շղթայակիրների թախծոտ երգերը, առավոտյան հավքերի դայլայլը, զգում ենք ցողաթաթախ լոտոսների, երփներանգ ծաղիկների ու շքեղ վարդերի բույրը, տեսնում ենք սափորներով ջրի գնացող աղջիկներին, և այլ բազմաթիվ պատկերներ ու տեսարաններ։ Տագորն այդ բոլորը ներկայացնում է հոգեկան խորունկ զգացմունքների ու հույզերի երանգներով։ Ամենուրեք նկատում ենք Տագորի սերը մարդու։

Տագորի «Պարտիզպանը» արձակ պոեմների թարգմանության դժվարին գործը վարպետորեն է կատարված Համլիկ Թումանյանի կողմից։ Թարգմանության մեջ պահպանված են ոչ միայն պոեմների բովանդակության յուրահատուկ գծերը, այլև նրանց արտահայտչական անմիջականությունն ու երաժշտական ռիթմիկ շեշտը։

Հնդիկ մեծ ժողովրդի հռչակավոր գրող Ռաբինդրանաթ Տագորի «Պարտիզպանը» պոեմների ժողովածուի հայերեն նոր հրատարակությունը մեծ սիրով և գոհունակությամբ է ընդունվել հայ ընթերցող հասարակության կողմից։

Վ. Վ.